Աջ և կարողութ̃ին և բազուկն հօր միածինն 'ի քեզ հանգուցեալ, և զա̃մ որդիս մարդկան վկայս և երկրպագուս իւր զօրացուցեալ ։ Լոյսն նկարագիր և կերպարանն հօր՝ գոյութ̃ե 'ի քեզ բնակելովն, սրբութ̃ի և արդարութ̃ի լրման աշխարհի ընձեռեալ ։ Ապա յիրաւի և արժանապէս հոգեշարժ քնարիւք զքեզ բարեհամբաւեմք ՛ով ա̃ծածին ։

Ի մարդկային զարմէ հրեշտակ երկնային ․ յեղծականաց սեռիս անմահ սերովբէ ․ 'ի հողային նիւթոյ ոսկի սոփերայ ․ 'ի ծովային բերմանց շնորհալից մարգարիտ ․ 'ի յեսսեանն բուսոյ քաղցրապտուղ ծաղիկ ․ 'ի հաւուց նախնեացն ձիր օրհնութ̃ե ․ ցօղոյն հանդարտի ամպ անձրևաձիր ․ արեւուն ծագման ակն արփիափայլ ․ մերկացելոյ այգոյն աստղ առաւօտի ․ գիշերային մ̃թոյն խօսնակ բերկրանաց ․ օրինի սուրբերին տառ ճշմարտաճառ ։ Սակս որոյ իբր զնիւթ գործօնեայ այսքաննեաց բարեաց օրհնեալ ես դու 'ի կանայս ․ նախաստեղծին մերկացելոյ փառք անկապտելի ․ վշտացելոյ անիծապարտ մօրն սփոփիչ քաւութ̃ե ․

որդւոց նոցին խռովումն խաղաղումն ձայնատու : Այլ արդ՝ ո՞ր բան բաղդատելով զանհամեմատ քո մեծութիդ լիցի կարող գերահռչակել . արարչին մայր . անհասին ծնող . անբաւին գրկարան . ամենակալին յանձանձիչ . փառազարդողին զգեցուցիչ . վերօրհնելոյն գրգիչ : Ահա յաղագս այսոցիկ ըստ անսուտ քոյ բանի յիրաւի տացուք քեզ երանի մայրդ յ͞սի :

Անխրհելի գիտմամբ տեսակ լուսալիր աչօք նկատեալ . կտակ մակագրիծ անեղծ պայմանաւ արձան հաստատեալ . սահման յարակայ մեծութեն կցորդութե . երկուց միութեն անայլայլականի կառ պատկանակիր . վեհին պատկեր կերպին կշռորդեալ . թեթեւ պարզութի հիւթին բաղկացեալ . տառ տարբերական տողին ձեւացեալ . տումար տենչալի աննախաւ դրոշմեալ . մատեան մեծութե շնորհին նկարեալ . նամակ ընտրութե բանիւք բարդեցեալ . արձան անձնական իմաստիւք զօդեալ . կնիք մատանւոյ տրամբ կերպագրեալ : Զգեստ լուսանիւթ երկնից արքային . օթոց սրբութեան անմահ բնակողին . յարկ վայելչութե անեղ շինողին · առիթ մարդկուն՟ բանի անեղին · գործի մարմնուն՟ վեհին բնութն՟ · պատճառ պատշաճից անպատկառ ճգնութե՟ց · օրինակ ուղղութն՟ անայլայլակ վրիպութն՟ · անպակաս աճելուն՟ լրման թերութն՟ · խոկուհի երկնային կենդանեաց դասուին · մասնակից շնորհընկալ հայրական գթութե՟ն · անպարտակիրն ազգակցութեան երկնից վերստին · անամանակն արգանդի ծանուցօղ ծննդեան ։

Դու զհօրն լուսոյ զորդի հարազատ 'ի ստորինս կոյս աշխարհի մայրենի կաթամբ ջամբեալ դիեցուցեր · և ո՟չ թևովք խնայական պահպանու՟բ զպարունակօղն պարփակեցեր ։ Դու զկենցաղոյս ընթացք ընդ լուսաղարդ կենացն շաւիղ ձգեցեր · և ա՟յ նմանութն՟ արարչման օդային թռչնոյ 'ի յանցաւորաց սատի փոխեցար · և 'ի մէջ դասուց հրեշտակաց ունօղ ա՟յ յայտնեալ ծանուցար ։ Դու լուսարփի ամպով առ 'ի նոցանէ պատուեալ համբարձար · և հողեղէն հաստուած 'ի քրովբէից աղի հանգուցար · և 'ի կանանց ազանցն կերպից արուսեկին տե

սա

սակաւ տեսար · և զննելի բնութե՟ մարդկային յանճառաշնորհ խորհրդ ծածկեցար · և 'ի ստեղծողէն քո և համայնից հպատակօրէն ձևով պաշտեցար · և հաստողլին ծագաց աշխարհի մայրօրինակ անուամբ ձայնեցար · և մեղուցելոյ կնոջն առաջնոյ առանց յանցանաց զաւակ գովեցար · և ա՟մ՚անբծայ ընտրութե՟ պսակ սրբութե՟ դու դաւանեցար · և իբրև զհանդարտ երինջ անարատ արարչաւանդ լծոյն մատուցար · և իբր յաւանակ կամոյ անբաւին ա՟ծութե՟ն հետևեցար · և 'ի խորոց ծովէ ծի շուշանական շաւղօք ամբարձար · և իբր 'ի գժնեայ փշոց խստութե՟նց յաշխարհիս զբազմանց ծաղկեցար · և իբր 'ի դառն արմատոց երկրի քաղցրաճաշակ պտուղ յայտնեցար · և երրորդութե՟ն անտես Թաքնութե՟ խորհրդակից սիրոյ կոչեցար · և ծածուկ հաւաքման բանին իբր լուսատու ձորձով պատեցար · և անքակ էին ա՟րութե՟ սահման սկսման վերակարգեցար · և 'ի սրբասանէլ միջոց քո ստեանց զանկէտն 'ի տաշխին ծրար Թագուցեր · և 'ի կուսական քում բարունակէ զանմահաքարն ողկոյզ հասուցեր · և միջնորդ կե նաց երկոցունց սքանչելապէս համարձակեցար . և համոզիչ 'ի խաղաղութ՟ի մրրկածուփ շարժմանց կասուցար . և խօսակից վերնոյն բարձրութե՟ անկապտելի անուամբ պատուեցար :

Արդ յայսքանս և 'ի սոյնպիսիս , և յեւ ընտրելական երգս բանահիւսից վերահռչակեալ ես վսեմական վարուց նախընթաց և յառաջաշաւիղ որք ծածին : Ո՛ զի ոչ երեւեալն 'ի քեն միածին անդրանիկ բնութեն հօր սկիզբն ասի հետեւման խաչունակ մահակիր ճգանց , այսոք երանեալդ և բարեբանեալդ գերօրինակ ցուցման տեսակի ծակրոն կարգաց ծագեցեր : Ու և զանմատոյց հուրն կիզանող անապական ծասքմամբ ծախեցաք . քև զարտաքեալն 'ի թեւս օդայինս 'ի քառընթաց կենդանիս տեսաք . քև զանկցորդն տեսականաց 'ի մարդկային կերպ նկատեցաք . քև զգոլեալ բարձօղն մեղաց իբր զգառն ճաշակ ընկալաք . քև դատելոյն 'ի չարապարծաց ոչ ոյ ճշմարտի երկրպագեցաք . քև զանծանօթն հօր ծրուի ազգակցապէս օրհնաբանեցաք . քև զմուրհակ պարտուց անխծիցն 'ի յաւազանին ջուր ընկղմեցաք . քև զան

տեսն

տեան աչաց հրեշտակաց տղայական տիօք գգուեցաք. քեւ զանսահման բանին բնութիւն ’ի հասարակածին տիպ համբուրեցաք. քեւ զադամն նոր հոգեղէն ’ի չափ հասակի առաջնոյն տեսաք. քեւ զարեգակն արդարութեան կենցաղակից մեր կցորդ տեսաք. քեւ զանժամանակ բանին էութ՟ի սկսեալ ’ի դաւթայ պատմեցաք. քեւ զանհամեմատն մ՟դոյ պատկերի մեզ նմանատիպ գործով գրեցաք ։ Որդ՝ այսքան եաց սրբազնական մատանցս ձաւեցելոց դու միայնակ սկզբն, անարատ կուսից՝ նորատակ կրօնից՝ տիրամայր ս՟բ ա՟ծածին ։ Քանզի թէ չէր ’ի քէն առեալ ուղէշն երկնային, ո՛չ էր պտղաբերեալ զանձաշակելին ’ի շրթանցն մեր հաղորդութ՟ի. և թէ չէր երեւեալ հօրն արդարութ՟ի ’ի յերկնից, չեւ էր սկսեալ ճշմարտութ՟ին ’ի յերկրէ. և թէ չէր յղացեալ յանփորձական քում արգանդի, ո՛չ էր մարմնացեալ. և թէ չէր յայտնեալ մերով բնութ՟բս, ո՛չ էր շօշափեալ և ըմբռնեալ անհասան իմաստից. և թէ չէր կրեալ ’ի գիրկ բարձողաց հողեղէն բազկաց, ո՛չ էր ծանուցեալ. և թէ չէր համբուրեալ երկ

րաբաւոր շրթամբք , ոչ էր ճառեցեալ · և թէ չէր հետևեալ 'ի մարդկան ընթացս , ոչ էր քարոզել էակն 'ի յէէկս · և թէ չէր թափեալ իւղն անապական 'ի վեհագունէն , ոչ էր զմեզ օծեալ · և թէ չէր խառնեալ զմերս ը̃ իւրումն , ոչ էր մկրտել · և թէ չէր խրախուսել մարդն 'ի յերկնայնումն , ոչ ևս էր որ բէլ · և թէ չէր խոնարհեալ բարձրն 'ի յընտանի փառացն , ոչ էր վերացեալ 'ի ստորնայնոցս աւեցեալն : Բայց մարմնացաւ , որ̃քն մարդացաւ · նոյն և յայտնեցաւ , ըստ որում ծանուցաւ · աւետարանեցաւ , ուստի փառաւորեցաւ · իսկ մաքրեցաւ , ոպ̃ երգեցաւ · իսկ մկրտեցաւ , որ և վկայեցաւ · նոյն իսկ պատմեցաւ , ոպ̃ ճառեցաւ · իսկ տնանկացաւ , որով ճոխացաւ · իսկ հնազանդեցաւ , որով պաշտեցաւ · իսկ երկրպագեցաւ , որով խոցեցաւ · իսկ կենդանացաւ , որով թաղեցաւ · իսկ պատուեցաւ , որով պատժեցաւ · իսկ ամաչեցոյց , որով պատկառեաց · իսկ բերկրեցոյց , որով տրտմեցաւ · իսկ զգեցոյց , որով մերկացաւ · իսկ ողջացոյց , որով բևեռեցաւ · իսկ կանգնեցաւ , որով վտանգեցաւ · և սլացաւ ոպ̃ վերնային · թռեաւ ոպ̃ հոգեղէն ·

ծած_

ծածկեցաւ ո՜չ զանքնին ․ փախեաւ ո՜չ զանհասս ․ ’ի յամպս երկնից եդ զգնացս ․ դալեցու ո՜չ միածնին ․ բոստրաքուղն կայ լակօքներիկեաւ ․ անկեց վիրայն խոյալ հարցաքննեցաւ ․ ’ի վեհից անմահ հրեշտակայն հաւատացաւ ․ յաղթող մրցմամն և մարտի փառաւորեցաւ ․ չաստաւոր արդ․ամ իկշխու յա՟մ ազգաց վերասլաստ մեցաւ ։ Քանզի ’ի քէն հիմնադրեաց զսկիզբն մարդեղութեան անեղն իսկութի ․ և յընտրեալ անպատում չնորհէ զայս ա՟մ անփոխանորդելի պարգևակին ձիրս ընկալաք ։ Ու քե ա՟մ այս պատրաստութի բարեբաստութե բազմերանեան յուսոյ հրձուանաց մեզ հանդերձեցաւ ։ Ու զա՟մ փառս երանական լուսոյ նշուլից վերնոց և ներքնոց ծածուկ խորհրդոց բազմադիմեալ պայծառ յօրինման նոր արարածոց անճառ շինուածոյ ս՟բ եկեղեցւոյ , ’ի քէն ծնիցելոյ կերպիս մերոյ և բարձրացելոյ աննմանն յոր ծնկովք կրկնելովք մատուցանեմք ։ Ուստի և քեզ բերկրեցելոյդ զամլորակին օրհնաբանութի բանիս երկրորդեմք ։

Օրհնեալ ես դու ’ի կանայս , գլուխ նոցին պանծանաց , և պայծառ պսակ ․

Պսակ կուսութե՟ մաքուր հարսնութե՟. պսակ ընտրութեան անփորձ գովութեան. պսակ անեղծութե՟ լուսոյ նմանութե՟. պսակ շնորհանորոգ էին ծնելութե՟. պսակ երանական բանին հօր մայրութե՟. պսակ ո՟ք պանծանաց կենացն բարձրութեան. պսակ պայծառափառ վարուց իմաստութե՟. պսակ տիրապատուաստ երկնահանճարն գիտութեան. պսակ պիտանական եկեղեցւոյ գեղեցկութե՟. պսակ պաշտելութե՟ սիօնի նորոյ զարդարման. պսակ յոգնանկար յարփից եօթանց փայլատակման. պսակ առաջնորդական վերնոյն ազգակցութե՟. պսակ անբծութե՟ շաւղացն արդարութեան։

Արդ՝ ամենեցուն վերակարգելոց թուոյս այսոցիկ բնակարան բաղձալի, և երանելի, և ն՟ունարան ընտրական կամաց անբաւին՝ զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդքս ստորաստեղծակինն ադամայ. որոց անհամար և անթիւ ազանց ամբոխական և պահպանական պարիսպ կառուցար։ Քանզի յարժանահայց և յամենազօր քոյ բարեխօսութ՟իդ միշտ ապաւինեալ. մնամք՚ի հաստատութեան, խնամեալք և հանդուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութ̃ե ամուր պատուարի սբ̃ ա̃ծածնիդ ։ Պատուար աճնայօրէն 'ի շանաշան մաքրազարդ ականց յարմարեալ ․ պատուար հրապարփակ անմատոյց ընդդէմ մոլացն հինից ․ պատուար բոցանշոյլ անհուպ և անհաս մատուցման դժնեայ դժրողաց ․ պատուար ամենահրաշ ըստ եզեկիելի, որ այլխեալ ըզմուտ քո՝ ճշգրտապատում գրեաց ․ պատուար շրջապարիսպ ա̃ դաւթայ, որոյ հիմն անշարժութեան 'ի բարձրելոյն հաստատեցաւ ․ պատուար ամրակառոյց քաղաքին վերնոյ ըստ պօղոսի, որում զհանուրս բնակիչս արարեր ։ Քանզի զա̃ծ ծնար 'ի մարմնի, և զծնունդս մարմնաւոր սիոնի որդիս արարեր վերնումն հոգևորի ։ Որոյ աղագաւ օրհնեցաւ արդարդ քոյ կուսութ̃ի 'ի շրթունս նոցին, և խոստովանեցար յամենեցունց մարմնարան և տաճար հօր խնկակցին ։ Որով արդարապ̃ 'ի քեզ ընծայեալ զբան պատմողին, եղեր մեր օգնական և տուն ապաւինի յուղխից հեղեղաց յաւուր անձկութ̃ե ․ մաքրութ̃ի կուսից և սկզբնաշաւիղ դասուց երջանկաց ․ մայր հիմնադրութ̃ե

թե՟ հաստատութեան եկեղեցւոյ, և ծնօղ անարատ բանին ա՟յ ։ Օ քեզ յաւէտ օրհնութեամբ միշտ պանծեմք 'ի նուիրեալ տեղիս սրբութե՟ քում տաճարի, և 'ի թեւս պահպանութե՟ լայնատարած քումդ մաղթանաց ապաւինելով, զձեռս մեր 'ի սմա տարածեմք· և աներկբայ յուսով հաւատամք ապրիլ ։ Արդ աղաչեմք ընկալ զերգաբան օրհնութ՟ի մերում լեզուի· և հաճեալ տացես մ՟զ զձիրս շնորհաց սիովնի և բեթղեհեմի ։ Ուստի արժանացուք ընդունել մասն փրկութե՟ յաւուր գալստեան մեծի յայտնութե՟ փառաց անեղծի, փրկչին անմահի, քումդ միածնի, միոյն ա՟յ, տ՟ն յի ։ Եւ երբ ըզպատճառ սկզբնաշաւիղ այսքանեաց բարեաց 'ի սոյն կամարի գեղապճնելոյ զքեզ պատուեսցուք՝ անժամանակ
էին բարձրացեալ ծնօղ ։

Սորին վերադիրն 'ի վե՟ր գրոց անուանն խորոյ ։

Գերադանց չափոյ կշռման երկրային բնութե՟ և քրովբէականն նախադասութե՟ եղե՟լ վեհական, սրբուհի պայծառ առագաստ փրկչին քե՟· և նորուն իսկ տետաւորիչ վ̃ն մեր. ծունր կրկնեսցի արժանապատիւ քումդ պատկերի. հայցեմ վ̃ն մեր առ ծնեալդ 'ի քէն ա̃ծ 'ի մարմնի :

Որպէս յոգնաթիւ մասանց բերկրութ̃ի. ազգաց և ազանց արմատդ օրհնութեան. 'ի ծագմանէ փառացն երկնայնոյ անստուեր նշոյլ տարփալի շողեալ 'ի ստորինս տեղի. անորիշ հրամամբ մերձաւոր անմատոյց լուսոյ՝ անճառ խոստմամբ ապառնեայն յուսոյ՝ 'ի մահու պարտեայն զերծո՛ զառ քեզ ապաստան ծառայքս քումդ որդւոյ :

Դ յերկրաւոր նիւթոյ մարմնաւոր վարուցն՝ երկնայնոյն կրօնից եղեր հպաւոր. մարիամ՝ առիթ տեսութե̃ն նոցին զանզննելին որդւոյն կերպարան : Աւետի տեսին զանկէտն սկսեալ, և երանեցին զարմատդ և զպատճառ. յորմէ և մեք հայցեմք զնորոգու̃ն կենաց. և պաշտպան զտիրամօրդ ձեռնտուութ̃ի :

Գլխաւորեալ այսօր 'ի քեզ զիմանալին փարթամ մեծութ̃ի. որ սլացեալ հաներ 'ի բարձունս երկնից. իբր անընդունակ ապականուե̃ և մահու լուծման՝ մարմնին. յորմէ պատկառեաց ամօթով սպարտիքն մահու. և ցուցաք բնակիչ արժանապատուիւ՜ կենդանեաց երկրին՝ ը՟նդ կենակից որդ տիրամայր․ արգահատեա՛ միշտ զողորմութ՟ն որոց պանդխտիմք 'ի վիհս ներքին ։

Ունօղ հրճուանաց անթիւ՜ խրախուսութ՟ց ա՟ծային անկէտն խոստմանց 'ի բուրաստանս անդաստանաց տիրակին տնկոյն․ որոյ ստեղունք շառաւիղայն երկրային հնարից գերազանց․ անդր մուծցես զքո դաւանօղքս ով տիրուհի մայրդ յ՟ի ։

Իստեմք 'ի քէն աղերսիւ՜ բանի, որ ես քաղցրալուր գրաւ աշխարհի․ միայն երանեալ և բարեբանեալ, հօրն հաճուք՟ հովանաւորեալ․ որդւոյն ծնօղ․ հոգւոյն վերընդունօղ․ երրորդութե՟ փառացն տարօղ․ վերանկարեա՛ զառ յաւազանէն անախտ արգանդէ զկարդացելս անուն 'ի գիր մատենի վերնում դպրոցիդ ։ Եւ զերգագրուի՟ սակաւամասնեայ այսր գովեստի արձան հաստատեա՛ միշտ անկործան սրբոյդ առաջի․ ընծայեն մարմնոյս զմրաշարս գիծ, և զգայական ընչոյս զպատկեր բանիս ։

Ոի իբր 'ի գոյից երկուց զուգելոց 'ի մի խառնութ՟ի միոյ կենդանւոյ․ միշտ փառաւորեսցիս դու սուրբն օրհնուէ՟, ո՟ր անեղծ պաշտօնէիցդ օրհնաբանութ՟բ : Որպէս 'ի ձեռն զօրեղ քոյին հայցուածոյ լիցի մեզ անդատապարտ համարձակութ՟ի յատենի մեծ և ահաւոր ս՟բ դատաւորին : Նաև գտցուք արժանի անբիծ վարուք, և ուղիղ դաւանութ՟բ՝ հաւատոյն հաստատութ՟բ հանդիպիլ և անդանօր ընծայիւք բանից քումէ երանութեան . փառաւորել ընդ քեզ և ընդ քոյն յանդիման դիմաց պաշտելի և պսակելի քում՝ մ՟ծափայլ և լուսանշոյլ մեծ պայծառութ՟եդ զէու՟ն անքակ և անքննելի ս՟բ երրորդութ՟ե 'ի միու՟մ տ՟րութեան և արարչութ՟ե : Որում վայելչական պատիւ . և գովեստ անդադար երգոց այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից . ամէն .



Էին հանապազորդեալք հանդերձ
մարեմաւ մարբ̃ն յ̃սի։

Նորին հաճողի տաղեաւ, Սան ներբողի համօրէն սբ̅ց առաքելոց · (որոյ յիշատակ է 'ի Հինգշաբաթի :)

Արդ՝ այսու բարձրաւանձական բարեբաստութե̃ 'ի բխելուց բերկրալիր բանից հրաշանշան և հաճոյական խորին հանդիսիւ́ անտոխուր հրճուանօք տօնեցուք ։ Օի թէպէտ ննջեցիք կափուցմամբ երկրատեղծ աչաց, ընծայեալ ամենունակ և յոքնըմբռնող նախածին ծոցոյ մօրն որովայնի հողածին զարմի, այլ կենսատուր բարբառոյ սերման ձերոյ բոյս արդ եւս ցուցանի յանհատ և յանհատեմատ թիւս ամբարբեալ արդիւնատրութե̃ ։ Կենդանիք 'ի մահու . անմահք 'ի մարմնի . անեղծք 'ի ստեղծման . մշտնջենաւորք 'ի սկսման . յ̃ի ք̃ի՝ և հոգւոյ՝ և հօր նր̃ առաքեալք ։ Կաճառակիցք կրօնից փրկչին . զուգա շաւիղք պարագրողին. հանգունատիպք երևելոյն. հօրն ընդ միածնին փառք և աշակերտք. անսկիզբն և անժամանակ էութեն ազգ և ընտանիք. ո՜վ ոմն յումեմնէ առէլ՝ ոմանց իմաստասիրեաց։ Արժանպտուղ փառօք առաքէլք ՚ի ծածուկ ծոցոյ ստորիջելոյն. և ՚ի ձեռն ձեռնադրութե ձերոյ մարգարէք ագաբոս և տիմոթէոս. ՚ի ձէնջ աւետարանիչք՝ անուանեալն պատուար բարձու վիմին աշակերտ սրբասնունդ պատանին մարկոս. անուանակիրն յարութե պատմօղն համբարձման անտիոքացի համբաւն ղուկաս, բժշկապետն անձանց՝ քան թէ մարմնոց. ձեօք և ՚ի ձէնջ հովիւք և վրդպետք։ Սրթնածածուկ բարբառոց լեզուք. ստարացեղ ձայնից յայտնուիք. աներևութից բացերևմունք։ Ընդարձակեալք ՚ի զօրութիւն, և առատացեալք յայցելութիւն. ՚ի հանճար, ՚ի պատասխանիս, ՚ի համարձակութիւն, ՚ի պատշաճաւոր դարձուածս բանից. յաջողուածս երկաքանչիւրոց. եղծման՝ ոչ սափիրայն, և նորոգութե՝ ոչ տաբիթայն։ Անուշութե բուրմունք հոտոյ. ձայնատուք վեհք անհեղ որոտման, բաներեգէս ՚ի տնէ անուն ձեր • ըն̄ այսմ զօրացեալք, և քաջացեալք• անվնաս ոտից գարշապարօք խրախուսեալք և անգայթակղելիք • նշուլիւք փայլման լուսոյ առաջնորդեալք ՚ի ճրագէն կենաց՝ ընթացից ձերոց գործարան• շնորհաշաւիղք և լուսատեսիլք • յերկրային տոհմէ աննմանք • աջողական աջով ձեռնադրեալք • նորոգմամբ նշանականք • ախտից և մահու վշտաց տխրութե՛ ՚ի հրամանէ էին յաղթականք • անպարտելիք և զօրաւորագոյնք • ըն̄ երկնային զօրուն զուգականք ։ Ո՝ւտք հետոց ձերոց ՚ի փառս յերջանիկ վայրացն սահման• հարսանեաց պարուցն կցորդ՝ ՚ի կենդանեաց կայիցն խորանի։ Ամենակալ ձեռինն օրհնեցեալք ՚ի գովեցեալ աւուրն համբարձման • խումբ համարոյ պատկանաւոր• խորհրդական թիւք երկոտ̄ան • ատենապետք դատաստանի ՚ի մօտակայի աւուր նորոգման։ Արդ՝ այսքանեօք խնկելի և նուիրելի՝ և այլևս սխրալի և զարմանալի մասամբք երանելիք, և բարեբանելիք • լուսանշոյլք, և ոչ հողանիւթք• հոգեգումարք, և ոչ մարմնապատուանդք• յաղթականք, և ոչ պարտելիք • երկնակենցաղք, և ոչ երկրածնունդք • անապականք, և ոչ մահհացուք · սրովբէամաքուրք, և ոչ երկրամեղք ։ Զի թէպէտ ստուգապէս մարդք ՚ի ստորնայնոցս, այլ հրեշտակք հաւաստապէս, բացակայք յերկրային կրից ։ Միայնում գլխոյն յո՟ր երկոտասան յօդուածք անդամոց · կենդանաբար կամաց քարոզելոյն հաճոյական յիշատակարանք · քանզի որք մարմնով են, լինել տեղի ո՟յ ոչ կարեն · և դուք ոչ էք մարմնով, այլ հոգւով · եթէ իցէք ունօղք ո՟յ հոգւոյն · և տարատրոհին աւ ՚ի միմեանց շնչաւոր մարդն և անձնաւոր · սակս հոգեպէս քան թէ մարմնաբար ընտրութեան ձերոյ կենցաղ ։ Նշանագիրք կերպատարազք, այլազան զարմի միաթի՜ շարի երկակի հընգիցն և երկուց վարողացն և յարմաքողաց երկնի և երկրի · և ամաց շարժութե՟ և հաստատութե՟, ըստ քերթողացն ձահագրուե՟ ։ Քանզի նուիրական է մն՟ ՚ի սոցունց, որպէս ոչխար կատարեալ արու · և այլ գործական, երբև զուարակ լծաձիգ արքայական կասող ցորենոյ · յըմբշամարտս մարդադատիչ երբև առիւծք հզօրք ։ Եւ այսպիսեաւ թուով յարմարեալ մինչև ՚ի կատարեալ թիւն երկոտասան ։ Եւ դրութ՟ն երկրի ձևականութ՟ե երկոտասան . և տեսակ աւուրց տու՟նջեան երկոտասան . և գլխաւոր թի՟ք անդամոց մարմնոյ երկոտասան ։ Ըստ այսմ վակասին որ քառասմանեակ՝ երկոտասան . կայլակք աղբերաց և որք արբին զայն զօրապետք երկոտասան . և վկայական արձանք գետածինք վերացեալք յորդանիսայ ծոցոյն երկոտասան . և զոր հեղիաս կառոյց նպատակ 'ի կործանեալ հիմն սեղանոյն երկոտասան . այս երկոտասան թի՟ խորհրդական սրբազան անու՟ան ձերոյ յիշատակարան՝ կոչմամբ վկայեալ վերակարգելոյդ ։

Այս և 'ի սոյն յարեալ համբարձից յիմանալեացն անհասութեան զպտղածին Ճիւղ երդոյ տառխ զպսակօղ և զնորոգօղ անու՟ան էութ՟ե ամենազօր որ երրորդութ՟են . քանզի 'ի սողոբայս երից քառադրայց յորջորջեալ կոչմամբ ծանուցեալն մեզ որութ՟ի միափառ և համապատի՟ որ անպարագիր և անվայրափակ հայր որդի հոգի 'ի մի շարդասեալ զթի՟ն պատու՟եալ և օրհնաբանեալ երիցն ազգակցաց երկոտ՟ան վերանկարել ։ Ահա և յայտնի ցանկալեք , լիք, և վեհագունաւն վկայելիք, և անճառելեաւն վերադրելիք· ընտանիք ա̃յ, և սրբոց քաղաքակիցք · շինուածք իմանալեաց անքակ տաղաւարք · արարչութեանն օթևանք, և ախորժելի բնակարանք :

Իսկ յեօթանասնիցն ճառ փոխարկեալ զդէմս բանիցս յաւէտ ըղձական և ախորժելի խորհուրդ ցուցանի · քանզի զայսքանեաց բազմագումար դասուց ընտրելոց ո՞ր բան զօրեսցէ ՚ի նիւթ ներբողինի · վ̃ն զի յամենաս̃բն գրուն աւետարանական պատմաբանութե̃ն, մինչ զկնի մաքրակենցաղ և տիրաքարոզ ճանապարհորդութե̃ն առ առաքողն ճեպեալ հասին և յանդիմանս ն̃ն պատկերին, զու՛արթ բերկրանօք զզօրու̃թ անու՛ան կոչողին ինքեան պատմէին · զմերժում̃ն ախտից, և զհալածում̃ն այսոցն · յայն ժամ աւետարանեաց նոցա մեծագոյն յուսոյ տեսութ̃ի · խնդացէք ասէ վ̃ն գրելոյ անու՛ան ձերոյ յերկինս : Ո՞չ փափագելի մեծի և աներկևան երանութե̃ն · քանզի որ գրեաց զն̃ա ա̃ծ՝ նոյն և վկայեաց : Այսու պարգևօք անու՛անակոչեալ ժառանգք և որդիք ն̃ր արքայութե̃ն · ո՛վ ա̃ծազգեացք ա̃մ գոյի̃ կատարեալք· խնկա̃ծ շնորհիւ պատարագեալք· ապէնիաղ պարգեւօք. ըղձեալք· եօթանասնեկի երկանի լեզուաց այլասեռն ձայնից 'ի մի տեսակ զուգաշուրթն խօսակցութ՟ համահաւաքիչք· բաժանելոց յոքնակի ազգաց անսասանելի շաղկապք սիրոյ· գաւք և դաստապետք վայելչական պարուց· տիեզերաց երկրի դատաւորք· գումարք թագաժառանգք կայսերաց· ինքնակալպետութ՟ք իշխանականք· գունդք գեղեցկագեղք· նախարարք ազանց պատուելոց· եկեղեցիք ընտրելոց երկնից բնակութ՟ն· կաճառակիցք և կցորդք դասակցութ՟ցն վեհից· կոյտք կայունք և անխախտելիք անմահին փառց· կցորդք հանդիսի իմաստութեան հանճարոյ· կամք և յարձակմունք ակնարկութեան վերնոյն· շարք աստեղանիշք եկեղեցւոյ հարսնութ՟· արհեստական ձեւք պսակաց զարդու սիւնի: Եօթանասուն բոյսք արմաւենեայ 'ի նշան անուանն յաղիմայ· և միանգամայն գրելով զա̃մ 'ի սոյն կարգ բանիս պատկանագրութ՟, ընկալ անկուածոյ ձաւխս դրուատի պայծառապէս սձ̃նազարդեցից: Որ բանն ա̃ծ առ յա̃յ անժամանուկ խնկուք ծնեալ՝ միայնակ անձառն յանքննին ծոցոյ, որ և 'ի կնոջէ կուսէ մաքրելոյ՝ և յանարատէ սրբուհւոյ անդրանիկ և անհարազատ. 'ի մօրէ յատուկ, անհայրորդ կամաց հօր երկքաւորի. ա՟ծ ըստ տեսականին, և մարդ ըստ պարզութե՟ միաւորական խառնութե՟ն. ոչ սոսկ և ոչ վայրապար. այլ մեծի իրակարգութե՟ նշխար՝ զձեզ սրբազունդ դասք առաքելոց վերակոչեալ՝ ոչ ընդայուք միայն վկայէն, այլ և պատշաճականաւ թուով պանծանաց պայծառացուցեալ. կարգ և կնիք տասանց եօթանց խորհրդականաց, ըստ ժամանակաց յեղյեղուն շարժութեան դարուց. իսկ զերկուսն յեօթ անսասանիցն թիւ յարակցեալ՝ նշանակ աստանեացն և ներկայիս զերկնաւորացն և զատորնայնոյս. զմարմնոյ և զհոգւոյ. զտապանակիր տախտակացն. զերկեակ գոյութե՟ երկնից. զերկուց լուսատու աչաց, և զլուսաւորչացն երկնայնոց, զեդեմայ և զմերս եկեղեցւոյ. զհնոյն օրինաց և զնորոյս աւանդութե՟: Նա արդ՝ այսքանեաց խորհրդոց նկարադիրք և պատկերք. ոչ առաքեալք միայն, այլ և նահա-

ծն՟ ան-
եղէ այր·

հատակք · ո՛չ խոստովանօղք միայն, այլ և վկայք · ո՛չ չարչարեալք միայն, այլ և կատարեալք · ո՛չ մաքուրք միայն, այլ և մարտիրոսք · ո՛չ ընծայեալք միայն, այլ և յարգեալք · ո՛չ մատուցեալք միայն, այլ և նորոգիչք · ո՛չ պատուեալք միայն, այլ և պատարագեալք · ո՛չ մարմնաւոր միայն ծախեցեալք, այլ ինքնապէս բուրմամբ վեր նոյն ինքեալք · քանզի հոտ անոյշ քսի, և հոտ նորին հաճութեան զգովեալդ դաս իմաստունն պօղոս քարոզեաց ։ Յանկալիք և երևելիք · գովելիք և պատկառելիք · խնկելիք և պսակելիք · մնացուածք զարմին տանն յակոբայ · զաւակք անհաղորդք չարեացն սոդոմայ · ժառանգք հաւատոյ նախնոյն աբրահամու · զի թէ ո՛չ տն զօրութենց թողեալ էր զմեզ զաւակ ընտրութեան նորոյս սիոնի, լինէր հանգունակից ստուերականն սինայի · այլ համբարձաւ բարձրացաւ էին փառօք յերկրէ 'ի ձերմէ քանէ, որ թափեցաւ անկէտն 'ի վերուստ յիւր գթութէն ·



Լե՛ր հաւատարիմ մինչև ՚իմահ ։

Նորին հեղողի ասացեալ՝ ՚ի Չարչարանս և ՚ի Խաչելութեն ՔԻ. (որոյ յաւելեալ է չեշտիւ:)

ԲԱՆ. ԼԶ:

ԵՒ քանզի անթիւ են յաճախեցեալ՝ և գերազանցութե միշտ առաւելեալ փրկանաւորդ արգասիք շնորհաց առ պարտուցս իմոց առաւելութի, չարչարանացդ հանդէս և յանձնառութի: Զայդ ամփոփիչ՝ ամենից հոգւոց գոյից արարիչ ՚ի գործարանի մահուն նշանի խաչին հեղուեր, զի զձեռնարձակութին իմ ընդդիմութե կամացդ քոց լքցես: Զընթացողականդ լծակցութի երկոցունց ոտիցդ կեցուցողաց յանարգելութես պատճառ ՚ի պատժարանի փայտին մածուցեր, զի զփախուցեալս վայրագունի թշուառացելոյս գրաւականեսցես գթածաբար: Մէ դաւանալ ձեռաց կափողայն

հրա..

հրամայեցեր օրհնեալ գագաթանդ , որ զթզենւոյն տունկ առժամայն ցամաքեցուցեր, զի և զառիս ներելոյդ օրինակ կանխաւ աւետարանեսցես ։ Ո՛չ գանողացն այխրատուէ զխոստովանեալդ ա՟ծ սպառնացար , որ զարուսեալն մխթացուցեր, զի մահացելոյս անձին բարուն հանգստեամբ հանդերձ գործեսցես ։ Ո՛չ զհայհոյչայն հնարաւոր չարաբանութի կապտեցեր , որ զլուանին պտկեր երանգաւ արեան գունեցեր , զի զանհամարձակ լեզուս ’ի գովեստ քեզ զօրացուսցես ։ Ո՛չ նախատողացն մոլեգնութեան սաստեցեր , որ զտարերս սասանեցեր , զի զթշուառացեալս գլուխ գթութեդ օծմամբ իւղեսցես ։ Ո՛չ ’ի մոլորեցուցիչն կարդալ զքեզ ա՟ծասպանիցն զօդուա՛ծ ծնօտիցն բաժանեցեր. քակտե՟լ ’ի միմեանց, որ զկարծրութի վիմացն հերձեր , զի զանունակս բարեաց հոգիս ’ի բերմանէ ընդունայնուե ողորմութբ հանդարտեցուսցես ։ Ո՛չ զպահապանացն սուրս ընդերաց իւրեանց մատուցեր , որ զորովայն օձին սահեցման հողոյ մատնեցեր , զի զտառապեալս մարմնոյ ոսկերս իբր ’ի գանձարանի պահեալ, կենաց յարուե̃ արժանացուսցես ։ Ո՛չ 'ի կնքելն զշիրմին փականս կենդանակիր քոյ գերեզմանին՝ անդրէն յորսայսեալս զնոսին յանդունդս երկրի սուզեցեր, զի 'ի տապանակի անձինս զնշխար լուսոյդ հանդուսցես ։ Ո՛չ 'ի համբառնալն զքեզ կորուսեալ, և իբր զերկրաւոր մարմին գողացեալ՝ համայնաջինջ և ամենասպառ զսերմ ծննդոցն կրձատեցեր, զի զիս զանարժանս յիշատակի ընտրութե̃ բարեաց անկորուստ և անվնասելի ը̃ փրկելոցն հաղորդեսցես ։ Ո՛չ յարծաթոյն կրկնակապէն կաշառաձգութ̃ի, որ 'ի գանձարանէ հօր քում՝ նուիրաց՝ քեզ գրաւ մատնութե̃ և անարգութե̃ մամոնաւորեցին, զուրացողացն մոլեգնելոց ը̃ հին դէպուածոյ հանւոյն մոլաբու 'ի յարձան քարի յեղանակեցեր, զի զիս զվրիպեալս 'ի հաստատութեց և ընդ իշխանութեամբ մահու վաճառեալս արեամբ քո փրկեալ 'ի հաստատութ̃ի վիմիդ կառուսցես ․ օրհնեալ կրկին, օրհնեալ վերստին, յամի միշտ օրհնաբանեալ յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

Նորին հանգոյն , Պատրաստեալ ’ի չարչարանս տն̄ :

ԲԱՆ. ԻԸ.

ՈՐԴԻ՝ այդ գումարտակ վերադասեցեալ բարեշնորհութե̄ քոյդ պարգեւաց առ իմս երախտիս ով ամենագութ բարերար գոլեալ և ամենազօր , թէև սակաւք շարադրեցան աստանօր եդեալ , այլ արքայազունք են , և իշխանականք ինքնակալութե̄ց , որդիք զօրութեանց · ծնունդք վեհից · մեծափառք , լուսանորոգք , և հրաշալատիպք : Յաղթողականք վերամբարձութ̄· դրօշմք հռչակեալք տռ̄ գլխոց գլխոց պսակապաճոյճ գեղազարդելոց , բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութի̄ս օրհնաբանողաց , համբոյրս հեզս երջանիկս և խաղաղականս ա̄ծային հարազատութե̄ց այնոցիկ նահանգաց , զորոց մարգարէն մաղթեաց ասելով· զարթո՛ տ̄ր զզօրութի̄ս քո , և եկ ’ի կեցուցանել զմեզ · Ո՛յք յոյժ զօրէն հալածել զմեզս , և զանյուսութ̄ն կարկուտ հալել և փախուցանել՝ քան թէ նախամարտիկն զինուորութեան երկնային

պասպարուն ըզգիշերալարն խաւարասէր սկզբնաներհակ բարուոյն ա̃յ ։ Քանզի և զբնաւն այսքանեայ ձրից , որ 'ի բարձրելոյն ինձ անձրևեցաւ տկարիս թշնամւոյս և ապախտաւոր ծառայիս՝ անճառ է ասել · իսկ եթէ համարձակեսցի ոք զօրել խօսել զսակաւս 'ի բազմացն , քան թէ զիսկութ̃ի համանգամայնիցն , առ այսոսիկ զառաջին նիւթն յիշելով , յորմէ հաստեցաւն, իբր զտկար ոք նկուն 'ի զօրու̃է մեծէ հերքեալ պարտեսցի ։ Այլ թէպէտ և այսպէս գրեցի , և դարձեալ զնոյն վկայեմ՝ առ թերի խակութ̃ի հոգւոյս , և կատարելութ̃ի հաստողիդ , և սա բարիսն իմ՝ չարժանութ̃ի · սակայն ամենալոյս աննախանձ և բազմաշեղուն գովեալ արարչութ̃եդ զօրեղուն վանեալ են կարծրութ̃իք արտաբերութ̃ե սրտի բանսարկուին · որ քարին առակաւ յուսահատն վհատութ̃են սպառմամբ խոցանման աղբերացս երկուց , որ 'ի զգայականս եդեմայ բղխել պատրաստեաց տնկօղն , զի ոռոգեալ ծաղկեսցի նոքաւ որ 'ի յիս՝ բարեգործութ̃ե կենսատունկն դրախտ ։ Ահա մի̃ ցամաքու̃է արտասուացս աղանդա_ հնար պատրանօք չարաչար խորամանկեսցէ վերստին հանել 'ի փափկութ̃է նախնումն վիճակին ։ Իսկ յորժամ կացցէ ա̃ծ համբարձեալ հրաշիւք արուեստից 'ի մէջ աստուածոյ հաշտարանացն խաղաղութ̃բ , բարձեալ ընդ ինքեան զշնորհացն կտակ . առ որ ա̃մ վնասակարութ̃իւք խարդախութեց , և կարճմտութ̃իւք սրտնեղութեանց իբր ընդ վիմեղէն լերին պնդութ̃ե բաղխեցեալ ցնդին ջրոյ օրինակաւ սակաւուհեղեալ . և կամ հողոյ խորտակմամբ փշրեալ ։ Որդ՝ չև իմ կշտամբանքս ա̃յ ձայնիւն յուսայ 'ի մարդկանէ իցեն . այլ յամենատես աչաց վերին հրամանիդ՝ մտեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս , տոկմամբ սասանեալ յա̃մ կարծեաց , ապաւինիմ և արդ անձամբ բեկելով 'ի յոյսդ հաստատութ̃ե կենդանի անեղծ . զի ողորմութ̃բ նայեցեալ 'ի յիս՝ իբր 'ի պարտաւոր կորստեան պատժոյ , առաջի բարերարու̃ե երկնայնոյդ յանդիման եղեալ ապաձեւն անթոշակութ̃բ , զքոյդ երախտիս անպատում փառաց բերելով ընդ իս յուշ քեզ արկանեմ . որ ոչ մոռացմամբ ըզբաղեալ նիրհես , և ոչ թարթափմամբ աչաց ընդմիջեալ՝ զհեծուի՟ կրից անտեսես ։ Վերացո՛ յինէն աղաչեմ զքեզ՝ խաչիւդ լուսոյ զխեղդ վտանգիս․ հոգարկուե՟ տրտմուե՟դ զտարակուսելի ախտուի՟ս · փշանիւթ սպահաւն զբորբոջ մեղայս · զարկուածով գանին ըզհարուած մահու · ապտակին յիշմամբ զկարիս ամօթոյս · թշնամանօք թքոյն զանդոսնելի գարշուի՟ս · լեղւոյն ճաշակմամբ զհոգւոյս դառնութի՟ ։ Ահա քո են այս տ՟մ՝ բարութի՟ք անբովանդակելիք ա՟յ միոյ միածին որդի · առ որովք զչարուի՟ս իմ յիշատակեալ՝ զամենօրհնեալ անուն քո կարդամ՝ բարձր աղաղակաւ իմմնալեացս պաղատանօք ։ Տես 'ի խոստովանուի՟ զղջման պարտութե՟ ամաչեցելոյս · և տո՛ւր ողորմութի՟ որդւոյս սատակման մահուն՟ անմահի · զի 'ի բազմութե՟ իմոցս մեղաց վերստին կրկնեալ նովին աճեցմամբ առաւելութե՟ քո ողորմութի՟դ առատարածեսցի՝ հռչակեալ հնչմամբ ահաւորուե՟ յերկնի և յերկրի · և զքեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտենանս · ամէն ։

◆ ◆

Նորին հանճարոյ, Պարզեալ 'ի ձեռնագործ չարչարանս յսի :

ԲԱ՛Ն. Ժ :

ԵՒ քանզի օր է օրհնաբանեալ և լուսանորոգ կշռութեն երկուց ընտրութենց՝ տրարածոցս սասանութենց յեղանակելոց յայլ իմն էութին երկնակենցաղ անփոխադրելի, ամբարձելոյն խոնարհութեն, և կործանելոցս վերբերութեն՝ սարսափելի ուրբաթու մեծի պասեքիս. յորում էկն եհաս ժամ՝ բարեպատեհ գրել ինձ զայս նուաղ ձայնի հեծութեն զուարճախառն երկխուղին : Ահա ըղձալի համարիմ ասել աստանօր 'ի քոյոց այտի, զոր ընդ իմ կրեցեր ած բոլորից : Կացեր յատենի քում ստեղծուածոյն իմոյս կերպին. ոչ խօսեցար տուիչդ բանի . ոչ բարբառեցար հաստիչդ լեզուի . ոչ ձայն արձակեցեր սասանիչդ երկրի . ոչ մռնչեցեր ամենազդեցիկ փողդ մեծութեն : Ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր, և ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր : Ոչ մատնեցեր ամօթոյ զմատնիչսն զքեզ տանջանաց մահու.

մահու․ ոչ ՚ի կապելն զքեզ զխմադար ձեցեր, և ոչ յապտակելն դժուարեցար․ ոչ ՚ի թքնուլն թշնամանեցեր, և ոչ ընդ կուփելն երբէք խռովեցար․ ոչ ընդ կատակելն արտմեցար, և ոչ ընդ խաղ արկանելն երեսս փոխեցեր։ Մերկացուցին զզգեստ պատմուճանին իբրև ՚ի տկարէ, և դարձեալ ագուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ։ Եթէ ոչ էր արբեալ կրկնակի քացախ զանդեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերէն նախնի դառնութեանն։ Ճաշակեաց վհատութեամբ, և արգել անդրէն տարակուսանօք․ աւխն մոլեգնաբար, և դարձեալ մատուցին անպատկառապէս։ Գանի՛ հարուածոց յետին անարգութեան ՚ի մէջ խառնիճաղանջն ամբոխի դատապարտեցին․ ծունր կրկնեցին նախատանաց, և պսակ եդին արհամարհութեան։ Ո՛չ ետուն հանդիստ կենդանարարիդ, եթէ ոչ զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին․ ընկալար իբր երկայնամիտ․ առեր իբրև զհեզ․ բարձեր որպէս համբերող․ ըստանձնեալ իբր զպարտական զփայտն վշտաց․ որպէս զծաղիկ շուշանաց հովտաց ուսով բերէն զգէնն

կե_

կենաց · զի յարհաւրաց գիշերայնոց զխուրակերտս գահաւորակս մարմնեդէն գոյութենս պահպանեսցէ 'ի դատապարտութեն վայրի իբր 'ի խրախճան խնճոյից ։ Հանին արտաքս իբրև զողջակէզ · կախեցին իբրև զխոյն սաբեկայ ձգեալ զեղջերացն · տարածեցին 'ի սեղանն խաչին իբր զպատարագ · քեներեցին ոմն չարագործ · պնդեցին իբրև զապստամբ ։ Օ խաղաղութիդ երկնաւոր իբր զաւազակ · զանկապուտ մեծութիդ իբր զտառապեալ · զառ 'ի քրովբեից պաշտեցեալդ իբր զքամահեալ · զսահմանդ կենաց իբր զարժանաւոր սատակման մահու · զաւետարանիս նկարիչ իբր զհայհոյիչ օրինին · զիոր և զկատարումն մարգարէից իբր զհամառօտիչ գրեցելոյն · զճառագայթդ փառաց , և զկնիք անքննին խորհրդոյդ հօր իբր զներհակ ծնողիդ կամաց · զօրհնեալդ խոկապէս իբր զտարագրեալ · զկապոյ օրինին լուծիչդ իբր զայր 'ի նզովս գրեալ · զհուրդ ծախիչ իբր զհերքեալ մի իմն կալանաւոր · զահաւորդ երկնի և երկրի իբր զհաւասարի պատժաւոր · զ'ի լոյս անմատոյց ծածկեալդ իբր զհաղածին ըմբռնեալ

Ոչ

Ո՜վ քաղցրունդ և երկայնամիտ բարերարութիւնդ ողորմածիդ գթութ՟ե, որ մ՟ն ապախտաւոր և անօրինեալ ծառայիս ա՟րդ բոլորից զայս ա՟մ կամաւորապէս և հաւանողական հաճութ՟բ տարեալ՝ մարմնոյդ միութ՟բ 'ի քեզ ընկալար. և մինչև 'ի քնարան շիրմին տապանի անպակաս 'ի լրութ՟ե ամբողջ նոյնութ՟ե ա՟ծ անքննին զնոյն կրեալ նախատինս անձամբ համբերութ՟ե՝ յարեար կենդանի ինքնիշխան բարձրութ՟բ լուսոյ՝ աննուաղ մարմնով, և անթերի ա՟ծութ՟բ: Որհնեալ փառօք, գովեալ գթութ՟բ, բարեբանեալ միշտ ողորմութ՟բ յաւիտեանս յաւիտենից.

ամէն:

Լորէն հաջողի, Պարզեալ աղօթս 'ի չարչարանս ջ՟ն, տաղտանօք ոչ է՛ ընդունայն Լեզէն արդեանք
ձրիագործութ՟ե ն՟ր 'ի մեղ:

ԲԱ՟Ն. ՀԲ:

ԵՒ արդ՝ անկեալ յերեսս հողանիւթ կերպիս 'ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութ՟բ զբարեգործիդ ողորմածու.

ծութե՟ն զկենդանարարս ասս համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծ իդ ընծայեցուցեալ ։ Աղաչեմ զքեզ միայն խնամածական մարդասէր, գթած, կեցուցիչ, հզօր, այցելու, պաշտպան. մի՛ ունայնասցի վաստակն աշխատութե՟ փրկականդ կրից մարմնացելոյդ վ՟ն իմոյ. մի՛ սոսկ եղիցի քրտանցն կաթուած խառնեցե՟լ արեամբ ՚ի մատնութե՟ն աւուր գիշերին. մի՛ լիցի ստու՛երացեալ լուսոյդ երախտիս. զոր ձրի, և առանց փրկանաց թշուառացելումս ինձ պարգևեցեր ։ Մի՛ ջնջեսցին շնորհացդ աւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին. մի՛ անշահ եղիցին կրիցդ պտուղք, զոր կարօտուես իմում մատուցեր. մի՛ պարծեսցի բանսարկուն վանեալ՝ զքո ստացեալս իւրացուցանել ։ Ահա յաղթեսցես կամօք ըղձից չարին. վերստին ապշեսցի միանգամ զարհուրեալն. կրկին պարտեսցի իսպառ դատեցեալն ։ Մի՛ անխայեր զազատարարդ քո բան, որ զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ դարձուցանել ։ Օանճառն արարեր բարերարութի՟ յանակնկալ ժամուն յուսահատութեան, յորժամ

ընաւ

բնաւ իսկ կարեալ և օտարացեալ էր կենդանութե՛նն շարժողութի ․ մեռեալ անմահդ, և զմահացեալս նորոգեցեր ։ Եթէ զկանոն համաձևութե օրինին փոխեցեր, արդ զդիւրինն և զհեշտականն, և զևս հնարաւորն մի՛ արգելցես՝ սկզբնաձիր ողորմածութե, բարեգութ օրհնեալ և երկայնամիտ թագաւոր ։ Ազդեա՛ բանիւդ ամենազօրաւ, որ զգոյութի լուսոյն ստեղծեր 'ի նախնումն աւուր, և վաղվաղակի փոփոխեալ գտայց 'ի լաւ անդր ։ Եւ փոխանակ զի ես ոչ խնդրեցի հետևել լուսոյդ, դու եղցես ինձ յայց ճառագայթ ծագման հայրենի կերպիդ, և կոչեցայց առաջի քո ծառայս մնասապարտ ողորմեալ շնորհեալ առ 'ի քէն ։ Ոչ է ժամանակ յերկարաձգութեան առ 'ի զպարտսն հատուցանել ․ ահա շնորհեա՛ ինձ տառապելոյս զերեսս քո լոյսդ 'ի խաւարի սրտից վհատելոյ ․ Արգե՛լ և կնքեա՛ զընթացմունս ելից, որ միշտ զեղուն բարիքն հոսեալ 'ի յուշոյս իմ տեսուչ ․ պահեա՛ ինձ զշնորհ ամենապայծառ գանձուցդ մնացականաց, որով պատուական գտեալ՝ քո անուանեցայց, պաշտպանեալ 'ի քէն անսահման բարի։ Ո՛հ ողորմեա՛ ինձ գթած. աղաչեմ՝ զքեզ՝ ողորմեա՛ ինձ հզօր, կրկին ողորմեա՛։ Մի՛ փոխարկեր երկունս յաւուր ընդ չարեացս իմոց բարիդ անհնարին. մի՛ բառնար 'ի վրտանգելոյս զառ 'ի քէն պարգեւեալդ շնորհ. մի՛ կապտեր զփչումն ամենօրհնեալդ հոգւոյ. մի՛ լուծաներ զխնկեալ զկնիք արքունական պատկերիդ։ Մի՛ յայտնեսցին փուշք մեղանացս 'ի սրբուխս մտացս. մի՛ խզեր զկապ միութե՟ զընդ քեզ սիրոյն սնդութե՟. մի՛ մերժեսցես զարուեստ զօրութե՟ լեզուոյս յարմարութե՟. մի՛ պակասեցուցաներ զաջողուած աջոյս առ 'ի զլուսոյդ մատունս բաշխել։ Մի՛ գրեր 'ի դպրութե՟ կենաց մատենիդ զմահուն պարտիս. մի՛ պահեր. մի՛ ինձ համարիր. մի՛ յիշեցուցաներ. մի՛ ամաչեցուցաներ. մի՛ նախատեր. մի՛ ոտն հարկաներ. մի՛ արձանացուցաներ զմեղկուէյն. մի՛ ամբարեր զկորստեանցն. մի խբր ըստդատեալ իմն ամբաստաներ։ Մի՛ յարուսցես ընդ իս զծառն անիծից. մի՛ արձակեր 'ի յիս զսաղարթենասուցն. մի՛ ընծխուղեր զծաղիկ մեղացս. մի՛ բերցես ընդառաջ զնամակ պարսպարտուցս . մի՛ արտաքսերեր զէութի՛ն պաղղոյն : Մի՛ թո՛ւեսցես 'ի ճիւղս երկրաստեղծ մատանցդ զգիւտս գործոյս. մի՛ մատուսցես բան ընդդէմ՝ ահեղ, զանօրէնութիս իմ՝ յիշատակել . մի՛ մատնեսցես իմոցս կամաց զաւանդս հողւոյս վարել 'ի գերութեան : Մի՛ ատէն զիս փառաւորեր , զի անտանոր դատապարտեսցես . մի՛ նուա՛ղուէ այսր անցաւորի զյաւիտենական բարիսն տուժեր . մի՛ 'ի սակաւուսմ՝ այսմ՝ ժամանակի զանվախճանելի զփառսն չափեր . մի՛ ընդ հոլովս վշտաց հեծութե՛ զանախտական զկեանսդ գրաւեր. մի՛ ընդ ստու՛երի այսր մթութե՛ զանձառելիդ լոյս փոխանակեր : Մի՛ զերասանակ մտացս լքցես ըստ արտուղի հետս հետևել . մի՛ զկամուրջ կենցաղոյս պրեսցես ինձ հանդստեան բաւականութի . մի՛ զհոլլիտ հանճարոյս ըստու՛երական պահեր, 'ի հանդերձեալն ինձ հրապարակել : Եթէ ամբարես զաւանց համարոյ գործոյս իմ չարիս, մեռայց կենդանւոյն . եթէ շտեմարանես 'ի սրտի , աստստին կիզեալ անբոց այրեցայց . եթէ քննես զանօրէնութ՛իս, առանց յանդիման քեզ լինելոյ խապահալեցայց. եթէ անկանից ինձ թողցես զմեղսն, 'ի նոսին վատնեալ մաշեցայց: Ակնարկեա՛մ միշտ զօրեղ ամենակարող՝ փախնուլ չարութեանս որ յիս. զի բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ: Հրամայեա՛ գթած, խնամակալդ գովեալ, լոյս անշիջանելի զօրութ՟բ անսահմանելեաւ, զի նոր հաստատեսցի գոյութ՟ի բնութ՟եաս մարմնեղէն յարկի անդամոցս. յորում հանգուցեալ անլքանելի, բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք միութ՟բ հոգւոյս իմ ընդ քեզ. զապականութ՟ի մեղացս մերժեալ իսպառ՝ յանարատութ՟ի զիս պատրաստեսցես ամենակեցոյց թագաւոր անմահ՝ որ յ՟ս ք՟ս. օրհնեալ յաւիտեանս. ամէն:



Եղիցի յայտնի լեառն տ՟ն. պատրաստեալ
՚ի գլուխս լերանց:

Նորին հեղինակի · Ճառ 'ի գովեստ ա̃մ սրբոց,
(որոց 'ի շաբաթն օր է յիշատակ ։)

ԲԱՆ · ՀԲ ։

ԵՒ քանզի երջանիկքն, և փառաւորեալք ս̃բցն պարք, յորոց ոմանք դոյզն ինչ գթեցին, և յաճախագոյնս հաստատեցան · փոքունս սասանեցան, և մեծագոյն վառմամբ նշուլից հոգւոյն մաքրութ̃ լուսաւորեցան ։ Յորոց մինն զզանկուածոյն յայտնէ զհասարակաստեղծն տկարութ̃ի · իսկ միւսն զգերազանցն քան զբնութե̃ն օրէնս՝ վարս և առաքինութ̃իս հրեշտակականս ։ Եւ արդ՝ նոքա որ օրհնեալքն են յամենիշխան բերանոյ ա̃ծու հօրն քո, ընտրեալք և տօնեալքն, խնկեալքն և բարեբանեալքն, իբրև զանդամս քո պաշտեցեալք, և իբրև զօթևանս հոգւոյն սրբոյ յարդարեալք, յորս չիք ինչ նշմարանք և կամ գիւտք խաւարի. այլ ամենևին անկեղծութ՟ի, և լուսաւոր արդարութ՟ի. և որքան մարթ է՝ ըզմարդն ա՟յ՝ ա՟յ նմանեցուցանել: Երեսք պարզք և անպատկառելիք. կրօնք բարձունք և անխոնարհելիք. կեանք զգաստք և անստգտանելիք. պաշտօն առ ա՟ծ կարծր և անփոփոխելի. ընթացք արիականք և անկասելիք. ճշմարտու՟ն միատարր և անյողդելի. դիմադրաւու՟ն զօրեղ և անհերքելի. տեսաւորութիւն պայծառ և անապշելի. իմաստասիրու՟ն վերնական և անկոխելի. պատկեր մաքուր և անաղարտելի: Որոց կերպարանս և զյիշատակս անուանցն աղաչել՝ ա՟ծ իսկ վարդապետեաց. և նոքօք հաճու՟ն ՚ի մէջ խառնութե՟ն արարչիդ բան լուսաւորեաց:

Նորին հռչողի, Հայցուածի երկութե՟ անչէն,
բարեխօսութե՟ ա՟ծ որբոց:

ԲԱՆ. ՁԲ:

Տէր ա՟ծ բարերար բազմաստար գ՟և Թագաւոր, կենաց պատսպարան, լուսոյ կերպարան, լայնատարր հանգստարան. որ յաղագս մեզ զումեղուցելոյս եկեալ մարմնացար․ գործեցեր զանպատումն, և հանդերձեցեր զհրաշալիսն, մինչև կատարեցեր զառեցեալն ը̃ ամենալիր ա̃ծուեդ ։ Որդ՝ ա̃ծ առաքելոյն սրբոց յերկնաստեղծ քո ձեռացդ ձեռնադրելոց, և հոգւովդ սրբով օծելոց, զորոց զգովեստն արժանաւորուե̃ ը̃ խմում՝ կարի առ 'ի փառս քո ա̃ր ա̃մի՝ յայլում բանի պաշտեցի, և ինձ ողորմեացիս յիշատակաւ սիրոյ նոցին ընտրութե ։ Տուիր ինձ ելից նոքօք հանդերձեսցես յերանութ̃ին փափաքելի․ ձայն բարի հովուութե̃ նոյին 'ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուիցի ։ Ս՝անկալայց 'ի յանեղծութ̃ի փրկութե տոնեցեալ լուսոյն, ընդ առաջնորդացն կենաց, սկզբնաշնորհիցն պատուոյս, փառաւորեալն դասուց, գետոյն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշխանացն պանծալեաց, լուսապայծառ թագին պճնելոցն, 'ի զարդ անկապուտ զօրութե շնորհին պայծառացելոց, իւղովն զուարթութեան տիրական լուսոյն կատարելոց ։ Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ ա̃յ ք̃ի, և մարտիրոսացն ընտրելոց նահատակութ̃, որք մահացու և մշտաչարչարն մարմնով վտանգաւոր և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հողազանգուածն բնութե՟ մարտուցեալ է՟ տարր գոյից ամ՟ նիւթից պղտակեցան, բարձրացան և կենդանացան հոգեւորս․ արիաբար ելեալք 'ի յերկրէ ըստ մարգարէին․ վկայք ճշմարիտք ամենափորձն մահու․ իմանալեացն անտեսից և ծածկելոցն աներկբայ բարեացն յուսով տեսելոց առաջն նկատիչք ։ Աշակերտք առաքելոյն և չարչարակիցք նորին․ որ հաւասարեալ գործովք է՟ նորին, կատարեալ լրմամբ անպակասելեաւ սպարեն 'ի խորախճանս անկէտն երանութե ։ Որոց հաճոյական և ընդունական մաղթանօք, արիւնընծայ վաստականոց էր քրտնակնդրուկ աղերսիցն յարգմամբ ընկալ զխո նորոգ ընդ նորին մասին անեղծ փրկութե՟ 'ի քեզ արձանացեալ ։ Ընդ խաղացեալն հուրբ և սուսերբ արեամբ ներկելոցն, և ճգնաւորացն որոց հարցն միանձանց՝ և քեզ հետեւելոցն՝ որդի ա՟յ, որք անպարտելի քաջութե՟ և անպատիր զգաստութե՟ ընդ դժնեայ գուռզի մարմնոյս բռնութեան արիապէս մարտուցեալ՝ սովիմբ վանեցին զանմարմինն ըեղխար. և մշտամարտ հանդիսի՛ յասպարիսի կենցաղոյս առանց զզօ՛ւմնաց ծանրաբեռնութե՛ 'ի լայնածաւալ ծփանաց զիս ծովու տապանակաւ մարմնոյս թանձրութե՛ զթեթևուն հոգւոյն թևուցեալ 'ի նաւահանգիստն կենաց հասին. և իբր սիրողք վերնում՝ ըղձակին առանց յետնոյն մտածութե՛, զթագն յաղթութե համարձակապէս պայծառ ճոխութ՟բ պճնեալ իսկապէս 'ի գլուխ կապեցին: Ա՟ սոցին արժանաւոր մաղթանաց և նուիրական հայցուածոց՝ և զիս զմեղաւորս 'ի սպառաժականաց ընկալ ընդ նոսին: Ա՛ ահա խառնեալ զանմաքուր զբան ընդ նախադրեալ երջանկայն փառաւորական աղերսարկունի, որ վ՟ իմ գուշեն քեզ 'ի հաճունի, և ես ը՟ նոսին իբր դառնունի եղեալ ընդ քաղցու, կի՟ տատասկ ընդ ողորկուն. տղեղութին ընդ վայելչութե, և տիղմ ընդ գեղեցկութե մարգարտի. կամ հող ընդ յստակութի ոսկւոյ. և կամ քարինս անարգս ընդ պայծառութե արծաթոյ. բացասութին ընդ ճշմարտութե. կամ աւաղ ինչ ատամնառու ընդ կակղութեան զանգուածոյ հացի

Արդ՝ լո՛ւր հզօր հնարաւոր գոլեալ զնոցայն վէ՟ իմ, և զիմն ընդ նոսին 'ի նոցին գոլեստ, 'ի փրկութիւն իմ՝, և 'ի փառս քո ամենագութ, բարերար, օրհնեալ, երկայնամիտ, կարօղ, անքննին, անճառ, աներղծ, և անստեղծ։ Քո են պարգևք. քո են շնորհք. դու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի։ Ո՛չ ես դատապարտիչ, այլ ազատիչ. ո՛չ ես կորուսիչ, այլ գտիչ. ո՛չ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ո՛չ ես տարագրիչ, այլ ժողովիչ. ո՛չ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ. ո՛չ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ո՛չ ես գլորիչ, այլ կանգնիչ. ո՛չ ես անիծիչ, այլ օրհնիչ. ո՛չ ես վրիժառու, այլ շնորհիչ. ո՛չ ես թշուառացուցիչ, այլ մխիթարիչ։ Ո՛չ եղծանես, այլ գրես. ո՛չ սասանես, այլ հաստատես. ո՛չ ոտնհարկանես, այլ սփոփես. ո՛չ պատճառս յօդես մահու, այլ հնարս խնդրես կենաց. ո՛չ ես 'ի կամս շարժեալս սատակման, այլ 'ի փրկու՟ի ողորմու՟ե։ Ո՛չ մոռանաս զայցելու՟ի. ո՛չ լքանես զբարի. ո՛չ արգելուս զգթու՟ի. ո՛չ բերես վճիռ կորստեան, այլ կտակ ազատու՟ե։ Ո՛չ թշնամանիս յառաստու՟եց. ո՛չ բամբասիս 'ի շնորհաց. ո՛չ հայհոյիս 'ի պարգևաց.

ո՛չ նախատիս 'ի ձրի ձրից․ ո՛չ անգոսնիս յերկայնմտութե՟ց․ ո՛չ եպերիս 'ի ներողութե՟ց․ ո՛չ բանսարկիս 'ի բարութեանց․ ո՛չ անպատու՛իս 'ի քաղցրութե՟ց․ ո՛չ քամահիս 'ի հեզութե՟ց։ Ո՛չ առաքին այսոցիկ տրտնջմունք, այլ անլռելի գոհաբանութիւնք։ Բա՛րձ զմեղս իմ հզօր․ լո՛յծ զանէծս իմ օրհնեալ․ քաւեա՛ զպարտիս իմ ողորմած․ ջնջեա՛ զյանցանս իմ գթած․ մատո՛ մատն այցելութե՟ն, և անդստին իսկ կատարեցայց։ Զի՛նչ քեզ տ՟ր քան զասելն դիւրագոյն, և կամ զի՛նչ ինձ պարտաւորիս կարեւորագոյն։ Այլ կենդանագրեա՛ բարեխնամ քոյինաստեղծ պատկերիս փչումն կրկին 'ի շունչ նորոգման լուսաւորութե՟ն մաքրական շնորհի զամենամեղ ոգիս պաշտպանեալ։ Մի՛ ածեր ողորմած ինձ օր տարաժամ 'ի համառօտս երբեք անթօշակ ապաձեռնուք ը՟ անկատար ուղին հետեւել․ մի՛ մտուցաներ բաժակ դառնութեան 'ի ժամ ծարաւու․ մի՛ փակեր գթա՛ծ իմ հանդէպ զյաջողուա՛ծ հոգեւոր օգտից․ և մի՛ իբր յանկարծադէպ հինից ապստամբ գիշեր մահուն ինձ պատահեսցէ․ մի՛ տայր տօթոյն յանպատրաստ պահուն զարմանս հատեալ ցամաքեցուսցէ • և մի՛ լուսնական դիպուածք հասեալ գաղտնեօք վնասեսցեն• մի՛ պահեսցի ինձ ոտուն մեղացս • և մի՛ հոսանք ուղխից կենցաղոյս զիս ողողեսցեն ։ Մի՛ հանդիսոն մահ բերիցէ • և մի՛ ննջումն 'ի սատակումն յառաջեսցէ • մի՛ քունն ինձ կորուստ լիցի • և մի՛ նիրհումնն ապականութ՟ի գործեսցէ • մի՛ վախճանն անյարմար 'ի վ՟ր իմ՝ արշաւեսցէ • և մի՛ շնչոյս վերարձակութ՟ն ըմբռնեալ 'ի խոնարհ լքցի ։ Դու ես տ՟ր • դու գթած • դու բարերար • դու երկայնամիտ • դու ամենակարօղ • առ ա՟մ բան անհասութ՟ն անճառ զօրաւոր, քաւել՝ փրկել՝ կենագործել՝ լուսաւորել՝ վերստին հաստատել՝ 'ի ժանեաց կերչաց գազանաց , և կամ յատամանց վիշապաց 'ի կեանս կորզել • 'ի խորոց անդնդոց 'ի լոյս բերկրութ՟ն ածել , և 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց ընդ արդարս երջանկաց փառօք բազմեցուցանել ։ Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ կարօտեալ քումդ շնորհաց • եթէ երկնայինք , և եթէ երկրաւորք• եթէ անկածն մեղօք , և եթէ ամբարձեալն արդարութ՟բ • եթէ տ՟ր , և եթէ ծառայ . եթէ տիկին , և եթէ աղախին . և 'ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն . և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն .



Մտիցուք համրձկութ՟ առաջի աթոռոյ շնորհաց նր՟։

Սորին հանգոյն ․ Աղօթք տաղաչափեալ ։

ԲԱՆ ․ ՁԴ ։

Արքայ երկնաւոր ․ թագաւոր բարձրեալ ․ տէր բոլորից ․ ամենից անհնկալուն ․ ստեղծօղ տեսականաց ․ հաստիչ իմանալեաց ․ պատճառ եղանութեց ․ կազմիչ հանդերձելոց ․ տուիչ լուսոյ ․ առիթ առաւօտու ․ պատրաստիչ վաղորդայնի ․ երևեցուցիչ երեկորի ․ տարրիչ խաւարի ․ արուեստաւոր բարեհնար ․ իմաստուն գործօնեայ ․ քաւարան օրհնէլ ․ հալիչ մեղանաց ․ հալածիչ ցաւոց ․ քակտիչ դառնութեց ․ պահպանարան հանգստեան ․ հնարք նիրհման ․ յարմարիչ քնոյ , պարգևիչ ննջման ․ հնչոյ յարակարդուն ․ զգայուն տեսողուն ․ ցրիչ ցնորից ․ յեղանակիչ անրջոց ․ փոխարկուն՟ զարհուրմանց · այլայլուն՟ տխրութ՟եց · խափանիչ խիթմանց · ընդարձակիչ կարծեաց · համադրութ՟ի ծփմանց · անհագնութ՟ի խարդախմանց · հարուածիչ դիւաց · փախուցիչ ախտից · ընկճիչ գայթագղութեանց ։ Պաշտպանեա՛ երկնաստեղծ ձեռամբդ · զօրացո՛ բարձրացեալ քո աջովդ · ամփոփեա՛ ամենակալդ թեւօք · ծածկեա՛ ա՟ծեան խնամօքդ · ամրացո՛ վերակացութ՟ վերնայնոցդ · շուրջանակի պարսպեա՛ գումարտակօքդ անմահից · 'ի յամենուստ պարփակեա՛ կցորդութ՟ հրեշտակացդ ։ Վանեա՛ զընդդիմամարտն իմ զինուորութ՟ զուարթնոցդ · պատսպարեա՛ զսասանեալս ա՟ծածնիդ մաղթանօք · զբանակս անդրանկացդ բարեկարգեա՛ ինձ պահապան ։ Բա՛ց ընդ աչաց դիմաց և զմտացս իմ տեսանելիս · զգա՛ստ արա ընդ ոգւոցս և զծանրաբեռն կրիցս դանդաղութ՟ի · վերացո՛ տ՟ր 'ի զգայութ՟եցս զմածեալս յիմարութ՟ի · բա՛րձ միայն բարեգործ զպատրուակիս թանձրութ՟ի ։ Ընդ սկզբան բերմանս լուսոյ զողորմութ՟ի քո ծագեա՛ · ընդ ելից արեւուն՝ արդարութ՟ե արեգակնդ 'ի յանձկուն սրտիս մտցէ ·

Ճառագայթ քո փառացդ 'ի յիմաստից խորհրդանոց ջահեսցի · խաչիդ ա՟նագրութ՟ե ընդ շունչս և ը՟ մարմինս համասփիւռ տարածեսցի ։ Յանձն առնեմ քեզ յաւուրս զքո յարմարեալ տաղաւարս պաշտպանեաւ ոգւոյս՝ որ 'ի սմին · զի դու ես ա՟ծ անքննելին, առ ամենեսին բաւական, և յա՟մնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս · ամէն ։

Սուրբն հոգւոյն · [illegible] 'ի հայրապետութե՟ տ՟եառն-
եան Մարտիրոսի և արեան ։

ԲԱՆ․ ԼԳ ։

Արեգակն արդար · ճառագայթ օրհնեալ · լուսոյ կերպարան · փափագ անձկութե՟ · բարձրեալ անքննելին · զօրեղ անպատում · բարւոյ բերկրութի՟ · յուսոյ տեսութի՟ · գովեալ երկնաւոր · թագաւոր փառաց · ք՟ս արարիչ · խոստովանեալ կեանք ։ Եւ արդ՝ զթերութի՟ վրիպանաց բազմախառն ձայնի եղկելոյս ամենազօրդ բանիւ լցեալ մատուցես յաղերս հաճութե՟ հօր քում բարձրելոյ ։ Որ վ՟ս իմ 'ի փորձ եկիր անիծից ,

ծից, կերպարանեալ զիմ նմանութիւն ամենևին՝ կենաց օրհնութիւն, վերնոց և ներքնոց բարեխնամօղ տեսուչ համայնից ։ Օի թէ յանձն առեր մեռանիլ վ՟ն իմ՝, ա՟ծ և տէրդ բոլորեցուն, որչափ հաճեցիս առաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ազգակցաւ մարմնոյդ առելոյ 'ի մէնջ՝ առ համապատիւդ քո հայր ։ Եւ վ՟ն արեանդ պատուականի միշտ մատուցելոյ 'ի հաճութիւն կամաց առաքչիդ բարձրին վտանգք մեղուցեալ դատապարտելոյս · թողցին պարտիքն · ապաքինեսցի ամօթն · մոռասցին պատկառանքն · բարեգործեսցին դատակնիքն · սատակեսցին որդունքն · վերասցի լալն · հանդարտեսցէ կրճումն ատամանցն · սպառեսցին ողբքն · հատցին արտասուքն · մերժեսցի սուգն · հալածեսցի խաւարն · վանեսցի հուրն սաստկութեան · հերքեսցին տանջանարանքն բազմօրինակք ։ Եկեսցեն գթութիւնք կամօղիդ և պարգևօղիդ կենաց ամենից · ծագեսցի լոյսդ · արագեսցէ փրկութիւնդ · հասցէ օգնութիւնդ · ժամանեսցէ այցելութիւնդ · կանխեսցէ ցօղդ ողորմութեան ·

յաւաջեսցէ, արբուսցէ զանդաստանս պասքեալ անկեալ ոսկերացս Թշուառութ՟ե 'ի վիհն մահու · ծաղկեսցէ պտղաբերեսցէ բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ՝ զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ · որ անծախապէս միշտ պատարագի յիշատակ կենաց փրկութ՟ե հոգւոց ննջեցելոց ։ Ով ամե՛ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց շնորհօք քո գթած 'ի քեզ զօրացեալ՝ քեւ նորոգեսցայց, զատեալ 'ի մեղաց անմահ կենդանութ՟ե 'ի յարութեանն արդարոց հօր քում օրհնեցեալ ։ Ընդ որում քեզ փառք · եւ հոգւոյդ սրբոյ բարեբանութ՟ի վայելչական գոհութ՟ե այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

՚Սորին հեղողի · Վարդապետութիւն անուան տ՟ն, եւ հայցուածոց օգուտ՝ որոց աղօթենն առնա ·

ԲԱ՛Ն · Գ ·

ՏԷՐ իմ տ՟ր · տուի՛չ պարգեւաց · ինքնաբուն բարի · ամենից տիրող հաւասարապէս · միայն արարիչ զբնաւս յոչէից · փառաւորեալ · անքննելի · ահեղ · ահարկու ·

կու · սոսկալի · հզօր · սաստիկ · անտանելի · անմերձենալի · անըմբռնելի · անիմանալի · անձառելի · անտեսանելի · անզննելի · անշօշափելի · անորոնելի · անսկիզբն · անժամանակ ։ Անշամանդաղ գիտուն · աներկեան տեսուն · ճշմարիտ էականուն · բարձր և խոնարհ · օրհնաբանելի գոյուն · անստուեր ծագումն · ամենափայլ ճառագայթ · խոստովանեալ լոյս · անտարակոյս վստահուն · անտարտամ հանգիստ · անյեղլի կնիք · անսահմանելի տեսիլ · վկայեալ անուն · ճաշակ քաղցրութեն · բաժակ բերկրութեն · հաստիչ հոգւոց հաց · օտար մթութեց սէր · աներկբայ խոստումն · ծածկոյթ ցանկալի · զգեստ անկապուտ · օթոց բաղձալի · զարդ փառաց · ձեռնկալու մեծ · ապաւէն գովեալ · աննուաղելի շնորհ · անպակասելի գանձ · անապական անձրև · արփիայնցուղ ցօղ · ամենատեղաց դեղ · ձրի բժշկութին · կրկնաձիր առողջութին · վեհագոյն խրախոյս · անպատիր կոչումն · համօրէն աւետիս · սորկամեծար թագաւոր · աղքատասէր պաշտպան · մշտահարուստ տուիչ · անխափան դիմեցումն · աննհանջելի հրաման · անհամառօտ յոյս · երկար տեւողութ՟ի · անզղջական տուր · ամենաբաշխ աջ · արդարակշիռ ձեռն · անաչառատես ակն ։ Մխիթարու՟ե ձայն · ամփոփանաց լուր · բերկրութեան բերումն · անուն կենդանի · նախախնամող մատն · անդայթագղելի ելք · անխարդախ ընթացք · կենդանարար կամք · աննենգելի խրատ · աննախանձ պատի՛ւ · լայնական հնարք · անձկական պայման · անդատանելի հետք · աներևոյթ շաւիղ · անչափագիր պատկեր · որքանութ՟ի անսահման · աննմանական տիպ · անզուգական գութ , ողորմութ՟ի բազմազեղ · խոնարհութ՟ի տօնելի · համբոյր փրկական ։ Նաեւ քան զայս ազդմունք վայելչականք ա՟ծութ՟եդ նո՛ւիրելիք , օրհնեալ · գովեալ · բարեբանեալ · քարոզեալ · աւետարանեալ · հռչակեալ · հնչեցեալ · պատմեալ · անխափանելի կամօք աղաչեալ , և որոնց առ մեզ բերին առ 'ի քէն հոմունք քաղցրու՟ե , զոր հանդերձելոցն ճառից լուսաբանեն կերպաւորութ՟իք · որով զո՛ւարթ ցուցանիս 'ի փրկութ՟ին իմ երանութ՟ի , իբր 'ի պարարտութ՟է իմեքէ ախորժ տենչանօք լցեալ · զի ո՛չ իմոյս ինչ սնոտիապաշտութեան փառաւորիս երգով . այլ զի պատճառ իմն առցես զփոքրս աղերս մեծիդ փրկանաց ։ Իսկ քանզի առ ամ՟ հասակ անկեցեալ յերկրի ազգ. բանականաց այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի . որ զամենեցունց ունի զկրից պատահմանց նշանակեալ յիւրում պատկերի , իբր կցորդ մեծակական կարեաց համօյնից , առ բոլոր գումարս բազմահոլով տիեզերակոյտ քրիստոնէից . առ նախնի ժամն ժամանող , և առ երկրորդ կոչեցեալ չափու արբունն , առ որ 'ի կատարած աւուրն ընկալեալ՝ սակաւաձեռն ծերութեն . առ պարտաւորս և առ արդարս . առ ինքնագով բարձրայօնն՝ և առ ախալեալ անձնադատ գտեալն . առ բարին և եղեռնագործս . առ նկունս և առ արիս . առ ստրուկս և ներքոյ անկեալս , առ սեպուհս և գերփիկս . միջակայնոց և պայազատաց . շինականաց և տոհմականաց . արանց և իգաց . հրամայողաց և հնազանդելոց . գերելոց և նուաստից . մեհից և փոքունց . պատուականաց և ռամկաց . ձիավարժից և ոտնականաց . քաղաքահանայց և գեղջկաց · արքայից գռողուեց՝ 'ի սանձս ահաւորին ըմբռնելոյ · միայնացելոց՝ վերնականացն խօսակցաց · մաքրականաց տիրանուէր ղգաստուեց, քահանայական երջանկակրօն ընտրուեց · այցելուեց բարեզգաստից դիտողութեց · աթոռակալուեց նախագահից · սրբանուէր տեսողութեց ։ Որոց՝ ոմանց աղերս աղաչանաց · և ոմանց՝ խրատ բարեաց, առ դէմս աղօթից այսու մատենիս մատակարարեցի՝ ձեռնարկեալ հոգւոյդ զօրութ · կարգել ինձ մաղթանս բազմադիմիս · և ամենեցուն սոցին խնդրուածս գթութեան մեծիդ յանդիման լինել սովաւ հանապազ ։ Եւ արասցես զսոյն ընթերցողացն 'ի սիրտս յստակս բժշկութի հոգւոց, և մաքրութի յանցանաց · թողութի պարտուց, և արձակուրդ մեղաց կապանաց ։ Եղիցի բղխումն արտասուաց սովաւ վարժելոցն · և պարգևեալ տացի 'ի ձեռն սորին ապաշաւըղձից ։ Շնորհեսցի մր և ինձ ընդ նոսին՝ առ 'ի քէն զղջումն կամաց · և նոցա խմովս ձայնիս շունչս բարեհամբոյրս · Նուիրեսցի վս իմ այսու մատենիս պաղատանք նոցին · և բանիցս ւյսու հեծութ̃ն նոցին ընդ իմ խնկեացի ։ Ընդ համբոյր ճաշակման այսր ողբերգութեան շնորհ լուսոյ քոյ մտեալ բնակեսցէ · եթէ ելցեն ինձ բարեպաբիշտք ընծայիլ սովաւ , ընկա՛լ կենդանեօք վ̃ն քոյ գթա՛ծ և զիս ընդ նոսա · եթէ ախտս ինչ որբանու՛էրս կաթու՛ածոյ աչաց սովիմբ բերիցի , եղիցի 'ի քէն խնամակալ և յիս անձրևեալ · եթէ դրեսցի և 'ի փրկութ̃ն կարգեսցի հաղորդելոցն յայս գիրս կենաց , արասցես կամօք քո օրհնեալ և ինձ համարեալ ։ Եթէ հեծութ̃իս ա̃ծահաճոյս 'ի ձեռն այսր բանի 'ի գաղտնեաց ուրուք յառաջ եկեսցէ , օգտեցայց քև բարձրեալ և ես ընդ նոսին · եթէ ձեռն մաքուր խնկով հանդերձեալ առ քեզ համբարձցի , հասցէ միասցի ընդ իմս ձայնի և աղաչողացն աղերսս յառաջ մատուցեալ ։ Եթէ պաղատանս բաղմադիմիս ը̃ իմս երկնեսցի՝ լիցի և ինձ քև վ̃ն սորին կրկին նուիրեալ ։ Եթէ յարգեսցի այս արձան բանի պատարագ քեզ 'ի հաճութ̃ն · նախ այլոցն ընդ իս քև ընծայեսցի ։ Եթէ 'ի տխրանաց ինչ ձանձրութ̃է ոք նուաղեսցի , կանգնեսցի վերստին հաստարանա

ոյս

այս հառաչմանց 'ի քեզ յուսացեալ. եթէ համբարտակն վստահուե̃ մեղօք յատակի, այսու արձանօք պատկանեցելովք աջով քո պաշտպան դարձեալ կառուսցի: Եթէ յուսոյն ձգարան սուսերըն յանցանաց հատեալ կորեսցի, կցեսցի դարձեալ միւսանգամ կամօք ամենակալիդ բարերօք պատուաստեալ: Եթէ վտանգ մահու անձնական ցաւոց զոք պաշարեսցէ, գտցէ փրկուե̃ի սովաւ առ 'ի յոյս կենաց յաղօթելն առ քեզ կեցուցիչ. եթէ տագնապաւ ոք տարակուսի 'ի սիրտ խոցիցի, քաղցրութ̃ քո սովաւ ապրեալ ողջասցի: Եթէ անքաւելի կորստեամբ պարտեաց յանդունդս ոք խորոց իցէ ընդլուզեալ, եկեսցէ 'ի լոյս կարթի՛ այս հնարից քև պատսպարեալ. եթէ թմբրութ̃ հաղբից խաւարին գործոց իցէ ոք վնասեալ, զօրասցի անդրէն վ̃ քոյ՝ միայն ապաւէն, 'ի քեզ ապաստանեցեալ: Եթէ պահպանակն վստահութ̃ զանձն ուրուք լքցէ, ընկալցի այսու միջնորդի՛ ձեռն քո զնա՝ ամփոփեալ 'ի նոյն հաստատութ̃ի. եթէ ամայի 'ի զգուշութ̃ պահողացն ոք դեգերեսցի, սպասեսցէ սովիմբ առ 'ի նոյն դարձ նորոգողիդ ։ Եթէ սարսուռ դիւային ջերման դողութե՟ ինչ զոք խռովեսցէ , սթափեսցի խոկմն յայս նշան խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհրդոյ ․ եթէ անօրէնութե՟ մրրիկ խորտակիչ հողմոյ յանկարծ բախեսցէ զհաստատուած մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրային ծովուս , հանդարտեսցի անդրէն ղեկաւ այս թևոց ՚ի քեզ պատկանեալ ։ Եւ արասցես լինել դեղ կենաց՝ առ հնարս ցաւոց հոգւոյ և մարմնոյ քոյ ստեղծուածոց զայս կարգեալ սահման ողբոց մատենի սկզբնեցելոյ յանուն քո բարձրեալ ․ զսկսեալս իմ դու կատարեա ․ եղիցի հոգի քո խառնեալ ՚ի սա ․ շունչ զօրութե՟ մեծիդ միասցի ՚ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութ՟իս ․ զի դու տաս զօրութ՟ի վհատեալ սրտից ․ և ընդունիս փառս յամենեցունց ․ ամէն ։

Նորին հանգոյն · Փառաբանական օրհնութիւն անման Միածնին :

ԲԱ՛Ն · ՁԹ ·

Ա և տ՟ր · կեանք և արարիչ · ողորմած · գթած · լոյս · երկայնամիտ · անոխակալ · մարդասէր · ամենագութ · պարգեւատու · փրկիչ · օրհնեալ · գովեալ · բարեբանեալ : Դարան ամրուե՟ · պատսպարան վստահուե՟ · առանց նենգութե՟ բարի · առանց խաւարի ճառագայթ · քաւիչ մեղաց · ողջացուցիչ վիրաց · անհասանելեաց հնարք · անմատչելեաց հպաւոր · անյուսուե՟ ելք · անուն քո խոստովանեալ տ՟յ որդի · և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի , և հոգւոյդ ամենակալի ; և ընդ քեզ երկրպագելւոյ փառք և պաշտօն գոհաբանութե՟ յաւիտեանս · ամէն :

* * *

՛Սորին հաճոյէ, Աստուածութիւն ամեներանաւորու-
թե̃ մեղաւորի առ բաղձապատէն ներանձոյեն եր-
կայնմտութե̃ն ա̃յ :

ԲԱ՛Ն · ԻԱ :

Եւ արդ՝ ես երկրածինս մարդ, կենցաղականաւ անկայուն · գոյին զբաղեալ, և յիմարութե̃ պատրողական գինեաւս թմբրե̃լ· որ ամի̃ ստեմ, և ո՛չ միով իւիք ճշմարտեմ: Բայց որո՞վ գիմօք վերագրեցելովք՝ նշանակօք ազդարարեցելովք յանդգնեցայց լինել յանդիման քում դատաստանիդ, ո՞վ իրաւարար, ահաւոր, անճառ, անպատում, հզօր, ա̃ծ բոլորից : Բայց դասեալ աստանօր 'ի սոյն զապերախտութի̃ մեղուցեալ անձինս առ քումդ երախտիս · ցուցից զիրաւունս քո միշտ զօրացեալ, և զանիրաւութիւն իմ յաւէտ պարտաւորեալ : Որ արարեր զիս 'ի քո պատկեր պանծալի 'ի ձեռն մեծիդ տպաւորութեան, զտկարս օժանդակելով · զարդարեցեր բանիւ · փայլեցուցեր փչմամբ · միտօք ճոխացուցեր · իմաստիւք աճեցուցեր · հանճարով հաստատեցեր · 'ի չնչակա-

նացն

նայցն որոշեցեր · հոգւով իմանալեաւ խառնեցեր · իշխանականին գոյին պճնեցեր · ծնար հայրաբար · սնուցեր դայեկապէս · տածեր ստացողապէս · տնկեցեր զամբարիշտս 'ի քումդ գութի · ջրովն կենաց ոռոգեցեր · աւազանին ցօղով մաքրեցեր · կենաց վտակաւն արմատացուցեր · հացի՛դ երկնայնով ջամբեցեր · ա՟ծային արեամբդ արբուցեր · անհպելին և անհասանելեացն ընտանեցուցեր · զաչս երկրեղէն 'ի քեզ համարձակեցեր · լուսովդ փառաց վերածածկեցեր · զհողանիւթ մատունս անմաքուր ձեռացս 'ի քեզ մատուցեր · զմոխիրս անարգ մահացու իբր զնշոյլ լուսոյ յարգեցեր · զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրապէս և անարժանիս անձին կնքեցեր ։ Ո՛չ կիզեր զբերանս լցեալ նանրութք 'ի ժառանգակիցն կարդալ զքեզ · ո՛չ կշտամբեցեր զյանդգնեալս 'ի քո կցորդութի · ո՛չ ստուերացուցեր զտեսիլ աչացս 'ի քումդ ակնարկութի · ո՛չ արգելանաւ կապանաց ընդ մահապարտացն տարադրեցեր ։ Ո՛չ խորտակեցեր զդաստակ բազկիս , որ անմաքրապէս առ քեզ համբառնայր · ո՛չ մանրեցեր զսոսա իմոյ մատանցս , 'ի շօշափելն զբանդ կենաց · ո՛չ պատեցին զինև մառախուղք 'ի ձօնելն զքեզ ահաւոր · ո՛չ փշրեցեր զպարս ատամանցս յըմբոշխնելն զքեզ անսահմանելի · ո՛չ գնացեր բարկուը̅ խոտորնակ խոտորնակի ը̅ քեզ հետեւօղս իբրև ը̅ վրիպեալ տունն խաբայելի · ո՛չ խայտառակեցեր 'ի հարսնարանիդ զանարժանս քումդ պարերգութ̅ե · ո՛չ 'ի գձուձ հանդերձին տեսիլ զանօրինեալս յանդիմանեցեր · ո՛չ կապանօք ձեռացս և ոտիցս յարտաքին խաւարին հալածեցեր : Զայս ա̃մ մասունս բարեաց և զներելոյ երկայնմտութ̅ե ընկալեալ 'ի քէն բարերար՝ օրհնեալ և յա̃մի միշտ երկայնամիտ , փոխադրեցի զնասակարս պարտեաց անթիւս և բազմօրինակ անօրէնութ̅ս մարմնականաց , և անձնականաց ամենակեր բազմածուփ խորհրդոց յուզմանց երկ բաքարշութ̅ց : Զայսոսիկ քեզ ա̃ծ իմ և տ̃ր ը̅ այսքանեաց բարեաց փոխաբերեցի · զայս քեզ ինձէն հատուցի չարիս ըստ մովսիսեան յանդիմանութ̅են , որ առ յակովբ՝ մոռացեալ զխնամատութ̅ի, և սիրօղս յիմարութ̅ե, զայսց բարեաց երախտեաց կաձառս ընդունայնութ̅ե

դնագնացիւք չարաչար ունայնացուցի . զայս լուսաւորութ՟ի շնորհաց անճառից 'ի բարձրելոյդ խնամոց բարդեալ մրրկական խելագարութ՟ե ցնդեցի ։ Եւ թէպէտ բազում անգամ ծանուցար կարկառմամբ ձեռին քոյ այցելութ՟ե ձգել զիս առ քեզ՝ ո՛չ հաւանեցայ ըստ մարգարէին , որ զիսրայէլէ ամբաստանու՟ի . և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ , և ո՛չ ընդ այսմ սահմանաւ ուխտին փակեցայ . այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս . անդստին յոձ՛ն առաջին մատեայ փչոյն մեղաց . հերկեցի զանդաստան սրտիս յորոմանն արդիւնաւորութ՟ի ։ Ու խելանեն առածք նծարեալ ոք մարգարէից , քանզի մնացեր յինէն խաղողոյ , և ես ընդ այնր փուշ շառաւեղեցի . դարձայ յանախորժ դառնու՟ի պտղոյ այգիս օտարացեալ . բուռն հարի զանհաստատ հողմոյ , որով միշտ տատանեալ այսր անդր տարաբերիմ . ըստ ձայնին յոբայ՝ ընդ ճանապարհ իմն անդարձ գնացի . 'ի մ՟ջ աւազոյ շինուածս յիմարութ՟ե կառուցի ։ Ունայնատարր հետովք խաբեցայ կենացն անձկալեաց հասանել . փակեցի ինձէն զելիցն ու-

ղևոզևորութ՟ն · բայց կամաւ զկորստեան խորխորատն ։ Այլ զպատուհան լսելեացս իմոց առ բանից կենաց ընդունելութիւն · կափուցի զաչաց հոգւոյս հայեցուած՝ առ 'ի զկենացդ դեղ 'նկատել ։ Ոչ ընդոստեայ 'ի թմբրութ՟եց լքմանէ մնացս 'ի պատգամ՝ փողոյդ ահաւորուե՟ · ոչ զգաստացայ 'ի բողոք գուժի հրափորձակին աւուրն ընտրուե՟ · ոչ երբէք զարթեայ 'ի նիրհմանէ քնոյն մահացուէի , որ 'ի կորուստ տպաւորել կարապետէ ։ Ոչ ետու հանգիստ քոյ հոգւոյդ 'ի մարմնեղէնս տաղաւարի · ոչ ընդ բնու՟ն չնչոյս խառնեցի զմանն շնորհաց քումդ պարգևի · իմովս ձեռօք կոչեցի կորուստ ըստ առակողին , զհոգիս կենդանի մահացուցանել ։ Եւ զինչ է ինձ սակաւ և նուազագոյն յօդել սահմանս կսկծելիս չափաբերականս · մինչ անցեալ է ըստ քանակութ՟ն , և վրիպեալ ըստ բժշկու՟ն ։ Որդ՝ քոէ ընձեռել կեանս հոգւով մեռելոյս , և անոխակալութ՟բ մատչել առ այցելու՟ն դատապարտելոյս՝ որդի այ՟ կենդանւոյ · քեզ փառք յ՟ամի , ամէն ։

* * *

Լուրէն հաճոյն · Յերջանկութե̄ բաղձանքեղ խնա
մոյն տայ առ մարդիկ , յաւէտ առ ապօրէնութե̄ ·
մաղթելով զնոյնս և 'ի մեզ բարեգործել :

ԲԱՆ · ԼԸ :

ԵՒ արդ՝ ո՛ր զօրուե̃ց · մեծութի̃ ահեղ · անտարակոյս տէսաւորութի̃ · կամք ամենարձակ · առատութի̃ անպակաս · ո՞վք զօրեսցէ տօնել հանդիսի՛ պարերգութ̃բ 'ի միոյ կաթուածոյ յօղոյ քում· բարութե̃ · որ ցանկ դեգերիս պատրաստել պատճառս հնարից խմում՝ փրկութե̃ : Ու զոր մեծն է գրեցից՝ պատմել յապաւնիս · քանզի ո՛չ անուանեցար հրեշտակաւէր , և որ զպետութիս նոցունց հաստատեցեր · այլ և զերկնիս ղամպարօք նոցին զմատանց քոց գործ , ո՛չ գրեցեր երբէք սիրել զնս̃ · այլ առեր 'ի պատի՛ մեծաց գովեստից առաջին դասեալ զմարդասիրութի՛ն : Ո՛ որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն անճառ 'ի խորհուրդս սոսկալիս · զերկնային լուսակերպիցն կոչեցեր զնոսին սպասաւորս և գլխաւորս յատուկ մատակարարուե̃ց · իսկ զստորնային ծնունդս մահկանացու՛աց տիրական և ա՟ծական պաշտելի անու՛ամբք պերճացուցեր, անցեալ վերստին ը՟ս սահման կշռուե՟ չափոյ: Այնեցեր քեզ կտակս գրոց ճառից անբաւից զանապակ ծորմանն ծայրագունին վեր նում բարութե՟ն • ևս և ՚ի մարդանալդ քո միդ յէութե՟ն, ոմանց վ՟ս ինքեանց, և կիսոց վ՟ս այլոց՝ զեղեր առատութ՟բ զտուրս կենաց • արու՛եստս բազմորինակս • սքանչելիս ա՟ծագործս • նշանս ճշմարտատեսիլս • ո՛չ զի թէ անդամալուծին պակասելոյն ՚ի հաւատոցն, հոգաբարձայն առաջարկութ՟բ զցոյցս յուսոյն՝ գթացեալ ողորմեցար • և ո՛րչափ զօրեսցէ առաւել բան քո ամենակար առ ախտալից մարմնոյս մաքրու՟ի աղաղակողիս հառաչման: Քանզի արդարև մեծ են փառք հրաշից՝ ք՟ն զանմաքրեալս հոգի ս՟բ հաստել • զլու՛ացեալս պատկեր՝ անտիրելի աղտոյ ներգործել • նա զի և երկր՟դս առաւելութ՟բ յաւազանին շնորհ յաճախեալ զփառսն հայրենի բարձրացուցանէ: Դու ես ա՟ծ, որ սրբես զմեզ • ո՛չ ընտրեցելոյն քոյ նախատպաւորեցեր մնվանջսի • դու ես որ ՚ի մեղս և յանօրէնու՟իս վերակայու եղեր տոհմին յակոբայ, մինչ յեգիպտացւոյն երկրի ընդ խաւարն հեթանոսաց ընտանենային : Դու ես, որ օրէնսդէտ առնես զմեղաւորսն ՚ի Ճանապարհի, ըստ բանի երգողին դաւթայ · դու ես որ փոխատրես զքարեղէն սրտից կարծրութ՟ի ՚ի լոյծ կակղութ՟ի մարմնոյ գոյութ՟ե բանի ընդունելութ՟ե : Դու ես որ բաւես ընձեռել սիրտ այլ, և Ճանապարհ մի՝ երկնչել ՚ի քէն զբովանդակ կենացն սահման · դու ես, որ տաս զերկիւղ քո ՚ի միտս խրատութ՟ե առ քեզ ուշ ունել հաւատովք ըստ մարգարէին ձայնի : Օրհնեալ քո շրթանցդ զաշխարհաստեղծ բերանոյդ զմ՟ծեղէն անձրևացդ զկեցուցանողդ կաթուա՛ծ մատո՛ լսելեացս դրանց բացարան · որով զօձին խորամանկութ՟ի բանսարկուին թիւնից թարձցես և բժշկեսցես : Ամենակալդ ձեռամբ զխոսականացս շարժողական գործի ըմբռնեալ՝ ազդեա՛ զօրութիւն ձայնի · որ տաս բնաւից ընտրութ՟ի բանի · զի դատապարտեալ քև զպատշաճականն, մի յանդգնաբար խօսելով իբր զնախնին՝ լքայց ՚ի յուսոյդ, և անբանութ՟ե մատնեցայց վանեալ ՚ի յորսողէն :

սողէն ։ Լուսաւորեա՛ վերստին զխաւարեցեալ՝ հոգւոյս աչս կենդանաբաշխ աջոյդ կարկառմամբ ․ զի մի՛ համարձակութ՟են շիջեալ լապտեր շնչմամբ վիշապին՝ ՚ի ներքոյ դրուանին ստորածածկեցայց ։ Բա՛րձ զանօրէնութ՟իս իմ Տ՟ր ․ եւ ընկեա՛ ՚ի խորս ծովու ․ որ է փոքր առակ մեծութ՟ե քումդ անբաւութ՟ե, ըստ մարգարէին զիմս ընկղմել չարութ՟ի ։ Կանգնեա՛ կործանեալս անձին նշան վստահութեան ․ զի մի՛ յուսահատութ՟են կոթող կառուցել, զծածկեցելոցն բողոքեսցէ ։ Բա՛ց հզօր եւ գթած զբժշկարանիդ կենաց վարդապետարան, զի զառ ՚ի ներքոյսն մշակութ՟ե կորուսչին սերմանց՝ մանգաղաւ կամացդ հուպ առ արմատ խուզե՛լ հնձեսցես ։ Դէմ եդեալ հետեւել առ քեզ բոլորիցդ Ա՟ծ պետրոսեան օրինակութ՟ն ՚ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց ընկլուզայ ․ մատո՛ ժամանեա՛ զաջդ կեցուցիչ յօգնականութ՟ի ինձ սասանեցելոյս ։ Ընդ քանանուհւոյն ձայնի ՚ի խորոց սրտիս պաղատիմ, սովեցելոյս ապականասպաս կաղկանձողական ամենաթշուառ վտանգաւորիս ապրուստ կերակրոյ փշրանաց հայցի 'ի բազմազեղծ քո սեղանոյ մասնաւորեսցես ։ Որա՛ փրկութ̃ի նիւթ̃ոյ խորանիս որդւոյս դառնութեան · որ եկիր խնդրել և կեցուցանել զիս զկորուսեալս ։ Զի քո է մեծութ̃ի , յաղթութ̃ի , և՛ զօրութ̃ի · և դու ես քաւութ̃ի և բժշկութ̃ի , նորոգութ̃ի և երանութ̃ի · և քեզ վայելէ փառք և երկրպագութ̃ի յաւիտեանս · ամէն ։

Նորին հեղինակի · Բանք առ ք͞ս 'ի յիշատակ երանե[illegible] [illegible] , որ մեծ եղև քան պարար[illegible] ։ Մաղթելով՝ շնորհօք [illegible] 'ի նոյնս և մեզ [illegible] ։

ԲԱ՛Ն · ԽԹ ·

Եւ արդ մի՛ տիրեսցեն անօրէնութ̃իք քում՝ պատկերիս կայսերականի արքայութ̃եդ վերնում ա̃ծ բոլորից լուսոյ ։ Մի՛ կապտեսցէ գոռոզն ապստամբ զզարդ փճմանդ շնորհի 'ի քո ստեղծեալս կերպէ ։ Մի՛ թագաւորեսցէ մեղքն խափանեալ մարմնոյս մահացուիս առ 'ի գրաւել զիս 'ի նոյն ։ Չի՛ք իմ թագաւոր առ իշխել շնչոյս բաց 'ի քէն ք͞ս · որ անբռնադատ հնազանդեցուցանես լծոյն քաղցրութե̃ն ։ Որ բառնաս զկարիս մեղաց ամենակատարդ բանիւ ։ Որ արեամբդ քո ստացար և մարմնովդ կերակրեցեր ։ Որ կարդեալ սահմանեցեր ուխտ կենաց անփոխադրելի ։ Որ յորդի քո կնքեալ կցորդ քեզ դրելով հօր քո մատուցեր ժառանգակցապէս ։ Որ յանուն զենման միշտ յիշատակաւ քո չարչարանաց առ նոյն բարերար աղօթել համարձակեցեր ․ ստեղծիչ ամենից և կեանք ։ Դու ես ա̃ծ ա̃մ հոգւոյ, որ մեծացուցեր զայս տուրս շնորհաց քան զա̃մ գործոյ քո հրաշս ․ ո՛չ զերկինս իւրովքն զարդուք և հրեշտակային պայծառութե̃ք ․ ո՛չ զերկիրս և զմարդկութի̃ս , և որ առ սոսա են զարմանութի̃ք ․ ո՛չ զսահման լայնութեան ծովու , և որ 'ի նմա են եղելութի̃ք ․ ո՛չ զանդունդս աղխիւքն հանդերձ , և որ 'ի նմա են անբաւութի̃ք ․ ո՛չ բարձրացար յօրինմամբ այսքանեօք վեհիւք որչափ առ իմս կարեկցութի̃ ․ յասելն քո ո̃բ մարգարէի՛ն՝ քաղցրութե̃ յուսոյ բարութի̃ ․ ո՞վ է ա̃ծ իբրև զես կարող թողուլ միշտ զմեղս և ջնջել զանօրէնութի̃ս ։ Ահա արդ խնկեալ են բանք քո ողորմած , և խոստովանեալ բարերարութ՟իքդ · փառաւորեալ խորք խորհրդոյդ , և երկրպագեալ զեղմունք շնորհացդ ։ Արդարև ոչոք բաւէ յելս թարգմանել խօսիւք նիւթական լեզուի 'ի մասանց այտի քումդ գթութեցդ՝ զոր առ իս ցուցեր յօրինիչ · քան զի և մեծ իսկ է զօրութ՟ի զհնացեալն անդրէն նորոգել ը՟ս առաջնումն պայծառութեան , քան յանգոյից ստեղծագործել ։ Եւ զի ոչ է քո տկարութ՟ի , որ զօրութ՟իդ ես ա՟մի · առ որ բան քո միայն ազդեալ զլրութ՟ի գործոյն գլխաւորէ ։ Ահա յարիցես փառաւոր լինել բարեգործ 'ի ստացուածս այս կրկին անյուսալի փրկութ՟ե · զի խրաւամբք ուխտի բարձրացի , հաստատուն եղեալ մեծապէս՝ օրհնաբան աւետեացդ քո ձայն 'ի քաւելոյդ շնորհ ծանուցեալ , ողորմութեան լուսովդ ուղերձել , քան 'ի ճանապարհ ստեղծանելոյն ։ Զի առ մինն արարիչ միայն ճանաչիս · իսկ առ միւսն առաջնով կոչմամբն՝ և երախտաւոր · Ընդ կերպացուցանելոյն և քաւիչ · ընդ նորոգելոյն և բարերար · ընդ հաստատելոյն և ողորմած · ընդ կազմելոյն և հնարաւոր · ընդ յօրինելոյն և հեզ · ընդ նկարագրելոյն՝ ամենազօր · ընդ առաջնորդելոյն, և լոյս · ընդ տածելոյն՝ հովիւ · ընդ դարմանելոյն, խնամիչ · ընդ ողջպահելոյն՝ բժիշկ · ընդ ձեռնկալութե՟ն՝ զօրավար · ընդ անպարտութե՟ն՝ թագաւոր · ընդ արարչութե՟ն՝ քաղցր · ը՟ ամենատուր պարգևացն՝ առատ · ընդ միշտ անսալոյն՝ ներող · ը՟ ոչ բարկանալոյն՝ անոխակալ · ը՟ կարեացս վշտակցելոյ՝ ծածկագէտ · ընդ անձանձելոյ գթոյն՝ ապաւէն · ընդ գերունակ գոլոյն՝ ա՟ծ · ընդ անսպառ բարութե՟ն՝ օրհնեալ յա՟մի ։ Արդ ո՞չ ստեղծեր մինչ ոչն իսկ էի, և ծանուցար ինձ գոյացուցիչ · և այժմ զհոգի մաղթողիս մարմնոյս տաղաւարաւ յարդարեա՛ անդրէն վերստին յանարատութ՟ի մաքուր սրբութեանն նախնի լինելութե՟ն · զի բազմացի առաւել աճեցուն եղե՟ յաճախ տուչութ՟ի անսահմանելի քոյդ սքանչելեաց նորոգ ներկայիս՝ քան զանցելոց հնոցն ստուերականաց ։ Եւ ընդ ճառելոյս զթիւս մեղացս որ՟քն մտացս թևս ընթանայ զանբերելին յիշատակել · արդարացայց յանուն քո հզօր · և 'ի պատմելն ինձէն զանձին իմոյ բիծ, և դու թողցես զամբարշտութ՟ս բազում մեղանաց խոստովանելոյս. հզօր ծածկատես ամենափրկիչ. զի մի ծայրագոյն լրութ՟բ աւետեացս դարձեալ նախնումն կարօտացայց՝ երանելով սաղմոսին զշնորհօք փրկեալն մկրտութ՟ն, և փշովք մեղաց յոգի խոցոտեալ՝ ձեռն.քո մխեցի յիս առաւելապէս այժմէն վերստին, ծանր առնելով զբեռն պարտեացս՝ քան զքաղցրութ՟ի պարգևացդ. այլ ազատեա՛ զիս օրհնաբանեալ հոգւովդ սրբով, աղաչեմ զքեզ տ՟ր ի՟մ, յօրինաց մեղացն և մահու: Ո՛ւ լիցի, թէ անկցի ը՟ տկարութ՟ սահմանու ճշմարտութ՟դ ծագումն իբրև զէրոյն օրինակ. ք՟զի ուր քաւութ՟ է թագաւորեալ, վտարեալ են մեղք. և 'ի խորախոյս կենդանի բանիդ ոչ է յուսահատութ՟ի. և ամբարձեալ քոյոյդ շնորհաց՝ հալածեալ են պարտիք. և մերձ գոլով ձեռինդ տ՟յ՝ ոչ գոյ անհնարութ՟ի, այլ ամենևին լուսաւորութ՟ի. բովանդակա՟մ զօրութ՟ի. անպարտելի կարողութ՟ի. Որ է փրկութ՟ի. կենդանութ՟ի. նորոգութ՟ի. ողորմութ՟ի. միանգամայն և քաղցրութ՟ի. արքայութ՟ի. անեղծութ՟ի, և փառք յաւիտեանս ամէն.

՚Նորին հաճոյէ. Ընծանք յերախտիս և 'ի ներողութե̅ն ամ̅յ առ մեղաչանս. յաւէտ առ երկագործութե̅, որ և չենարար պատարագաւ՝ կցորդս պղեղեար արար, ած̅ունեան մարմնոյն ճաշակմամբ։

ԲԱՆ. ԾԲ։

Օրհնեալ տիրաբար 'ի քումդ էութե̅. անսահմանելի և անփոխադրելի. խնկաւէտ բարի. պաշտօն խնկելի, և երջանկութի̓ խոստովանելի ա̃մ երկրի. երկայն յուսոյ ամենապատրաստ տեսութի̓. գթած ողորմած. որ ո՛չ պահես ոխս քաղմութե̅ ամաց մեղանաց քթթել մի ական. որ հրաշաւորս և զարմանալիս գեր քան զա̃մ ազինս նախնեացն անսահման առաւելութե̅ կրկին ընդ միոյ համեցար հեղուլ զողորմութե̅ վերնահոս վտակս ամենախնկաւորս 'ի շնորհաբաշխութե̅ս նորուսմ. և զանսուտ զմուտս լուսարանի պատուհանին անձկութե̅ նշուլիցն աղօտականաց, չափով գխտուեցն ե̃ղ սողոմոնի, և իւր իսկ նմին, և ինձ ե̃ղ նորին՝ բացեր ընդարձակեցեր թշուառացելումս զաւագաստան անջրպետարն̃ եղկյն ողոր մութե ձրի պարգևայն ծածկանաց . զոր ընդ մէջ իմն մատնաւորօք աւետաւոր յիշատակաց , և ՚ի հնումն զայսր տպաւորութի օրինակաւ նկարագրեցեր՝ զդարձարուքն առ իս , և ես դառնամ՛ առ ձեզ . և յորժամ՛ դարձցիս և հառաչեսցես՝ յայնժամ՛ կեցցես : Սա զի և զաղջամղջին սևունի գունոյն փոխարկել ՚ի ձեան պայծառութի . և զարանցն արեամբ ներկելոցն յեղանակել ՚ի պատահումն գեղման՝ ըստ եսայեայ և զաքարիայ . և ՚ի մէջ բարկութեն դարձեալ զոյգ զողորմութիւն : Քանզի անապատանալ քաղաքացն իսրայէլի , և դարձեալ բնակիլ . և ճանապարհացն ամայի լինել ՚ի չգոյէ մարդկան , և անդրէն հետևիլ . և լքանիլ ՚ի սովոր ոգւով , և դարձեալ զօրանալ ձեռամբ . և գնալ այ ՚ի տեղի իւր զայրացմամբ , և դառնալ ողորմուբ . ըստ ներողութե զելսն . և ՚ի մէջ սաստիկն սպառնալեացն կրկին պաշտպանութի . և ՚ի սրտին խռովեալ յուզումն խնամոց գթութե . Այս մարգարէիցն ձայն խնկելի , որ զօրհնեալդ քոյ գալստեան զազատարարդ հրաման կանխաւ ազդէին : Սա՛ զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ թիւ արկանել մ՟ անբաւութե՟ • փոքունք են և նուաղունք օրինակք և նմանութիւնք, հինք և ժամանակաւորք առ աւետեացդ քո յայտնութ՟ի, և խաչիդ փրկագործութ՟ի: Այ՟մ վայրի կառուցեր զխորանն վկայութե՟ արեան քո ուխտի, որք մեծաբարբառ միշտ աղաղակեն՝ ք՟ն զդաստակնիք մահուն հաբելի՝ զյաղթանակ բարեաց քումդ հանդիսի, կեանս կրկինս և անմահականս՝ շնորհաց, մկրտութե՟, յարութե՟, նորոգութե՟, առ քեզ ընտանութե՟ • ընդ հոգւոյդ սբ՟յ միութե՟, քաւութե՟, ազատութե՟, լուսաւորութե՟ • մշտնջենաւոր մաքրութե՟ • խնկապէս երանութե՟ • ընդ վերնոյն կցորդութե՟ • անկապուտ փառաց • 'ի շրթունս մեր ձայնիւ՟ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք: Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ՟ աստանօր՝ յիշատակ եդեալ մեծիդ երախտեաց • ա՟ծ իսկ լինել ընտրութ՟ե շնորհին, և ընդ հաստողիդ միանալ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութ՟ե • զոր կատարում՟ն երջանիկ խոստմանն ըստ պօղոսի բանին ոչ ունէր օրէնն: Այլ դու փրկութ՟ի եկիր հայ-

րենիդ

րենիւդ քո հայրատուր · արարեր և կատարեցեր զյուսոյն յերկարաձգութիւն · որ առ քեզ պահեալ անհամառօտելի, քաւիչ ամի : Եւ՛ քեզ փառք ընդ հօր քում 'ի գովեստ բարեբանութեան հոգւոյդ քո սրբոյ յաւիտեանս · ամէն :

Նորին հայեցողի · Բանք յաղագս զօրութե արարածոց ողջախոհանի : Միանգամայն և սրբագործանք և եղծութե տնչէին :

ԲԱ՛Ն · Ը :

ԵՒ զի մի՛ գիրկուե՛ն վստահութ իսպառ կորեցից · և ապաղէն եղեալ մատնեցայց այսքանեաց աներևութից ընդ խմամարտից · որք ոչ այլ ինչ են, քան թէ ընտանիք թշնամիք ինքնածին բուսեալք · զոր վերադրեալքդ սահմանեցին, զորքանունի պատկերին ձևոյ եդեալ ահարկուս, ցուցից առ սմին բազմաբոյլ բռնութե մարտկացդ · զօրեղ ախոյեանս ածականս ամենայաղթօղս և անպարտելիս՝ թէև կսկծելիս կիրս՝ և դժո՛ւրկութ պտուղս ծառոց անհասանելեաց, և անկոխ Ճանապարհաց երկք և տաժանմունք, Քանզի զայն ամ՟ գունդս չարութե՟ բանսարկուին զօրաց սակաւ մի արտօսր կաթուածոց աչաց՝ իբր զձձիս զեռունս բազմոտանիս խխայթից երկրի տկար խլրտմանց՝ անկեալ 'ի վ՟ ծորումն ձիթոյ, կամ դոյզն դեղ ինչ սատակչական ցամաքեցուցանէ. և դոյզն մի հառաչումն սրտի հեծութե՟ ելեալ 'ի յոգւոյ՝ իբր շնչումն հարաւային ջերմութե՟ խառնեալ արևու, զսառնամանեաց սաստկութի՟ հալէ. քանզի ըստ միումդ նմանութեան հեշտածինք են. և ըստ միւսումն դիմադրութե՟ դիւրամեռք: Այլ ես ո՛չ երբեք կասեցից դատել զդատ՟պրտեալս բանից կսկծմամբ. պարսել զպարտաւորեալս՝ իբր զվնասակար անփրկանաւոր անհամոզելի. վ՟ զի զոմանս սատակեալ 'ի յիմոց նեղչացն, ոմանց զօրութի՟ տամ կենդանանալ առ հոգւոյս կորուստ: Տունկս դառնատեան. որ զգարշութի՟ անառակ վարուց ծաղկեցի. բարունակս ապականաբեր և մահողկուզեան, որ զկորստեան գինին երկնեցի. քանանու զաւակս և ո՛չ յուդայի՝ ըստ ասից մեծին դանիէլի: Որդիս գեհենին, և ո՛չ արքայութե՟.

ժա_

ժառանգս դժոխոց , և ո՛չ փառացն փափաքելեաց · նիւթս տանջանացն , և ո՛չ հանգստեան : Ապերախտս առ երախտաւորդ · ապաշնորհս առ բազմապարգևդ · միշտ մեղուցեալս առ երկայնամիտդ · դառնացուցիչս քաղցրութե՟ բարերարիդ : Ծառայս չար և վատ ըստ տէրունեան յանդիմանութե՟ն · իմաստունս զչարիս գործել ը՟ս եսայեայ նախատացութե՟ն · ժիրս առ ժանդագործութ՟ի զազրուե՟ : Փոյթս առ 'ի բարկացուցանել զտ՟րն · մշտաշարժս առ գիւտս սատանայականս : հանապազորդեան վիշտս ստացողին : Ծոյլս առ բարեացն թուլիչս · ծոյլս առ երանութե՟ն ընտանութե՟ի · դանդաղս առ դիտմունս խոստացելոցն · անարիս առ կարիս պիտանեացն և օգտակարացն · պաշտօնեայս տիրադրուժ · անշնորհակալս երախտամոռացս : Ա՛յ անձինս մեղաւորի , զի զարարիչն իմ բարկացուցի · վա՜յ որդւոյս կորստեան · որ զկենդանութե՟ն ձիր մոռացայ · վա՜յ պարտապանիս անհամար բիւրուց քանքարոց , որ ո՛չ գոյ հատուցանել : Ա՛յ բեռնակրիս ծանրութե՟ մեղաց դժնէից · որ չունիմ դառնիլ առ հանգստարանն ·

վա՜յ վնասակարիս տէրունեան պարտուցն , որ չէք հնար յանդիման լինել հզօրին ։ Վա՜յ եղեգնեախառն՛ կիզանողականս նիւթոյ , որ տոչորելոց եմ ՚ի գեհենին . վա՜յ ինձ առ այս յիշատակ, զի զնետս բարկութե՟ն ա՟յ այրեցելովք եմ գործեալ . վա՜յ յիմարութե՟ս , որ ո՛չ մտաւեցի զծածկելոյն հանդէս ։ Վա՜յ ամբարշտիս , զի միշտ անդադար ոստայնս չարեաց կկեցի . վա՜յ զմարմինս պարարողի կերակուր որդանցն անմահից՝ կտրողայն թիւնաւորաց՝ զիարդ համբերեցից . վա՜յ ինձ առ արքունի մահուն բաժակի . ո՞րպէս զյաւիտենականն տուժեցայց . վա՜յ ինձ առ ելս անարժան հոգւոյս յեղկելի մարմնոյս , ի՞բր դատաւորին ճշմարտի յանդիմանեցայց . վա՜յ ինձ առ նուազութ՟ի եւղոյն լապտերաց . զի անարծարծելի է աղօտանալն . վա՜յ ինձ առ ճեպ տագնապի ահագին պակուցմանն . յոր ժամ առագաստին մուտն փակեսցի . վա՜յ ինձ առ ձայնին ահաւորութ՟ի դողացուցչաց եւ սարսափելեացն բանից՝ երկնաւոր թագաւորին վճռաւն կնքեալ , թէ ո՛չ գիտեմ զձեզ ։

* * *

Նորին հանճարոյն · Բանք պղջացեալ՝ ամենապատանութէ, և աղերսանօք անձին ։

ԲԱՆ ԻԱ ։

ԵՒ քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնագրաւ 'ի մահ՝ ոչ կայի երբէք 'ի յոտս մարդոյ · և ոչ սիրտ բանականի ստացայ ըստ դրոյն · և քանզի ոչ փոխեցայ 'ի նախակարգելոցդ · և ոչ ընդ բարուք ուղին ընթացայ · ընդէր ոչ զխոտորնական հետոցն խաւարայնոց զդէմս ցուցից 'ի սահման կարգի այսր ընթերցուածոյ ։ Ու որս ածեալ յարմարեալ առ սոյն զկերպարան տեսակի բանիցդ երեսաց, ըստ մերադոյնդ նշանակելոյ՝ անփոխադրելի պաճելով, խոստովանեցայց մերստին դարձեալ սաստանօր զմնացեալ չարութեանցն զբիծս · զոր յաջորդաւդ է իմանալ ։ Օտար ժանդագործս արժանապատիժ անձեցուն արարի գնացիւք անսաստութե̃ զգունդն բելիարայ ։ Աքաւս կայթից և ցոյցս վազից խաղալկացն դիւաց գարշելեաց ճարտար խաբողաց ծուլութե̃ս իմով շնորհեցի ։ Գանս գաղտնիս և խոցուածս անյայտս 'ի կոր-

կործանելոյն դահճայ ընկալայ։ Ո՛չ հերքեցի զվանեալսն խաչին քսի, քան թէ անդրէն առաւել կրկին իսկ զօրացուցի։ Ո՜ իմոյ հիդոյս անօրէնութե անունդ յ՟ի հայհոյի 'ի մէջ այսականաց. ոմ՟ վ՟ իսրայելի 'ի մէջ հեթանոսաց։ Հարուածս հարուածոյ՝ վնասակարս ապականութեց ժանտոյ, և թրթրոյ, և այլոց կերչայ վատնողայ զծաղիկ հոգւոյս՝ ըստ որքյն յոլելեայ հրաշական ողբոյն, որ 'ի ցոյցս երկրի վ՟ իսրայելի յառակս հինից և չարաց հոգւոց յիս ինքն տնկեցի. ստեղծանել զնմ՟ պատրաստեցոյ, քան թէ սատակել։ Ոխերս կուտեալ հաւաքեցի անձին իմում մարտիկս մահաղէնս։ Աշտամբիչս ինձ գոյացուցի անխրատս և անպատկառելիս. ներհակս ինձ զօրացուցի՝ ապառումն և անկռուելիս. դառինս ինձ առի մասունս ընդ քաղցրաւենեացն ճաշակաց։ Ու ստացօղն միշտ նենգաւորս, և առ բանսարկուն յաւէտ հաւատարիմն. աւաղ աղէտիս, վիշտք վտանգիս, խաւար ամօթոյս. մութ պատկառանացս, զիա՞րդ և առ բանիս յանդիմանութի համարձակեցայց։ Մեծ է ձայնս գուժի, և անբերելի բողոքս աղաղակի. Ք՟զի թէ զհոգիս էր զիմ տեսանել տգեղս և նուաղս, և ամենևին ներգևեալս ցաւովք հեծութեանս 'ի վերջինս վարեալ վարանումն, և մրձոտեալ աղտեղեալ գունով զազրութ՟ն՝ իբր զպաշտօնատար մեհենի. մի՟ զի նոյն է սպաս տանել ձուլեալ պատկերի, և մեղայ ախտի: Արդ՝ ես գնացի ընդ այս ճանապարհ կորստեան հետոյ խաւարի. ետու զբաժինն քո ցանկալի յանապատ անկոխ, ըստ մարգարէին՝ որ առ քահանայսն իսրայէլի ամբաստանութ՟ն: Եւ զիա՞րդ ասացից անձին իմում մարդ՝ գրեալս ընդ անմարդկս. և ի՞բր անուանեցայց բանական՝ անբանիցն յիմարութեան կցորդեալս. և ո՞պ կոչեցայց տեսողական՝ մթացուցեալ զլոյսս որ յիս. և ընդէ՞ր համբաւեցայց զգայական՝ զիմաստից դրունս փակեալ. Կամ որո՛վք ցուցայց տպաւորութ՟ն նկարագրութ՟ն անեղծին շնորհի՝ անձամբ ինձէն յոգի մահացեալս. նա և ո՛չ շարժողական, և կի՟ շնչական ունիմ՝ անուանել, թո՛ղ թէ հոգեկան, կամ մտաց ընդունական: Անպիտանս 'ի թիւս անօթոց. անարգս 'ի քարինս որմոց. արհամարհեալս 'ի կարգս կոչեցելոց․ վատթարս 'ի յազգս հրաւիրելոց․ արհաւրօք մահու պակուցեալս․ անխորախուսելի 'ի բոլորեցուն ցաւովք և տանջանօքն երուսաղեմի՝ ա̃մ երեմիայի բանին խրատեցեալ ։ Պակասեալ աւուրցս 'ի հեծութ̃է, և ընթացք ամացս 'ի հառաչմանէ՝ ըստ Նուագարանաց երգողին․ իբր ասու՛լի 'ի ցեցոյ՝ և փայտ 'ի յորդանէ ըստ իմաստնոյն բանի 'ի խիթմանէ սրտիս հալեցայ․ իբրև զստայն սարդից մաշեցայ ըստ սաղմոսողին, և խոտան գտայ․ իբր զամպ առաւօտեայ՝ և զցօղ վաղորդայնի ըստ մարգարէութե՛ն ձայնի սպառեցայ ։ Այլ ո՛չ 'ի մարդ ոք ունիմ զյոյս, եթէ անիծեալ 'ի տեսանողէն՝ անյուսադրելի վհատիմ․ այլ 'ի քեզ տ̃ր իմ ոգեսէր․ որ ընկղմեալ 'ի քոյդ գթուե̃ց բարեաց անբաւից, և 'ի բևեռելոյն ժամու 'ի խաչին մաղթեցեր մեծդ ողորմութ̃ե առ հայր քո բարձրեալ՝ քո չարչարողացն ։ Արդ՝ շնորհեա ինձ յոյս քաւուե̃ կեանք և ապաւէն․ և 'ի տուրևառ շնչոյս թշուառի առից զհոգիդ քո բարի․ և քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով զօրու̃թ, մեծու̃թ, և փառք յաւիտեանս, ամէն ։

Նորին հաճոյք ։ Պարգեալ ամենատրութեան և աստուածայնոյ անձին ըղձացելոյ ։

ԲԱ՛Ն · ԻԲ ։

Դարձեալ այլաբանեցից 'ի նոյն շարունակ բարդեալ զկշտամբանացս յեղանակ գորովեալ անձինս · ածե՟լ մատուցեալ կրկին կացուցեալ նովին պատկերաւ 'ի նոյն պայմանի · Թերևս գրեսցէ ինձ ամենագէտն զայս յանդիմանութե՟ դատակնիք կսկծեցուցանողկ՟նս բանի Ճշմարիտ խոստովանու 'ի համայնից գործոց պաղտնուե՟ց չարեաց ։ ԱՅԼ ոմն ձիս խօսնական կարծրերախ սանձակոտոր արձակերասան · յովանակս անհամբոյր վայրենական և անկրթական · երինջս յաւողական անուղղական և անվարժական ։ Մարդս մոլեգնական տարագրական և կորստական · մանուկս մեղանչական անխրատական և վարատական · տնտեսս մահապարտական տարտամական և անգործական · բանականս անասնական գազանական և անմաքրական ։ Ձիթենիս ամայական անպտղական և կործանական · մարմինս հոգւոյս իմ՝ թախծողական դատողական և տանջողական. խոցեալս անբժշկական անխնամական և անկանգնական։ Ոսկի շարս կայսերական՝ արդ վատնական և անգտական. ծառայս ախալական փախստական և թշուառական։ Ահա ես ինքն ինձէն կամաւորապէս անձնամատն և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ մտախաբ, կամակոր իսկ, և սրտաբեկ. ուշամոռաց և հանճարագրաւ. զգայազուրկ և իմաստապատառ. յայրատատես և եղեռնալուր. և աստուստ և անդուստ բնաւին բորբոքմամբք մահաբեր երկամբք վնասեալ, ոչ միով իւիք տեսան՟ 'ի գործ ընտրութե՟ քեզ պիտանացու տո՟րդ բոլորից։ Ողբամ զորովայնն, որ երկնեացն զիս. աշխարեմ զստինսն՝ որ դիեցուցին։ Ընդէ՞ր ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթինն ծծեցի. և զիարդ ոչ դառնութիւն ինձ ընդ քաղցրութե՟ն ջամբեալ մատուցաւ։ Օի եթէ ես ինձէն անձին իմում՝ դժնեայ դատախազ համբարձայ այսքանեօք բանիւք. և ունիմ տակաւին զսուր բարկութեան անխոնարհելի. ո՛վ ոք 'ի յերկրածնաց աստի զիս ողոքեսցէ։ Օ՜մխայսաստկեցից · զբնաւ էու՟իս դատեալ տուժեցից · զհամօրէն զիմաստակարայն զգունդ գանեցից · զխոցողացն զինուորութեանց դատախազեցից · զգայականացն գլխաւորութ՟իս կշտամբեցից : Մեղայ ա՟մի՛, յա՟մի ողորմեա՛ գթած · ոչ նոր ինչ գտեր յիս զյանցանացս պարտեաց մառախուղ · այլ նոյն եմ յաւէտ նովին պատահմամբ պարտաւորութ՟բ անկցելի ձործով սխալեալ առաջի քո անփոփոխելի · և դու միայն իսկապէս գթած օրհնեալ մարդասէր, ը՟ աջմէ իմոյս փրկութ՟ն կանխեալ ներողութ՟բ անայլայլելի : Որդ՝ մատո՛ խնամակալ հզօր երկնաւոր բարի՝ ամենից հաստիչ յոչէից, զանհուն զօրութ՟ն իմաստից կայծակն 'ի գործի ազդմանն լեզուիս շարժութ՟ն, առիթ մաքրութ՟ն, յամենուստ զգայականաց գոյաւորու՟եց յիս մասնաւորելոյ՝ քո ձեռակերտից · սոքօք առ 'ի քէն եղելովք և բժշկելովք կրկին հանդերձանօք, անպակաս ձայնիւ՛, անհատ բարբառով քեզ վերընծայել գոհաբանութ՟ի 'ի փառս մեծութ՟ն Հօրդ քո ա՟յ մերոյ յաւիտեանս, ամէն :

Նորին հաւէողէ· Դարձեալ ամբաստանութի̅ւ եւ ապաշխարանք անձին զղջացելոյ, մաղթանօք յաւարտէ ։

ԲԱՆ. ԻԲ.

ԵՒ արդ՝ զո՞րս յայտնեցից · եւ յաղագս ո՞յց նշանակեցից · եւ վ̄ն ո՞րպիսեաց ճառեցից · եւ զո՞րքան ծածկեալս մերկացուցից · եւ կամ վ̄ն որո՞ց խոստովանեցայց ։ Զներկայի՞ցս զոր արդէն ունիմ, թէ՛ զանցելոցն, զոր մ՚թերեցի · զապագայի՞ցն, յորոց կասկածեմ, թէ՛ զբազմաստահ չարժուէ̃ցն, յորոց պղորեցայ · զփո՞քրն ինձ համարեալ՝ որ է ն̄յ մեծ գրեցեալ, թէ՛ զանկերպագրելին չյիշատակելի · զնուա՞զն՝ որ է առաւել, թէ՛ զթեթեւագոյնսն, որ են ծանունք ։ Զհոգեկանա՞ցն կրից կորուսչաց, թէ՛ զմարմնականացն ախտից սպանողաց · զառդրունս հեշտականա՞ցն, թէ՛ զծայրակատար վնասակարութեա̃ցն · զաներեւութի՞ցն, թէ՛ զտեսականացն · զառձեռն հպաւորութի՞ւն, թէ՛ զառ նոյն ինքն շունչ հեռաւորութի ։ Զլայնականն դիւրին խածմո՞ւնս, թէ՛ զերկարաւորն նեղաձգութի̃ · զխորութե̃ն զանչափութիւն, թէ զամենածախն յայտնատեսիլ · զյորձնագլուխն սրունկութի, թէ զառոյգութեն անբժշկութի · զպարարումն չարին մարմնովս, թէ զամլիկն բարւոյն հոգւովս · զխնամոյն հանդիսանալ յոչ ախորժելիսն ա՟յ, թէ զբռնադատութեն տուաւմբ ձգելն ՚ի նոյն ՚ի մոլեգնութի · զառ ՚ի մահն մեղաց, թէ զընդունայնութեն կարծեաց ։ Արդարև ոչ կամաւ խելագար զերծեալ ՚ի ձորձոյ՝ զառականացս տեսիլ, յանդիմանեցի՝ զընդդէմն գործեալ իմաստնոյն, որ՝ թէ հանձարեղքն վերարկեսցեն զամօթս իւրեանց ։ Օտարացեալս ՚ի կրօնից · հեռացեալս ՚ի կարգաց · ՚ի սրբութե անսուրբ · ՚ի կուսութե անմաքուր · յարդարութե ամբարիշտ · ՚ի բարեպաշտութե վնասապարտ · բերանովս մերձ եմ առ ստացօղն, և հեռի երիկամամբք · շրթամբքս պատուամատոյց ըստ մարգարէին, այլ ոչ եթէ սրտիւ ։ Եւ եթէ պարտ է զքստմնելիսն ասել աստանօր · չարքան զտան ջանան յանդգնութի · իբր զուր իմն պաշտօնատարս ա՟յ · ՚ի միտս անկայունս եր կեակ ձմնապարհաւ մահու վարանեալս ։ Զանամ և ոչինչ օգտիմ · անդիմ՝ և ո՛չ հասանեմ· փութամ՝ և ո՛չ ժամանեմ· անձկամ՝ և ո՛չ տեսանեմ· փափաքեմ՝ և ո՛չ հանդիպիմ· կարօտիմ և ո՛չ պատահիմ· ունիմ զա՟մ՝ երկրի, և եմ պատգամաւոր աղօթանուէր ա՟մ աշխարհի ։ Այլ թո՛ղ զբաղումն զայսոսիկ բարերար, և մի՛ ունիցիս· դիւրինք են քեզ զասոյն եղծանել· քան ինձ տաժանաւորս աջով նկարել· վ՟ այնորիկ գրեցի առանց խնայելոյ· զի դու առատապէս ջնջեսցես օրհնեալ ։ Որ վ՟ մեր մեղաւորացս երկայնամիտ անուանեցար ըստ մաղթանաց բանի հեծութե՟ սրտի եզրի երջանկի· յոյժ նեղեալ անձն, և ձանձրացեալ ոգի բանին յիշատակաւ, որ զայն պատմէ· յա՟մ կրից մահացուցանողաց վտանգեալ, անկեալ ՚ի վիհ դարշութե՟ մեղաց՝ անդնդականաց ապականութեց· քանզի չհաւատամ, թէ լսես իսկ ինձ ըստ յոբայ ձայնին ։ Արդ՝ ես ինձէն ինքնադսրով անձնադատ գերիս կամաւորապէս մատն եղեալ բնութեա՟ արգելի փակեցի կնքեցի առ յինէն ա՟մ մասանցս զկենաց հնար· զի ՚ի փրկութե՟ մերօք կամելոյս կրկին մեծացիս դողեալ ։ Եւ՛ քանզի ՚ի մարգարէն բարւոք խրատեալ փորձ գտցուք, մաղթել ընդ նմին հոգւով քո երգեալ յուսով հաստատնով՝ ի քեզ ապաստանեալ. առէք ընդ ձեզ բանս, ասէ ովսէէ. և դարձարուք առ տ՟ր ա՟ծ ձեր. և ասացէք նմա. կարող ես թողուլ զմեղս. զի ընդունիցիք զբարիս, և վայելեսցեն՝ ի բարութեան անձինք ձեր: Ահա ա՟ծ խոստեցաւ, և ո՞վ է որ ո՛չ լու՛իցէ. Նոյն ինքն վկայեաց, և ո՞վ է որ ո՛չ հաւատասցէ: Արդ՝ այսօրիկ վճիռ պաշտելի. նու՛իրեալ պայման. սահման նոյնագոյ. կենաց աւետիս. կէտ տէրունի. դուռն բարութեան. ախոփանաց հրաւէր. ճշգրիտ պատկեր. աննստգիւտ գանձ. անմոռաց յիշատակ: Այսու առ սոյն և ես հաւատ ընկալեալ՝ աստուած վկայեմ սմին ընդ մարգարէին. կարող ես յա՟մի թողուլ զմեղանս բազմաբեղունս. և ես զօրասցիս կրկին բարձրացեալ առ ամենաթշուառ կործանեալ հոգիս: Զա՟մի իշխես, ա՟մի բաւես. ա՟մ ուրեք հասանես. ամենից բռնութեանց յաղթես. զա՟մ կարծրունի փշրես. զա՟մ ընդդիմահար վանես. զա՟մ խստութ՟ի վատնես. զա՟մ սրացեալ ընդոտնես. զա՟մ դառինս անուշես. զա՟մ դժուարամոքելիս քաղցրացուցանես · զն՟մ զպարտս շնորհես · զն՟մ յանցանս թողուս ։ Կարօղ ես զօրաւոր, հզօր, հնարաւոր, ամենարուեստ՝ զամենեցուն զմեղս ընկղմել՝ և չքաւորել բառնալ 'ի միջոյ իբր զձաձանց փոքու կայծական՝ սահմանեալ 'ի չափ ոչէից՝ անկեալ ընկլուզեալ կորուսեալ 'ի տիեզերատարածն ծովու ։ Որդ՝ բանի՛ւ մաղթանաց վերծանողաց այսմ մատենի ողորմեա՛ վ՟ն խաչի և չարչարանաց մահու որդւոյ քոյ հա՛յր գթուն ։ Սկիզբն առաքողի ողջերգութե՟ ձայնի այսմ արտօսրածին նու՛ագի, որ զայս դեղ փրկութե՟ կենաց մեզ յարմարեցոյց, եղիցի բժշկեալ յանուն քո հզօր ։ Որ հետս ելից խոստովանութե՟ մեզ նկատեցոյց այսու պայմանաւ պատշաճականաւ, լիցի անարատ յիւրոցն պարտեաց ։ Որ զհպարտութե՟ն թէև հարթել մեզ վարդապետեաց 'ի սոյն կանոնի կենաց պատգամի, եղիցի զերծեալ 'ի չար կապանաց մահու արկածից սկզբնականաց՝ վերջնոյ՝ և միջնոց, երրորդութե՟դ բարեգործեալ 'ի նորոգումն լուսաւորութե՟ ։ ընդ որում և մեք գրեսցուք երջանիկ գտեալ ընդ սմին ։

Նորին հանգոյն. Պատրաստեալ ամենապատուութ՟ն և սրբազան մեղաւորի զանձնէ, խոստովանութ՟ն եաղմապատին յանցանաց։

ԲԱ՛Ն. ԽԵ.

Եւ արդ՝ յոյս բարեաց տնկեալ 'ի սրտի անձին իմ կործանեալ. և զօտեաւն հաւատոյ պնդեալ զերիկամանցդ երկակի մասունս զկրկնասլըտոր խորհրդոցդ զցանկականիդ գործարան. Խոստովան լեր բարերարին ա՟յ, զմտացդ՝ իբրև զգործոց. զխորհրդոցդ՝ իբրև զլրութե՟ց. զանտեսիցն՝ իբրև զյայտնելոց. զորտիդ ծածկութիցդ՝ իբրև զբարբառումն ձայնից. զակնարկուե՟ցն՝ իբրև զարդիւնականցն մեղանաց. զազդել շրթանցդ՝ իբրև 'ի գլուխ ելելոց չարի. զոտիցդ հետոց՝ իբրև զպատուէրանաւն ա՟յ վազողաց. զձեռացդ ձգումն առ ցասումն՝ իբրև 'ի հեղումն արեան գործողի. զծիծաղելն ընաւին՝ իբրև զկամաւորական լքումն շնորհի. զերդմնականն, որ թէ 'ի հանդէպս թէ 'ի տարադէպս՝ իբր զգործակցութ՟ի խաբողին. զամբարտաւանութ՟ին իբրև զհին կործանիչ նախաստեղծին բարձրութ՟ե. զորտին նեղութ՟ի իբրև զթերութ՟ի հաւատոց ․ զմեղկութ՟ին իբրև զպարտութ՟ի զօրաւորին ընդուէ ․ զտրտունջն առ վտանգս կրիցն իբրև զուրացութ՟ի ուխտին, որ առ տ՟րն ․ զապարասանութ՟ին իբրև զթոռն իմն անդթութ՟են ․ զամբարհաւաճութ՟ին իբր ոչէկիւք առ վեհսն գոռոզութ՟ե ․ զհպարտութ՟ին իբր զկամաւոր հարազատ գտողին չարեաց ։ Զակամայիցն ընդ կամաւորացն ․ զբռնացելոցն ընդ հաւանականացն ․ զեկամտիցն ընդ բնաւորականացն ․ զանօրէնութ՟իսն ընդ աս՟ծութ՟են ․ զփոքունսն ընդ սաստկագունիցն ․ զնուաղունսն ընդ յաւելիցն ։ Զանճառիցն իմոց իբրև զճառելեաց գիտողին ․ զանգրելոցն մնասուց իբրև զնկարելոց տեսողին 'ի յարձան մագնեստիս վիմի ․ զթեթևագունիցն առ խտիր մնաց իբր զստուար ծանրութ՟ի բեռանց ․ զխնդիր չափոյ ծածկելոցն իբր զճշգրտով պահանջումն սատերն սակի 'ի բերանոյ կիտին կորիւնի չորեքդրամեան կշռութ՟ն ․ զանդնդականայն գործոց իբր 'ի յականջս ո՟յ արագ ժամանելոց ։ Զայսոսիկ յաճախեա՛ կուտեա՛ կրկին յանձնառութ՟ վերստին պատմեալ սստանօր մեծաւ հեծութ՟ե զչէոյն իբրև զեղելոց․ ընծայեալ ա՟յ զպարտութ՟ի վանեցեալ անձինդ․ զի ընկալցիս ՚ի փոխատուէն զշնորհօք թողութ՟ի պարտուց մեղաւորին, զոր տ՟րն արդարացոյց․ և հրաշափառաւա՟մ հռչակեաց ամենապատիկ ներբողիւ՛ կրկնեալ զգօվեստ ողջման, քան զպարսաւանս մեղացն։ Նարդեա՛ և գիզեա՛ անձինդ մեղապարտի բամբասանս յոքունս, զքոյն խոհերս բազմամասնեայս՝ անձն իմ՝ կշտամբեալ յորինախնթանդ բանիւ․ զչարութ՟ին, զանօրէնութ՟ին, զվքիպու՟ին, զաւ ՚ի մարտին հանդիսէ փախուստ․ զպարտու՟ին, զմոլեգնու՟ին, զամբարշտու՟ին, զապշու՟ին, զթմբրու՟ին, զքունն արթնական, զաւ ՚ի ընթացսն զնիրհում՟ն, զխորհուրդն օտարոտի, զբանիցն նանրու՟ի, զպագրու՟են հաճու՟ի, զյամենալն ՚ի նմին, զփափաքելն ա՟յ ատելեացն, զաներկիւղու՟ին, զանսաստութ՟ին, զանհարթու՟ին, զթերու՟ին, զթիւրութ՟ին, զլուծութ՟ին, զձիգութ՟ին, զանկապ արձակում՟ն։ Օծիծաղականան, զվրնջողականան, զկատակերգականան, զգայթագղականան, զպատրողականան․ զանդէպ քաջութիւն,

թիւն, զանյարմար մարտան, զաւանյ օրէնի արիւնն, զխեղդամունս հոգւոյն, զտատանողականն զերկչոտութիւն, զբազմատեղնեան ձիւղս զրահետականս, զանպատկառ փառաքմունան, զգժտութիւն, զգժդմնութիւն, զանդատ ատելութիւն, զմարմնաչմունան դիւրըմբռնողականս, զփոքունցն զանկշռութիւն, զխոստմանցն դրժողութիւն, զուխտիցն մոռացութիւն, զնմանեացն այլակերպութիւն, զկեղծեացն քողարկութիւն, զփառամոլութեն մոլորութիւն, զյօնիցն յաւակնութիւն, զապիրատութիւն, զինքնասիրութիւն, զնախագահիցն տենչուն, զհատուցանելն եղեռնականացն, զնոցինան զանշահ աղձատանան, զվայրապար բերմունան, զընթացակցութիւն խորամանկութեան բանսարկուին, զբանին սերմնակաթուն, զվաճառումն կենացն և գնոց սատակմանն, զկորուստ աւանդիցն, զհայրենեացն զծախս, զկապարանն յգողական. զփոկով լծոյ երկնքոյ անխզելի ըմբռնմամբ զանօրէնութիւն, զյարաթաթաւ ողմաքնակութիւն, զլքումն լաւացն, զընթադրութիւն անկարծիցն, զկնի դարձին առ նոյն դարձ դաժանական։ Օնորոգ մտացն, զօտար խորհրդոցն, զանկայուն կամացն, զհաշման հագագին, զէութ՟ի ընչոյն, զևսն քան զսահման կանոնացն դրութ՟ե, զիշխանականին զամենասփիւռ բացարձակու՟ի. և զոր չէ ճառելի, և կ՟մ գրելի, և կ՟մ պատմելի, և կ՟մ յերեսս դիմաց բերելի։ Եւ արդ՝ զիա՛րդ բժշկեսցիս անձն իմեղկելի՝ 'ի յայսքանեաց տիգաց խոցոտեալ, բարձեալ թողեալ այր մի տարագիր անողջանալի ըստ մարգարէին. քանզի մի 'ի վերագրելոցդ բաւականապէս զորէ սատակման, թո՛ղ թէ այսքան դառք ասպականողաց դժնեից դահճաց շուրջ պաշարողաց։ Մանաւանդ զի ո՛չ այսու ևեթ նմանաքրութ՟ե կշռի տարացոյց տարժանեցելոյս. այլ զո՞ր օրինակ անթիւ բազմութ՟ի կայտառաց կարճաց խայթողականաց 'ի ստորին մասունս ծայրից տտնոցն զօրհասական թոյնս բերելոց, և 'ի յաման մաշկեղէն արկեալ ամփոփէ զելիցն շաւիղ կապարանին շրջափակութ՟ե, ցուցանի արտաքուստ բարիոք, իսկ 'ի ներքուստ համբարք չարի, և պահեստ կորստեան, և կոյտ կսկծման, և գոր-

ծոծօնեայք սատակման, և մշակք մահու ։ Արդ՝ այսոքիկ են ամբարեալքն քո անօրէնութեն տաժանեաց թշուառաքիրտն թոշակք՝ անձն պարտական կրկին սատակման. որ կամաւորաբար ընկալար 'ի քեզ, զոր թշնամին սերմանեաց 'ի վ̃ր ցորենոյն յագարակի Տիս. Ո՜վ այր անմաքուր ամբարիշտ և ծոյլ, բնաւին ատեցեալ, սիրող մտացդ ախորժմամբ զլցեալսն ա̃մ անառակութե̃. և զոր առաքեալն ցուցանէ զթի̂ւս բանիցն սարսափելեացն կշտամբողաց. աստուած սկսեալ մինչև 'ի կատար կանոնի այնր պայմանի. և որ հասեալ են, ասէ, յո̃յ իրաւանցն վերայ. եթէ ովք զայսպիսիսն գործեն, և կամ կամակից են, արժանի են մահու ։ Արդ՝ ես ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հատուցման կորստեան սատակման 'ի մահ դատապարտութե̃ ։ Այլ անխայեմ յիս ողորմութե̃, բարեգութ, կենդանի, հզօր, կամարար, կարող, հնարաւոր, փրկիչ իմ յ̃ս ք̃ս, օրհնեալ յաւիտեանս, ամէն ։

Ն.-

՟Լորէն հաճոյք · Աստուածք անջէն , յաղագս առ ածայէն պարգեւան ապաշնորհ լինելոյ :

ԲԱ՟Ն · ԽՕ :

Արդ՝ վրիպեալս ես յաւէտ ամենապատիր, մինչ դժնեայ վայրենաբարոյ անձամբ անձին մահու կշտամբիչ · արածօղս զերամակս զազիրս վայրագասունս խոզից արօտականաց դարշուն մեղաց · նախատ վարձկանութեց : Ջոլի՛րս տածօղական զհօրանս ուլուցն ամայաբնակաց 'ի վրանս հովուացն՝ ըստ երգոյն երգոց առիս առակի · որ ոչ իսկ ծանեայ զիս երբէք դիտել, թէ յո՞ւր և յո՞ւր արատկեր , և վա՜ ո՞յր դոյացայ : Ահա 'ի կրոտս տանողականս կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց ըստ ձևոյ հրեշտակի կառուցար իբր 'ի թուխս թևոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց՝ յաշխարհն հայրենական հայել : Ո՛վ յիմար, զիա՛րդ քեզէն կորացար յերկիր, զաստեացս մինչ հոդացեալ դիպու՛ածս · ընդ ցիռս անապատականս համարեցար : Իբր զձիրագ բազմոբերանեան 'ի յաշտանակի մարմնոյ հատեսցաւ գլխոյդ բոլորումն. զի և այսու ՚ի յօրինակէն շնորհէ մի՛ օտարասցիս զա̄ծ տեսանել, և զնմայականայն իմաստասիրել. բանականութեն յարգանօք կրկին ճոխացար. զի զյաղթանակ բարեմասնութեն, որ առ քեզ եղեն, անարգել լեզուաւ խօսեսցիս։ Զեւինդ հաստատմամբ յարմարոստեան մատանցդ շառաւեղօք զգործնականայն տնօրինել զտնտեսութի, իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ աջոյն ա̄յ, ա̄ծ կոչեցար։ Երից հարիւրոց և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար, յարեալ ՚ի քեզ է̄ նախին ՚ի նոյն և պատշաճական մասունս չափոց ազդողականաց հինգ զգայութեց. զի մի՛ և երևելիդ նիւթականութի քումդ տեսութե մնայցդ դիտման անդաստ եղիցի. զի ոմանք ստուարք են և զօրաւորք. և այլք փոքունք են և սխտանիք. կէսք կարծրակերպք և ազդողականք. են և գողտրականք և պատուճականագոյնք. դարձեալ կարևորք և պատկառելիք։ Իսկ թարգմանութիք սոցին տեսութե ՚ի քեզ են նկարագրեալ իբր յարձանի անջնջականի անձն իմ՝ եղկելի. ոհ և տարր ժամանակց և շարունակ հետևման աւուրցն առ պսակ ամին · իբր կանոնաւ իմիք սահմանեալ մասամբքդ անախսալ և անայլայլելի պահեսցի · Դարձեալ այլ օրինակ հոգևորական, որ զսիրոյն յօդուած շաղկապէ 'ի մի առ եկեղեցի, քև խորհրդածի · իբր զի առանց ընաւից զուգամասնութե կապակցել ըծոյլ հաւանականաւ զվեհն ընդ փոքուն, մնասեալ է հաստուածոյն անարատութին յանուն քնի ժողովելոյն · ոչ 'ի հատուածս և 'ի նուազութի մւոյ յանդամոցս անարգացս պատուատելոցս 'ի մարմնի, կրճատեալ իմն է յօրինուած կազմուե մարդոյդ քում սենեկի զգայականի, և շրջեալ է ընտանուի պատկերին յանարգ փոփոխութի · Դու՛ արդ՝ այսպիսեօք, և ևս բազմօք անզուգական հրաշակերտութբ եղական պատկեր այ՝ կշտամբէ իսպառ ոգի իմ գերի : Դու թէպէտ յառաջին նմանութէն կողոպտեալ գտար պատուիրանին յանցաւորութբ 'ի դրախտին կենաց · այլ աւազանին լուսազարդ շնորհիւն զհոգւոյն փչումն առեալ, և նմանութի ես կերպարանին : Դու արդ՝ ընդէր կորուսեր զփառսն զերկնաւորս՝ իբր ըզնախաստեղծն երբեմն զվիճակն երկբաւոր յաղթին դատաստանին։ Ընդէ՞ր փակեցեր քեզէն քեզ զերկին, և զվերելիցն դուռն աղխեցեր։ Ընդէ՞ր խառնեցեր ընդ ջրոյն մաքրութե զախտ արտասուացդ տարժանաւորութե։ Ընդէ՞ր զլուացեալ զձորձ վերարկուին գարշելի գործովք զազրացուցեր։ Զի՞մ զեղեալ հանդերձին մեղաց պատմուճան անառակութե վարուք քեզ արկեր։ Ընդէ՞ր զտանոգացդ ոտից որդութի ճանապարհաւն ժանգիւ աղտեղեցեր։ Ընդէ՞ր կրկնեցեր իրաւադատին զուխտազանցութի հին պատուիրանին։ Ընդէ՞ր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց՝ իբր զադամ 'ի ծառոյն կենաց։ Ընդէ՞ր նենգեցեր քեզէն քո կամաւ զանստուէր լուսոյն յարակայութի։ Ընդէ՞ր պատկառանք անհամարձակելիք քոյին դիմացդ նպատեցեր։ Ընդէ՞ր զինեցար ընդդէմ քոյ ներհակ, ո՞վ ընդունարան խելագարութե։ Ընդէ՞ր որսացար 'ի ծուղակ մահու, թողեալ զարահետն փառահութե։ Ընդէ՞ր կարթիւ պատրանաց ածար հաղորդ մարմնոյ կենարարին։ Այլ վերստին յուսացեալ 'ի նա՝ կարդամ նմա. ապաւէն և լոյս. քաւիչ. նորոգիչ. փրկիչ. կեցուցիչ, և կենդանարար. ողորմած . խնամօղ . մարդասէր . և անոխակալ . բազմագութ . օրհնեալ յաւիտեանս , ամէն :

Նորին հեղողի : Հայցուած թողութեան պարտեաց անձին , խնդրելով ներումն պարտեացն ընկերին : Որանգամայն և ստգտանօք անձին , ոչ ուրացաւ յորդորայն չարեն՝ ոչ 'ի մահուան , և ոչ 'ի կենցաղոյս հայեցեալ վաճառք :

ԲԱՆ . ԾԱ .

Եւ մի՛ զի սպասեալ ոգւոյս թևօք 'ի թի՛ւս անբաւից ծննդոց մարդկան՝ եդի 'ի կշիռս իմանալեացս միոյ , ո՛չ գտի զոք համեմատ ինձ պարտաւոր . և առ այս զԴաւթեան սաղմոսին զբանն 'ի յերգ ինձ առից դառն կշտամբութեան դաւազանաւոր գործավար : Ո՞վ յարիցէ ընդ իս 'ի չարիս հաւասարել յանօրէնութի՛ս : Եւ քանզի այս բ̃ն սմին մասին կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այլս մահու , և ես զկայեմ կրկին հաստատեալ , առ այսր իրաւունս գրեմ , ինձ միայնոյ վերծանել խօսքս , քան իմոյս բանիւ՛ բազմաց տարադրիլ . թերևս սովիմբ առ այսու արդեօք և ինձ շնորհեսցես շնորհօղիս զպարտիս իմոցն ։ Այլ արդ՝ զի՞նչ քեզ աղերս հաճոյական ՚ի յայսմ և ՚ի սոյն, և ՚ի ծուխս անուշից ընդունելի խնկոց մատուցից գովեալ թագաւոր երկնաւոր քո՛, եթէ ոչ զառ ՚ի յինէն անիծեալն օրհնել մաղթեմ. զկապեալն արձակել. ազատել զդատապարտե՛լն. բարեգործել զնզովեալն. պսակել զթշնամանեալն. սփոփել զտրտմեցեալն. դարմանել զխորտակեալն. խնամել զտարտուցեալն. պատսպարել զնենգե՛լն. զվիրաւորեալն ՚ի մարմին և յոգի բժշկել ։ Եթէ օրհնուե՟ բանի՛ւ առ ոք մատուցայց, լսի՞ցես. իսկ եթէ անիծիւք, մի՛ հայեսցիս ը՟ունել գթած ։ Այս տառապե՛լս ամենաթշուառ ՚ի վերջին սպասաւորութե՟ մաղթանաց այսր մատենի ՚ի բովանդակ մասաց շնորհեսցի իմոցն՝ փակեալ առ ՚ի քէն զանիծիցն դժնդակ ըղձիցն չարաշուք ձայն. և դժնէից նենգողացն իմոց ընդ բարիսն ՚ի բոլոր սրտէ հաշտութե՟ արգահատեցի. վ՟ որոց և ծունր պաղատանաց կրկնեցի. ո՞րչափ դու ինձ ահա յաւելեալ առաւել ողորմեսցիս ըստ քոյդ մեծութե՟ գովեալ խնամակալ, կեանքդ մահացուիս, հզօրդ տկարիս, ամենա կարդ վարանելոյ , իմաստութեդ աղբիւր յիմարիս և թմբրեցելոյս ։ Քանզի յաւէտ սխալեալ անկայ իբրև զլօզակ մթային ոչ ընդելական 'ի խաղս մահու անզգայապէս ․ չիմացայ զկորուստն ․ չգիտացի զորոգայթն ․ չտեսի զմբռնօղ որոգայն ծածուկ մենքենայս ․ չկարծեցի զխաբուսն կերպարանաց կեղծաւոր վարմինն ․ չնկատեցի զգայթագղուին շուրջանակի ․ չշօշափեցի զպատանդիչ զցանցարկ կարթին ․ ժամանեցին ինձ չարիք , և ես ոչ կարացի ձանաչել ըստ սաղմոսողին ։ Քանզի ոչ իմաստնակի ումեմն արտաքնոյ բարուք թուեցաւ չար տաել զմահ , առ չիմանալոյն պատճառի, և ես վկայեմ իմովս բանիւ ․ քանզի իբրև զանզգայ պաշտօնս անսանոց մեռանիմք, և ոչ զարհուրիմք, կորնչիմք , և ոչ հիանամք ․ թաղեցեալ լինիմք , և ոչ խոնարհիմք ․ տարադրիմք, և ոչ տագնապիմք ․ եղծանիմք , և ոչ զղջանամք ․ մաշիմք , և ոչ մտառեմք ․ պկսիմք , և ոչ պատրաստիմք ․ դնամք, և ոչ զգուշանամք ․ գերիմք , և ոչ ևս զգամք ։ Իսկ հանդիստ տաել երջանկին յօբայ զվախճան մարդոյ , և ես խոստովանիմ զայն ըն սրբոյն , եթէ ոչ ունէի զբեռն աշխատութե՟ մահացու գործոց ըստանձնել։ Մանաւանդ զի որոգայթն գաղտնի, եւ հնարադիրն աներեւակի. տարր ժամանակիս յանէից, անցեալն անյայտ, եւ ապառնին կարծողական. ես անհամբեր, եւ բնութիւն թերահաւատ. տուրք անհաստատուք, եւ միտք ցնդեալք. կիրք հարկաւորք, եւ բարք անժուժկալք. մարմին մեղսամակարդ, եւ յօժարութիւն երկրասէր. դիմամարտութի՟ տնկակից, եւ խառնութի՟ ներհակական. բնակութի՟ կաւեղէն, եւ անձրեւք ուժգնակիք. կարիք անթուելիք, եւ պատահարք ամենադրաւք. միտք չարախնամք, եւ տենչմունք բարիատեացք. կեանք առօրեայք, եւ զբաղք սակաւաւորք. խաբմունք յիմարութե՟, եւ խաղալիք տղայականք. աշխատութի՟ք ընդունայնք, եւ վայելմունք երազականք. համբաւք ոչնչից, եւ սպահեստք հողմոց. նմանութի՟ք ստուերայց, եւ կերպարանք ծիծաղելիք։ Քանզի իբրեւ եկն եհաս պատուիրանն ըստ պօղոսեան բանին, անպատրաստ գտեալ զիս ինքեան, մեղքն կենդանացան յանդիմանեալ յարդարութեցն, եւ ես մահացայ կենդանին.

և կենդանանացայ կուսատեանն ։ Գողացան օտարք չարին գումարք զստացուած նորոխ իմաստից՝ ըստ գրոյն կամ խաբանութեն․ որով եկն եհաս իսկոյն աստանօր իմաստութեն ինձ նուաղանալ ըստ առակողին․ և առաւելուլ ոչ բարւոյ ցանկութին ։ Ոչ յառեցի զակն ուշոյս 'ի գլուխն իմ կենացքս, որով ընդ ուղիղն հետևեցայց ։ Քանզի կամելով ուժգին ընթանալ՝ ընկլայ սաստկապէս․ յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի․ 'ի մեծագոյնն ամբառնալ՝ աստուստ գլորեցայ․ յերկնայինն ուղւոյն՝ անդընդոց մատնեցայ․ 'ի զգուշականն առաւել՝ յաւէտ վնասեցայ․ յանարատն զնահիլ՝ մանր խոտորակեցայ․ կարծելով ըզահեակն մրցիլ՝ յաջն գլթեցի․ 'ի զերկրորդն խուզել՝ զնախնին կորուսի․ 'ի խնդիր սակաւուն՝ 'ի կարևորացն զրկեցայ․ 'ի յուխտին պահել՝ դաշինն դրժեցի․ առ ամբողջութեն կարիլ՝ կորուսի չև գտի․ 'ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ ։ Այլ ես ինքն ինձէն տանջեալ՝ չարաչար դատախազ անձին կարգեցի ։ Յորոց փրկել զմատնեալ դերիս դու միայն զօրեսցես կենաց մատուցեալ զընծայեալս մահու զհոգիս · զի դու միայն տ՟ր յմ՟ ճանաչիս բարերար · անսահման փառօք ընդ հօր և հոգւոյդ սրբոյ օրհնեալ յաւիտեանս , ամէն ։

Նորին հանգոյն · Պարզեալ ամբաստանութե՟ ի ստգտանս անձին , յաղագս յանցուածոց , մաղթանօք թողութե՟ ։

ԲԱՆ · ԾԸ ։

ՈՎ զառիթմն մահու դիպո՛ւածս դժոխարմատ ծառոյս դառնութե՟ պտուղք · ընտանիք թշնամիք · հարազատք հակառակք · և որդիք դաւաճանողք , ստորագրեցելովք մասամբքդ նշանակեցից · գրեալ յանուանէ · որ են այսոքիկ ։ Սիրտս նանրախորհուրդ · բերանս չարախօս · ակնս յայրատատես · ականջս վրիպալուր · ձեռքս մահաձիգ · երիկամունքս անփորձ · ոտնս մոլորաշաւիղ · ընթացքս աներկիւղ · հետք խոտորնակ · շունչք ծխախառն · գնացք խաւարայինս · գոյութ՟ի լերդիս վիմական ։ Խորհուրդ ծորեալ · կամք անկայուն · չարս անփոփոխ · բարեմանութ՟ի սասանեալ · անձն տարադէր · աւանդ վաճառեալ ։ Պաղան վիրաւոր · Թռչուն նետահար · փախստական քարայծ · ըմբռնեցեալ փաստապարտ · աւազակ ծովակուր · զինուոր նենգաւոր · մարտիկ անպատրաստ · սպառազէն անժուժկալ · միակ հեղձացեալ ։ Աղօթական անխորախոյս · բեմական ստորնաքարշ · քահանայ անկնդրուկ · օրինական աննուէր · դպիր կշտամբեալ ։ Իմաստակ խելագար · ճարտասան անճոռնի · կերպ անպատկառ · դէմք անամօթ · երեսք լլրշեալ · գոյն անհամբոյր · տխպ տմարդի · դեղ ծանակեալ ։ Խորտիկ խանդարեալ · ճաշակ գարշեցեալ · այգի գաղձնաւոր · որթ որդնահար · պարտէզ փշաբեր · հասկ ուտճահալ · մեղր ՚ի մկանց ճարակեալ · անպատսպար անկեալ ։ Անապարծ յուսահատ · անհամոզելի նզով · անհաշտական բաժանեալ · ունայնաբան շաղակրատ · պաճարամիտ գոռոզ · անսանորէն ապիրատ · դժոխային ագահ · աներասան յանդուգն ։ Աողեգնութ̃ի անա̃ծ · ձեռնաձգութ̃ի սպանօղ · տատասկացան երկրագործ · երջանկութ̃ի եղկելի · մեծութ̃ի վատթարեալ ·

վայելչու՟ն անշքեալ․ կարողու՟ն տկարացեալ․ բարձրութ՟ի խոնարհեալ․ փառաւորութ՟ի ընդոտնեալ․ պատուիրանազանցութ՟ի յարակայ․ սխալանք ինքնակամ։ Վաստակարար կամակոր․ խորհրդակից նենգաւոր․ բարեկամ հաստուածել․ հազարապետ գազամիտ․ մերձաւոր կծծի․ բաշխող ժլատ․ վերատեսուչ կարկամ։ Ոգի ախտակիր․ իղձք անսէր․ բարք ատեցող․ աղիք անդթականք․ գնացք անխոհեմ․ աներեւոյթք փնտռեալք․ ծածուկք անխծեալք․ գիրուածք թշնամանեալք։ Վաճառական վատնիչ․ շահարար շուայտեալ․ պաշտօնեայ արբեցող․ գանձուց պահիկան երկմիտ․ պատգամաւոր բանսարկու․ դռնապան ընէած։ Աղքատ հպարտ․ մեծատուն ժխտող։ Դիւանապետ անօրէն․ պահապան մատնիչ․ բնակակից չարախօս․ սուրհանդակ անժաման․ թղթաբեր պարտաւոր․ առաքեալ խռովարար․ միջնորդ անիմաստ։ Արքայ արտալած․ թագաւոր թարմատար․ կայսր ոգեկործան․ իշխան տիրադաւ․ զօրավար զրկող․ դատաւոր ակնառու․ ռամիկ ինքնագործ։

Նախատողի ծաղր․ սիրելւոյ աշխար․ բանադրի դարուլ․ յանդիմանչի դատախազութի ։ Քանզի և 'ի վեհագունիցդ կոչմանց էր ուրեք արդեօք՝ զի էի․ իսկ 'ի վատթարականացդ մասանց եկն երբեմն եհաս՝ զի եղէ ։ Արդ՝ այսքան վնասակարութիք խարդախութեց յաճախագունից ․ յորոց յոմանց խաբեցայ իբրև զյիմար ․ և յոմանց տիրեցայ իբրև զտկար՝ կամաւ մատնել զիս ինքն մահու ։ Արդ՝ զո՞րս 'ի վերադրելոցդ մասանց՝ քեզ ատելեաց , և իմ կորուսչաց 'ի սպաս պաշտաման քեզ ընծայեցից ․ զո՞րպիսիս ապականութե պարագրեալս ամենամբդ․ քոյ մեծութե հանդէպ կացուցից ։ Ա՛հ կամ ո՞րքանեօք երկայնմտութք համբերեսցես այսքանեաց պարտուց ․ ո՞րքան ներես ․ ո՞րպ լռեսցես ․ զիա՞րդ իսկ անսայցես ․ ի՞բր ոչ մատնեսցես հարուածոյ գանից զարժանիս սատակման մահու ։ Արդ՝ այսոցիկ աններելի մթութեց հոգւոց խաւարի ողորմութ լուսոյ քոյ պատահեսցես բժշկել , քաւել , և կենագործել՝ զօրեղութի անյաղթարելի ,

և քեզ փառք յաւիտ , ամէն ։

Ն

՚Ի սորին հաճողի. Ամբաստանութիւն և ապգտանք անձին, յաղագս յողդողդ ընելոյ 'ի բարիս. և յետ զղջանալոյն 'ի մեղաց՝ անդրէն 'ի նոյնս գլորելոյ ։

ԲԱ՛Ն. ՀԱ.

ԱՅՍ ես անպիտանս յա̃մի, և որքա̀ն բան զօրէ՝ պարսաւեալս· որ մինչդեռ արթունս եմ, նիրհեմ· մինչդեռ զգաստ երևիմ՝ թմբրիմ· 'ի բարեպաշտելս իմում՝ գայթագղիմ· մինչդեռ աղօթեմն՝ և վրիպիմ· 'ի յընթանալս իմում՝ և կասիմ· յարդարանալս իմ՝ և մեղանչեմ։ 'ի խաղաղանալս իմում՝ ամբոխիմ։ Մինչդեռ արշաւեմն՝ առ 'ի յետոյսն հակամիտեմ· 'ի չուելն իմում ընդ կրունկն դառնամ։ Ընդ լուսոյն մասին և խաւար յարեմ· ընդ քաղցրութ̃են ճաշակ օշինդր խառնեմ· ը̃ կուղս բարեացն չարիս հիւսեմ· ընդ կանգնելն և կրկին գլորիմ· ծաղկիմ, և ո՛չ պտղաբերիմ· ասեմ, և ո՛չ առնեմ· խոստանամ, և ո՛չ կատարեմ· ուխտեմ, և ո՛չ վճարեմ· կարկառեմ, և անդրէն ամփոփիմ· ցուցանեմ, և ո՛չ ընծայեմ· մերձեցուցանեմ, և ո՛չ մատուցանեմ· 'ի ճարակել խոցուածոյս անդրէն վիրաւորիմ․ 'ի հաշտեցուցանելն վերստին խռովեմ։ Զուր հանդիսանամ, և իրաւամբք պա՝րտաւորիմ․ գրիմ, և իսկոյն եղծանիմ․ նաւեմ, և 'ի գիծն թուլանամ․ սկսանիմ, և 'ի հանդիստն ոչ ժամանեմ։ Կարգիմ, և դարձեալ սասանիմ․ ընտանիմ, և կրկին հեղում․ շարունակիմ՝ աստ, և անդ 'ի ստորևս հոսիմ․ բարգիմ և անդէն տոչորիմ։ Հիմն արկանեմ, և ոչ գլխաւորեմ․ սակաւ վաստակիմ, և բիւրս վատնեմ․ դոյզն գանձեմ, և անթիւս սպառեմ։ Զայլս խրատեմ, և ես ինքն անփորձեմ․ միշտ ուսանիմ, և երբէք 'ի ճշմարտու՟ն գիտութ՟ն ոչ հասանեմ։ Զչիջեալ չարիսն նոյնչափ արծարծեմ․ սուղ ինչ քաջալերիմ, և առաւելա՟պ լքանիմ․ լարիմ, և իսկ և իսկ առ նմին մեղկիմ․ զայս կարկատեմ, և զայն պատառեմ․ խլեմ զեղիձն, և տատասկ տնկեմ։ Ընդ ամ բառնալն և այսրէն բերիմ․ մտանեմ 'ի բունն աղաւնի, և անտուստ ագռաւ ելանեմ․ գամ սակաւ մի սպիտակ, և սրանամ դառնամ՝ բնաւին սևացեալ։ Ասեմ զիս քեզ դաւանել, և սպանողին նուիրիմ․ ընդ յանդիմա՟ն լինելն և թիկունս դարձուցանեմ։ Մաքրիմ, և այլ մրձոտիմ․ լռեանիմ, և նովին զաղջրանամ․ կերպարանիմ զխաւթին, և գործք զառողջայն կատարեմ․ շրթամբքս ճշմարտեմ, և ստեմ երկամամբք․ աջոյս մատակարարեմ, և ահեակ կողմամբս աւերեմ։ Ընդ երկրագործութեն ցորենոյն որոմն սերմանեմ․ 'ի բարձրագոյն իմաստիցն վայր իջեալ ես ինքն գտանիմ։ Հրեշտականամ յերեսս, և 'ի խորհուրդս դիւանամ․ հաստատիմ 'ի յոյս, և 'ի միտս տատանիմ․ սուտ ձևանամ, և իրօք խոտորիմ․ կեղծաւորիմ արդար, և արդեամբք ամբարշտեմ․ դասիմ 'ի պարս հեզոց, և ընդ այսս կաքաւեմ։ 'Ի մարդկանէ գովիմ, և 'ի տեսողէդ պարսաւիմ․ 'ի հողածնելոյս երանիմ, և յորդւոյն լուսոյ աւաղիմ․ հաճոյանամ յետին ռամկին, և թագաւորիդ մեծի յաչաց ելանեմ։ Ատեան դատաւորին թողեալ, խառնակրօնիցն աղերսեմ․ հերքեալ 'ի վեհիցն, սոսկականացն ապրդիմ․ մարմնոյս արտաքուստ պճնիմ, և անձամբս երփնի՛ ձայնին ճանաչիմ․ հպաւորիմ դաշն հաստատել, և ուխտակորոյս արտաքս մերժիմ։ Այսօր մաքուր հոգեկիր, և վա

ղիւն

զի՛ մոլի խելագար · զտէրունի պատուէրն լքեալ, թելադրութեան օձին հետեւիմ · արհանամ զօրանդ, եւ վատթարագոյնս ընկրկիմ · զծանրութիւն աւուրն բառնամ, եւ 'ի ժամ վարձուն անմասն եղանիմ · 'ի բացուստ ձուամս խօսիմ, եւ 'ի պատասխանատուութեան պահուպանձեալ կարկիմ · 'ի յելս արեւուն հարուստ երեւիմ, եւ ընդ երեկս ունայն գեգերիմ ։ 'Ի յաթոռս ծերոց բազմեալ, եւ խելայեղից կցորդիմ · ննջեմ խելթի՛, եւ արհաւիրօք զարհուրեալ զարթնում · զանդաստանս կամացս չարաչարս հերկեմ ։ Փոյթ խնամով 'ի չարիս · մի՛շտ անսասաւակ որդիս · անդարձ տարագրեալս · անզղջական զառածեալս · անմխիթար տրտմեալս · ինքնագրաւ գերեալս · մահու եւ ապականութեան ծառայեալս · անողոքելի տանջեալս · անփրկելի մատնեցեալս · անպատուաստելի հատուածեալս · անյարծարծելի շիջուցեալս · անկազդուրելի խորտակեալս · անհանդերձելի կործանեալս ։ Այլ եթէ պարտ է զսաստիկն աստա՛նօր ասել անօրինեալս անձին նախատինս · ահա գրեմ, գրեմ, եւ ո՛չ անխայեմ, 'ի խուի՛ս նիւթեալ գեհեննին ։

Ստա-

Աստուա՜ծս նախանձու նորոյս ադամայ երկնայնոյ, ո՜վ և կայենն առաջին հնոյն և հողեղինին· որ ունիմ զբնաւն աստուատ 'ի յանձին զնշանակ ամբաստանութեանս, ո՛չ զշնչոյս տուրևառութ̃ի, այլ զլանիցս կշտամբութ̃ի։ Նա՛ արդ՝ ո՞ւր լիցին փրկութ̃իքն· ուր սկզբնահայրն հաւատոց 'ի յուսահատութ̃են վայրի զանգթութ̃են իմ չարիս կրկնէ· մեծն մարգարէից քարամբք բանից կոշկոծէ· արին բարեփառ աշտէին նիզակաւ 'ի մահ սատակէ· պատկեր ճշմարտին ընդ աքարու համայնիւ՜ ջնջէ· ա̃ծարեալն վեհից յարագողացն վրիժուց մատնէ· մարգարէածին տեսանօղն ը̃ ամաղէկացւոյն առաջի տ̃ն սպանանէ· նախանձաւորն ա̃յ երկնատեղաց բոցուղն վատնէ· բատու՜երին լրումն, և նորոյս սկիզբն՝ հեծանոցին ընտրութբ̃ հոսէ· պետն առաքելոցն ը̃ սափիրայի 'ի կենաց զրաւէ· զարմանալին քննութբ̃ հոգւոյն բուրումն մահու ինձ ընդ կենացն քարոզ խառնէ։ Արդ՝ անաչառք և ինձ՝ կաճառք երջանկացն, և ուժգնութ̃ե հրամանի վերնոյն արի սպառուզէնք· ը̃ հրեշտակացն և մարդիկ· ընդ տիեզերաց երկրի և տարերք · ընդ անզգայսն է շարժողականք · որովք դատեալ միշտ լինիմ տուժիւք լլկանաց՝ յօրինակ և յիշատակ ոսոխալեացն ապագայից · իբր հողմով փոթորկի ալեաց յաւէտ մըրկեալ կենացս վտահութ̃ի մնայ անկայուն 'ի հաստատութեց : Որ եթէ ոք խնամութ̃ք 'ի քննելն առեալ լուզեսցէ զլուղակացն բազմատեսիլ զանազանութ̃ի, զմանունս փոքունս ը̃ մեծամեծացն դասէն, որ առանց թուոց և քանակութե̃ համարոյ թինդս առեալ անբաւ երամոց, եռան զեռան սլանան 'ի մարմինս ծովու, ձկայեացն, և հաստատեսցէ Աշխարհի լինել զասացելոյս բանադրութ̃ի : Ա.յլ դու ինքն օրհնաբանեալ անմահ թագաւոր՝ բարի երկնաւոր մարդասէր քո̃, ո̃վ կենդանացոյ միածին որդի, հզօր, բարձրեալ, անքննին, անձառ, քաւիչ, ահաւոր · սաստեա՛ 'ի ձմեռն ամբոխեալ ալեաց օդոյս ծփանաց · արձանացո՛ զծարաւս մոլեգին շարժման սրտիս խռովութե̃ · ընդոտնեա՛ 'ի սանձս կարգոյ երասանաց ըմբռնման զցնդեալ մտացս վայրագութ̃ի : Ողլեցի խաղաղութ̃ի հրամանաւ մեծիդ ամենավարման քոյս սաստման · սաստկեալ խախանեալ զբազմագլխեան անդամն ուրուականս գաղտնեաց ամօթոյս երկրակենցաղս հինից ։ Գրեսցես աղօթս մշտամատոյցս զայս նորընծայ տառ ողորմաղերս թախծագին ձայնի ողբերգարկութե՟ այսր մատենի ։ Ջա՛ն 'ի խորոց մահուս անդնդոց չքնաղ ապրեցեալ ընդ մարգարէին փրկելոյ · ընկա՛լ զխոստովանութի՟ անձնադատ բանիս 'ի հոտ անուշից · շնորհեալ մխիթար դառնութե՟ վշտաց ուժգին հեծութե՟ տարագիր յուսահատելոյս · և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք , պատի՛ւ , և իշխանութի՟ յաւիտեանս , ամէն ։

*Նորին հանգոյն · Յորդորակ առ աղօթաւորս , թէ պարտ է մշտաւորէ ժամն պշտ՟մ ոչ պարտաւոր լինելն համարել ։

ԲԱՆ · ՀԲ ։

ԱՅԼ ահա ձեզ ասեմ ո՜վ եկեղեցիք միանձանց , և աշակերտութի՟ք կրօնաստանաց · որք մերկամարմինն մատանցդ ձեռօք առ անկեալունի յուսոյն սպարգևաց բարեացն անքաւից ո՟ն զինուորեալք ·

եալք · որոց զայս սեղան համդերձանայ խորտկաց բանից ընծայեցուցի ։ Ընկալարո՛ւք զայս աւանդութի՟ խոստովանութե՟ ՚ի շինուած փրկութե՟ հոգւոց ։ Ջաներո՛ւք սովլիմբ զմարմնոյս պարտուն՟ · յիշեցէ՛ք զմարգարէականն ընդ առաքելականին առեալ մեզ ՚ի խրատ · զի մի՛ պարծեսցի ամ՟ մարմին առաջի այ՟ , և ոչոք է արդարն , և ո՛չ մի ։ Զտէրունականն մի՛ մոռանայք · ՚ի կատարածն իսկ պատուիրանին գոդջի՛ք զձեզ ծառայս անպիտանս · մի՛ եղիցի լինել ձեզ որպէս խաբողին · զգուշացարո՛ւք և գրոյն , թէ կերակուրք նր՟ ընտիրքն ։ Քանզի և ես իսկ , որ զայս նուազութ՟ի մասնաւոր պտղոյ ձեզ ջամբեցուցի , վկայեալ զանձնէ կամաւորական սատդտանք բիւր բամբասանաց անբժշկական մեղանաց , ՚ի սկզբնահայրն սկսե՟լ մինչև ՚ի սպառումն ծննդոց նր՟ կամայականն յանձնառութե՟ հաստեցի եդի զիս ամենայնիդ պարտական չարեաց ։ Ուստի յումեմնէ ոչ պարտաւորէ, և ոչ հաձեցայ · ՚ի յասելն նր՟ անյարմարակա՟ առ այն , որոյ առաջի ո՛չ է արդարանալ մարմնոյ երկրածնի, թէ ո՛չ երբէք շնացայ · ո՛չ պոռնկեցայ · և ո՛չ զաշխարհնիս ինչ համբուրեցի ձաշակս մահու։ Ո՛չ ընդ հատ ինչ յանորէնութ՟է։ Ողջէ՛ նմա ա՟ր ա՟ծ զայսոսիկ, թէեւ ճշմարտի՛ իսկ գրեցաւ, ո՛չ ընթացաւ, որքան թէ գթեայ, 'ի յաւել զանյարմարսն 'ի դիմաց ժողովրդեանն իսրայէլի բանի՟ զաքարիայ, օրհնեալ տ՟ր, եւ մեծացաք • որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան։ Բայց ես քանզի գիտողին ա՟յ մատնեալ եմ դատաստանի • որ զկիրս աներեւութիցն մտաց 'ի կշիռս եդեալ համարի դատել զիս նոքօք ամենիրաւ հատուցմամբք • Ո՛չ կերպարանեցայց տեսողին • ո՛չ կեղծաւորեցայց քննողին • ո՛չ ստեցից զո՛չ գործեցեալսն նկատողին • ո՛չ խաբէութ՟բ ընդ միտ ինչ մտից մեծին • ո՛չ 'ի տեսիլ բարւոյ ցոփութեն զչարս քողարկեցից • ո՛չ 'ի պատկեր ընտանի զայլ կարս երբեք յարգեցից • ո՛չ խենեշացայց 'ի զարդ օտարոտի • ո՛չ պճնեցայց այլով պայծառութ՟բ • ո՛չ պաճուճանս յարմարեցից տգեղութես գեղոյ։ Ո՛չ ոք մեղաւոր իբրեւ զիս • ո՛չ ոք անօրէն • ո՛չ ոք ամբարիշտ • ո՛չ ոք անիրաւ • ո՛չ ոք չարագործ • ո՛չ ոք վրիպեալ • ո՛չ ոք սխալեալ • ո՛չ ոք մոլեգնեալ • ո՛չ ոք խարդախ եալ. ո՛չոք շաղախեալ՝ ո՛չ ոք ամաչեցե̃լ. ո՛չ ոք դատապարտեալ. ես միայն եմ, և այլ ո՛չ ոք. ես ամենայնն, և յիս ամենեցուն։ Ո՛չ հեթանոսք, զի ո՛չ գիտէին. ո՛չ հրեայք, քանզի կուրացան. ո՛չ տգէտք և խառնիճաղանջք, ք̃զի յիմարք էին իմաստից։ Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ. ռաբբի ռաբբի անուանեցայ, և զգովեստ փ̃ցն առ ա̃ծ եղծի. բարի ասացայ՝ առ եղկութե̃ն ժառանգութ̃ի. ո̃ք վկայեցայ 'ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի ա̃յ. արդար դաւանեցայ՝ տ̃մ իրոք ամբարիշտս. հեշտացայ 'ի գովեստ մարդկան, զի ծաղր եղէց յատենին ք̃ի. յաւաղանէ կոչեցայ արթուն, և ես 'ի քուն մահու ննջեցի. 'ի փրկութե̃ն աւուր հոկող յորջորջեցայ, բայց զգաստութե̃ն աչս կափուցի։ Ահա դատաստան. ահա յանդիմանութ̃ի. ահա նոր կշտամբանք, և հին դատապարտութ̃ի. ահա ամօթ դիմաց, և տագնապ հոգւոյ. ահա խնդիր փոքունց՝ և կշիռք մեծամեծաց։ Այլ դու միայն տ̃ր ա̃ծ մարդասէր անոխակալ և երկայնամիտ՝ համարեա՛ց մեղապարտս անձին ընդ վերջին պարտաւորութե̃ աւուրն ահաւորի զայս կսկծեցուցանող ինքնաբանական նախատինս ։ Մի՛ լռեայց 'ի քէն զայսորիկ գթած, փոխանակ զի ես ինձէն անձինս գրեցի ։ Արդ՝ բարձցես և վերացուսցես զպահ պարտաւորուե̃ կանոնիս ընդ քեզ կապելոյս տենչանօք հոգւոյս ։ Ջա՛ն զնախատինս պատկառանաց խայտառակութե̃ս ․ ծածկեա՛ աջովդ կարողութե̃ զտգեղ տեսակ մարմնոյս մերկութե̃ ․ մատո՛ հանգստեան զթոպեալս ուժգին մեղացս բեռամբք ․ կարգեա՛ ինձ սահման հեռոյ բարութե̃ առ ելս կենացդ ․ պահեա՛ յիշատակ ինձ ողորմութե̃, և զկնի մահու կեանք ամենևին ․ օրհնեալ յերկինս, և գովեալ յերկրի ․ բարեբանեալ միշտ յամենայնի յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Նորին հանգոյն · Մատենութեն ողբերգելոյ՚ի խո-
րութենէն սրտի, հայցուածովք Տեղաց Նոցունէ,
և հաշէից չարին հորժանման ։

ԲԱ՛Ն · ԼԲ ։

Ես արդ՝ եւ յետնեալս ՚ի նախագրութեց արժանաւորաց՝ գրեալ ինձէն ը̅ պարտաւորսն պատժոց, հայցեմ զողորմութի ը̅ ամենեցուն մաղթանաց ։ Ընդ նկունս և անհամարձակս · ը̅ տկարսն և փոքրկունս · ը̅ ընկեցիկսն և արհամարհեալս · ը̅ տարագրեալսն և առ քեզ դարձեալս · ը̅ երկուացեալսն և ճշմարտեալս · ը̅ կործանեալսն և յարուցեալս · ը̅ ընկճեալսն և հաստատեալս · ը̅ գլորեալսն և կանգնեցեալս · ը̅ մերժեալսն և ընկալեալս · ը̅ ատեցեալսն և կոչեցելս · ը̅ ապշէլսն և զգաստացեալս · ընդ անառակեալսն և զղջեալս · ընդ հեռացեալսն և մերձեցեալս · ը̅ հերքեալսն և սիրեցեալս · ը̅ պատկառեալսն և զուարթացեալս · ընդ ամաչեցեալսն և խնդամտեալս ։ Այլ ես պատմեմ աստանօր դարձեալ ոչ զմեղսն երուսաղէմի ըստ մարգարէին հրամանաւութեն, որ առ ժողովուրդն նախկին, և կիտանն յակոբու զանօրէնութ՟ին նր՟. այլ իմոյս ժամանեցից յայտնութ՟ե. քանզի աւաղ ը՟ աղէտս մնահու յարելով զ՟ մարգարէին, յանդիմանեցից զիս ինքն ինձէն իմոյս ձայնիւ՛ զ՟ սաղմոսողին. ո՞չ զի յանձնառա կան յայսմ համայնապատում խոստովանութ՟ե ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն իսպառ սրբեցայց օրհնեալ հրամանաւ էիդ: Եւ արդ՝ կրկնելով ծունր բարերարիդ քաղցրութ՟ե, տարածեալ զանձն իմ առաջի, զ'ի մահ գլորմանն ցուցից կերպարան. որ 'ի հող խոնարհեալ մածեալ ընդ երկրի, և ընդ անցաւորս այս կենցաղ կորստեան անասնական գետնաքարշութ՟ե սողնոյ սահեցմամբ կամօք բեւեռեցայ: Այլ 'ի քեզ տ՟ր յեցեալ՝ իբր 'ի հաստարան կենաց գաւազանի՝ յարմատոյն դաւթի ընծիւղեալ մարմնով անճառ շաղկապմամբ յանեղ ա՟ծութ՟եդ, կանգնեցայց անդրէն կիսայար՝ պատկառել 'ի քոյդ երախտեաց 'ի վայր կորացեալ դիմօք, աչք 'ի բարձունս յառեալ ողորմագին տեսութ՟ե 'ի քեզ մերձդ 'ի հեծութ՟ի. բնաւին ողորմուն, բոլորովին քաղցրուն, զի՝ լուսոյս արտասուօք լցեալ՝ պաղատանս յուսոյ առաջի մեծիդ վեհ ընծայեցից ։ Լո՛ւր ամենատուտ աննուա՛զ երկայնմտութե՟ քո՛յ դառնացուցչիս, միայն դու 'ի յա՟մի սահման փրկութե՟ ։ Ա՟ծ բոլորից . անձառ մեծութի՟ . անբովանդակելի բնութի՟ . անքննելի իակութի՟ . հզօր զօրութի՟ . կարօղ բարերարութի՟ . անպակաս լրութի՟ . անձառ ժառանգութի՟ . վայելչական վիճակ . առատ պատրաստութի՟ . անստուե՛ր իմաստութիւն . անէնչալի տուրք . անձկալի ձիր ։ բաղձալի բերկրութի՟ . անտխուր հանգիստ, անտարակոյս գիւտ . անկապուտ կեանք . անծախելի ստացուա՛ծ . անփոխանորդելի բարձրութի՟ . ամենապարուե՛ստ բըժիշկ . անսասանելի հաստատութի՟ ։ Դարձուցիչ մոլորելոց . գտիչ կորուսելոց . յոյս ապաւինելոց . լոյս խաւարելոց . քաւիչ մեղուցելոց ։ Օւած կարանդ փախուցելոց . անդորրիչդ խռովելոց . փրկու՟իդ մահացելոց . արձակիչդ կապելոց . ազատիչդ մատնելոց . պատսպարանդ սահեցելոց . վշտակիցդ գայթագղելոց . երկայնմտութի՟դ տարակուսելոց ։ Լուսոյ տեսակ . ցնծութե՟ ցոյցք . օրհնութե՟ անձրև . հոգի երեւայ . զօրութի՟ դիմաց . հովանի գլխոյ .

շարժարան շրթանց • ազդումն բանի • կառավար անձին • բարձումն բաղկի • ձգումն ձեռին • երասանակալդ սրտի ։ Ընդամնի անուն • մերձաւոր ձայն • կցորդութ՟ի հարազատ • խնամածու՟ի հայրենի • խոստովանեալ անուն • պաշտեցեալ պատկեր • անպարագիր տիպ • երկրպագեալ տէրու՟նի • բարեբանեալ յիշատակ • խնդու՟ե մուտք • անվրէպ շաւիղ • փառաց դուռն • Ճշմարտութ՟ե Ճանապարհ • երկնաձեմ սանդուղք ։ Ու այլ բազմութ՟ի բանից գովեստից անհամար կարգաց՝ և տանց անբաւից • զոր ոչ բերէ բերան երկրածին , և ոչ տանի գործի մարմնեղէն , և ոչ կշռէն իղձք հողեղէնք ։ Ու քեզ հայր ա՟մ՟ակն տեսողի ա՟ծդ՟ամի • նայեա՛ ՚ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց ծառայից, և թէ յաղախինեաց ոք աղաչեսցէ ։ Ու ընկա՛լ զցօղ ողբերգութ՟ե լալոյ արտասուաց աչացս ցանկասիրի յանարատ ոտս մարդեղութ՟ե քոյք՟ , և օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի զառ քեզ դարձն և զդաւանութ՟ի , և համբուրի՟ շրթանցս առ Ճաշակ փրկութ՟ե կենացդ հաղորդութ՟ե համաշնչապէս զանքակ միութ՟ի •

թ՟ի․ և զնոյն գթութ՟ի նորին ողորմութ՟բ ընկալեալ ’ի քէն բարերար, գրաւականեսցես զմեծդ պարգևս ը՟ փոքու հաւատոյս․ և ’ի ձեռն գթութ՟ե սիրոյ քոյ առ քո անձկալի անունդ խոստովանեալ ծառայիս՝ դարձցին ձմերունք հողմոյն խստութե ’ի յօդ հանդարտութ՟ե․ և մրրկին սաստկութ՟ի ’ի սիք ախորժու՟ե․ և կարծիք երկիւղին ’ի մեծ վստահու՟ի․ և պատուհաս պատժոյն յերանութե պատահումն․ և վտանգք թախծանացն ’ի հոգևոր խրախճանութ՟ի․ և ալէկոծու՟ի ծփանացն ’ի խոր խաղաղութ՟ի․ և ղեկայն թևարկմունք յանքոյթ նաւահանգիստն․ և բերք բեռանցս մեղաց փոխարկեսցի ’ի թոշակ շնորհաց։ Եւ յայսքանեացս ամենից բիւրուց բարութեցս ’ի քէն եղելոց մեծասցի անուն հզօրիդ խնկեալ և խոստովանեալ․ ամաչեսցէ բանսարկուն չարեաց հերքեալ և հալածեցեալ։ Ունայնասցին մուրհակք մեղացս․ խզեսցին խաղբքն․ որոշեսցին որոգայթքն․ կապտեսցին կապանքն․ վանեսցի վիհն․ վերասցին վնասքն․ պարսեսցին պատրանքն․ ջրեսցին մեղքն․ սպառեսցին սպարտիքն․

խորտակեսցի լուծն . քակտեսցին քեղիքն ։ Եւ ընդ միւայլ մթութեան չարեացս յանցանաց , և դիւայն բանակաց պաշարողաց՝ արև փառաց քոց ժամանեսցէ , կեցուցանել փրկել և լուսաւորել յաջմէ և յահեկէ , 'ի դիմաց և 'ի թիկանց . և եղիցի նշոյլ առաւօտոյ հոգւոյ գարնայնոյ ընդ ակնկալուե սպասողացն քումդ երևման ։ Որ դու ես բարերար առ ամենեսին , և՛ հնարաւոր են քեզ ամք . և ամենեցուն զկեանս կամիս , և զփրկութիւն բաղձաս ։ Ո՜վ ամենապարգև ձեռն յսի քսի , և առ իս դարձցիս կարկառմամբ շնորհի աջոյդ քոյ սրբոյ բնակեալ միացեալ , և ոչ հեռացեալ յանձկութե սրտէ սիրոյ սենեկիս . և անեղծական քո նկարադիր՝ նշխար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչմանս ընդ իս պահեսցի՝ միջնորդեալ ընդ քեզ 'ի մատեան յաւիտենական կտակաւդ կենաց հոգւոյդ աւետեաց՝ երկնից յօրինողիդ ։ Եւ քեզ միայնոյ պատճառիդ , և միոյդ 'ի միոյ պատճառէ . և ունողիդ զպատճառ միոյ՝ Երրեակ անձնաւորութեդ և միոյ ածութեդ վայելէն փառք յերկնաւորացն վեհից , և 'ի սրբոցն դասուց յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Նորին հանգոյն · Աղօթք ապաշխարողաց յետ 'ի հեշտանդութեան եւ 'ի չնչութեան, մաղթեցելոց տէրութե՟ն ըստ աղաչողական աւազակին :

ԲԱ՟Ն · ԽԲ :

ՏԷՐ ա՟ծ գթութե՟ · փրկութե՟ եւ ողորմութե՟ · քաւութե՟ եւ նորոգութե՟ · բժշկութե՟ եւ առողջութե՟ · լուսաւորութե՟ եւ կենդանութե՟ · յարութե՟ եւ անմահութե՟ : Յիշեա՛ զիս յորժամ գայցես արքայութե՟ քո · ահաւոր · հզօր · բարերար · եւ ամենաստեղծ կենդանի · գովեալ · ամենակատար · մերձ 'ի հեծութի՟ համայն եղելոց : Ընդ խաչեցելոյն ընդ քեզ պաղատիմ · որ ոչ ըմբռնեալ վս՟ քոյ, եւ ոչ կապեցեալ · ոչ կախեալ, եւ ոչ բեւեռեալ · ոչ կոփեալ յանուն մեծիդ, եւ ոչ անարգեալ · ոչ լլկեալ, եւ ոչ նշկահեալ · ոչ խորտակեալ, եւ ոչ մահացեալ · եւ արքայութե՟ն արդարոց մասին անձկալեաց լուսոյ արժանի ցուցեալ իրաւամբք ուխտի երդմնականաւ ամենիցն ազդեալ զանփոփոխութի՟ն բարեացն տուելոց, փառաւորեցեր առ յոյս փրկութե՟ խայտալքելոյս · օրհնեալ օրհնեալ, եւ դարձեալ օրհնեալ· և զիս ընկալեալ սովին հաւատովք, կանգնեա՛ 'ի կործանմանէս բարերար· բժշկեա՛ 'ի հի՜ւանդութ̃եցս ախտից՝ ողորմած· յեզերաց մահուս դարձո՛ զիս 'ի կեանս՝ կենդանութ̃ի· քո եմ և ես· կեցո՛ ընդ նմին՝ ապաւինութ̃ի· անձամբ մեռելոյս կենդանական շունչ ընծայեցո՛· յարութ̃ի· կեանք· անմահութ̃ի· անպակաս բարութ̃ի· անսպառ շնորհ· անփոփոխ ներողութ̃ի· այլ ամենազօր· ձեռն ամենիշխան· մատն ամենամերձ· կամեա՛ց տ̃ր, և փրկեցայց· ակնարկեա՛ միայն գթութ̃ե և արդարացայց· ասա՛ բանի՜, և վաղվաղակի անարատ գտայց· մոռացի՛ր զթի՜ւս չարեացն· և անդստին համարձակեցայց· առատաձեռնեա՛, և անդէ՛ն 'ի քեզ իսկ պատուաստեցայց· փառաւորեալդ յամի յաւիտեանս· ամէն·

Նորէն հաճոյք ․ Աղօթք ապաշխարութե յաճ 'ի մեղաս , եւ 'ի նեղութեանս ․ խոստովանեալ զանձին տէրութե ։

ԲԱՆ ․ ԾԴ ։

Եւ արդ՝ յոյսն առ ամ ակնկալութի։ քո է ողորմութի սկզբնաւորութ աչաց տեսանելեաց , եւ սրտի իմաստից յո ․ քո է բարերարութի ․ կեանք եւ անմահութի ․ դարձ առ իս գթութ ․ եւ հանդերձեալս դառնալ առ քեզ կրկին բերկրութ ․ զի առանց քոյ կամաց ոչ ունիմ լինել նորոգ փոփոխեալ ․ եւ եթէ ոչ կամք քո գթասցին , ոչ զօրեմ փրկիլ մահու սպարտականս ․ եւ եթէ ոչ կառավարդ յարդարեսցես պատրաստել ինձ հետս ճանապարհի՝ որ առ քեզ բերէ , վիհ է ինձ խորոց յաջմէ եւ յահեկէ ։ Ահա ոչ պարծիմ ամ իրօք նախատեալս ․ ոչ պանծանամ դսրովեալս ․ ոչ խոստանամ լքեալս ․ ոչ մեծաբանեմ պապանձեալս ․ ոչ ըմբոստանամ ձաղեալս ․ ոչ երջանկանամ եղկելիս ․ ոչ արդարանամ ամբարիշտս ․ զի ոչ երբեք հարթընթանայ երիվար առանց սանձակալի , ջլի, և ո՛չ նաւ համբառնայ հանդէպ առանց ուղղչի ․ և ո՛չ արօր կշիռ ինչ գործէ առանց մաճակալի ․ և ո՛չ երկուորեակ լծոյն 'ի ճահ ճեմեսցին առանց եզողի ․ ո՛չ ամպն մերաչուէ առանց հողմոյ ․ ո՛չ աստեղք ցնդին, և կամ գումարին առանց ժամանակի ․ ո՛չ արեգակն փոխաբերեալ իւր շրջանակի՝ առանց տարրական օդոյ ․ և ո՛չ ես նոքօք հանդերձ առանց բարեգործիդ հրամանաց ակնարկուէ ․ զի դու միայն ես տո՛ւիչ կենաց բանականաց, և խնամիչ կարգաց հոլովման արարածոց, և 'ի քէն է ինձ փրկութիւն ըստ սաղմոսողին ․ և դու միայն ես բարբառ խնդալից աւետեաց հնչման յականջս լսելութե՟ ամ՟ հասակի ․ եկա՛յք 'ի հանգիստ իմ՝ բնաւին աշխատեալք ․ և ես մաքրեցից զձեզ 'ի պարտեաց ։ Իսկ զի՞նչ օգուտ 'ի լուացմանէն, եթէ կրկնակի զազրացայց ․ և կամ ո՞ր օգուտ 'ի ճաշակմանէն, եթէ գեհենին մատնեցայց ․ և կամ զի՞ արդ յաբրահամ պարծեցայց՝ խորթացեալս 'ի գործոց նորին ։ Որդիս գարշուէ հօր ամովրհայւոյ, և մօր քետացւոյ, կամ՝ քանանայւոյ ըստ մարգարէին, որ առ իս յանկաւոր ձայնի ։ Ժառանգս մերժելի եթողացի , և ո՛չ սենեկին սառայի , ըն՟ տեսանողին աւխս առածի ․ եղբայրս շամբնի , և կամ գոմորայ ․ համբակս անլու՛աց , և անաղէլի՝ խակակութ պտր տոյն խակութե՟ ողայ և ողողկեայ , ըստ եպեկկելի կրկնանախատն կշտամբութե՟ ։ Ո՞չ քանզի 'ի ծուխս բազմավտանգս ալէտանջ հողմոյ սաստկան՟ զղու՛եալ ուժգին լլկանօք խապառ տագնապմամբ 'ի ծովին՝ փոխեալ ընկեցեալ 'ի վտակն վայրենական ողողից ․ աւ որ զմատունս ձեռացս այսր անդր տարբերեալ , իբր 'ի հոսանաց բռնութե՟ց գարնանաղայր գետոց արտաձգեալ յակամայ ընթացս ողորմագին գլորման ջրակուլ՝ ոգեսպառ պղտորարբութե՟ դաժանահոտ սկախառն մամռարմատ խառնախու՛լ մահաբեր երկամբք վարանեալ ․ ըստ որոց յուղխիցն հեղեղեցին հեղձուցեալ ։ Այսու առակաւ և ես եղկելիս , խօսիմ՝ և ո՛չ իմանամ ․ գոչեմ , և ոչինչ լսեմ ․ բարբառիմ , և ո՛չ զարթնանամ ․ հնչեմ , և ո՛չ փոխադրիմ ․ փողեմ , և ո՛չ գումարիմ ․ վերաւորիմ , և ո՛չ ես զգամ ․ կաւոցն գարշութե՟ նմանեալ՝ թափուր յազդմանէ բար եայ իմաստից ։ Արդարև չար առաւել յաւէտ խնկապէս քան զօրինակդ ճշմարտութիւն ատելի և մեղադրելի, և ատենին քնի արժանապէս մատնելի ։ Այ՛ քանզի անդառնալի ուղղոյն յիշատակ աստեացս պարտեաց զայս կտակ թողլի, որոց ընթեռնուն, խնդրս բանի՛ առ ա՟ծ կարդալ համապաշորդութե՟ ․ այս կացցէ սահման յանձնառական խոստովանութե մշտնջենաւոր ձայնարկու առաջի քո ամենակալ ․ զոր գիրդ ընդ մարմնոյս, և բանդ ընդ հոգւոյս զանսահմանելիդ միշտ թախանձեսցէ ․ իբր յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս ՚ի յիմոյս ձայնէ, բարեգութ, մարդասէր, օրհնեալ յաւիտեանս ․ ամէն ․



Նորին հոգւոյն ։ Ընդ այսու ապաշխարութեամբ յանձնեա մարդասիրութեան ձեռինն, որոյ ամենահնար զօրութեան ոչ դժուարանայ առ յարուցանելոյ մեռեալն ։

ԲԱՆ. ԺԳ.

Արքայ երկնաւոր, ո՛վ թագաւորեցուն առ ՚իմ՛ բան յիմի միշտ երկայնամիտ . ո՛վ կենդանւոյ անքննելին որդի ։ Ահա անդ է ողորմելն իսկապէս, յորում՝ հաստատու ակնկալութի՛ն վաստակոյն . անդ է բարեգործելն, յորում տեսութի՛ն իմաստիցն խափանեցաւ . յայնմ ժամու է մարդասիրելն, յորում՝ տկարութեան վտանգ պաշարեալ տիրեաց ներքոյ եւ արտաքոյ ։ Անդանօր է բժշկութի՛ ա͞ծային քոյ ձեռինդ, յորժամ բաւանդակ անդամոցն տեղի ետ կենդանութի՛ն . այն վայր է այցելութեան, յորում ելք հնարիցն խափանեցաւ ։ Այն է քո մեծութի՛ն, յորժամ՝ զյուսահատութեան վէրն ողջացուցես . այն է հարազատ քում ազգակցութեան, եթէ յանակնկալն ժամու արժանաւորեցես փրկութի՛ ։ Այն է հանդիսաբան քում յաղթանակի, եթէ զփակեալն մուտս կենաց ՚ի սպառուածն չնչոյս բացցես · այն են քո շնորհք վայելչականք, եթէ զչարեացս իմոց մոռացեալ՝ զբարեացդ քոյ յիշեսցես ։ Յայսմ ես անոխակալ, եթէ ապախտաւորս ընդ երախտաւորացն խնամարկեսցես · 'ի սոսկն ծանեալ գիտայից, եթէ նայեցար՝ 'ի նուէր բանիս նախնի գթութե՟դ , եթէ զմոլորութիւն չարեացս բարձցես ։ Յաղագս այսորիկ հիւսին բանք, և յեղանակին նուագերգութիւք · յորժամ՝ որն բարի չարն ծառայի զբարեգործացն պարգևեսցէ ձիրս ։ Որ մինչ իրաւամբք մնասցէ բանտի, նա յարքայական ապարանս զնա հանգուցէ · մինչ հրաւիրեալ է 'ի գուբ տղմոյ, նա 'ի բազմականս ամենապատիկս գահուց գրգեսցուցանիցէ ։ Մինչ բրելոյ զաչսն գիտեսցէ , նա 'ի բարձրութե՟ բերկրութե՟ հայեցուցանիցէ · մինչ ծայրատութե՟ մատանցն սպասէ , նա մատանի համարձակութե՟ մատուցանիցէ · մինչ հայի հարուածոց գանից , նա գթոց գիրկս արկանիցէ · մինչ պատրաստե՟լ լուծոյ կորստեան , նա երևելի տեսողաց բազմաց առնիցէ · մինչ ակն ունի սատակման մահու , նա ընդկենացն և փառս ընծայեցուսցէ · մինչ

հասհատման գլխոյն նայեցի, նա զնոյն պսակաւ պայծառացուցանիցէ ։ Այս պտուղք օրհնութեան գթած սքանչելարմատ քում շառաւիղաց · այս արդասիք կենաց արարչականդ քոյ հրամանաց · այս իղձք խորհրդոց խոստովանեալդ քո տենչանաց · այս նշոյլք լուսոյ ամենասփիւռդ ճառագայթից · այս ախորժութ՟ի ճաշակաց բարեբանեալդ քոյ քաղցրութե ։ Քոյ միայնոյ են այսոքիկ տ՟ր · 'ի քեն ազդեցաւ գրել ինձ զսոսին · ահա զքոյոդ յատուկ աղերս աղաչեմ օրհնեալ, 'ի քոյոց այտի պարգեւեալ շնորհեմ · բայց տ՟ր զգանձս քո բարիս՝ ը՟ս աղերսանաց առակին ։ Մի՛ խառնեսցես 'ի համբարս բարեացդ քոց 'ի չարեացն իմոց · մի՛ շտեմարանեսցես զատելիսն քո, որ են ոխութ՟իք և ցասմունք · ը՟ սիրելիսն քո, որ են գթութ՟իք, և ողորմութ՟իք · մի՛ պահեսցես 'ի ստացուածս քո պաշտելիս զանախորժելիսն քո, որ են մ՟թութիք, և դաժանութ՟իք · և զիմ իշխանելիսն, որ են մեղք և թշուառութ՟իք ։ Մի՛ գրեսցես աջովդ օրհնութե 'ի մատենիդ կենաց զմուրհակ պարտուց իմոցս անիծից, այլ զանհնարաւորսն ինձ համարեալս · մեծացուսցես

կրկին

ծերկլին առաւել զանուն քո տ՟ր 'ի նոցին · ցուցանել զգթոյն ինձ դիւրինս, և հեշտականագոյնս ։ Շատ են իմ պարտիքս, և անդր քան զթիւ · այլ ոչ այնքան հրաշալիք իբրև զքո զողորմու՟նդ · բազում են իմ մեղանքս · այլ յաւէտ են նուաղեալ առաջի քոյդ ներողութե՟ · յաճախ են չարութի՟քս · այլ յաղթական է համայնից հզօր ամենակալ քոյդ մարդասիրութի՟ · ինձ են անհամար իմոյս անձին բիծք · այլ քեզ յոյժ գրաւեալ են ը՟ սահմանաւ ։ Ոչ են այնքան զօրաւորք առ կենդանութի՟ զենք մեղանաց սպառնացելոյս պտղաբերութե՟ · որքան յիշատակ մահու կենդանւոյդ առ վանումն կործանողին բռնութե՟ ։

Զի՞նչ ազդեսցէ փոքր խաւար աւուրդ ա՟յ · զիա՞րդ բաւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ մեծիդ ճառագայթից · զիա՞րդ համբարձցի կշռեսցի ընդ խաչիդ քո կրից խակութի՟ հեշտութե՟ մարմնոյս տկարութե՟ · զի՞նչ երևեսցի յաչս ամենակալիդ քոյ առատութե՟ կոյտք մեղանաց ա՟մ տիեզերաց ։ Ահա կոշտ մի հողոյ դիւրափխրելի 'ի կարծրութե՟ բախմանն վանեցեալ՝ իբր զպղպջակ անձրևոյ բազմազեղ հոսմամբ քո կամայդ չքացեալ պայթեալ անդաստին · զի՞նչ պիտոյ են քում՝ զօրութե՟դ ամենահնարդ կարողութե՟ ժամանակաց առաւելութ՟ի առ յանցուածոց իմոց քաւութ՟ի · ո՛չ քթթել մի ական · ո՛չ խուն մի տեսու՟ի ածանցական · ո՛չ սակաւ մի նայեցուած փայլական · ո՛չ կիսամամանեայ յամրու՟ի · ո՛չ փութացելոյ ոտից յեղեղումն · ո՛չ յելից բարձրութ՟է միոյ կանգնոյ կաթի ակնունելոյ · ո՛չ գիծ մի չափոյ մնաց հետևեցելոյ · ո՛չ նշուլից արագութ՟ի · ո՛չ չնչոյ տուրևառու՟ի · ոչինչ յայսմ՝ յանգոյ և յանտպաւորական նմանութ՟է անձև օրինակաց յաւէտ անկայից՝ այնքան առժամայնք , կամ՝ հարևանցիք , որքան եղծմունք , ջնջմունք և հալմունք մեղաց սառնամանեաց պահեստի՝ քումդ զօրութ՟է ա՟ծ ա՟մի ա՟ր յ՟ս ք՟ս որդի անքննին կենդանւոյդ ա՟յ : Որ տաս պարգևես արև քաղցրութ՟է չարաց ը՟ բարիս · և անձրևես երկաքանչիւրոցն անաչառապէս · կշռես սահմանես իրաւամբք և զկտանգս կրիցն հաւասարաբար : Որոց մեծ է հանդիստն առ ակնկալութ՟ի պարգևին · փոքր խթանաւ փորձութ՟է զսակաւութ՟ի սպրտուցն ատէն վճարես : Իսկ որք զերկիր ընտ-

ըեցին , ներեա ողորմութ՟բ , տալով և սոցա զարման ընդ նոսա , միշտ առ քեզ դարձին սպասես : Եւ՛ քեզ փառք ամենազօրիդ առ ամ՟ հրաշագործութ՟ն բարեխնամող երկայնմտութ՟բ . օրհնեալ
յաւիտեանս . ամէն :

՚Նորին հեղինակէ , Աղօթք առաւօտեան յԱծ՟ , հայցելով զօրացուցանել զմեզ յամ՟ գործս բարեաց :

ԻՐ՟Ն · ՁԱ ·

Իսկ արդ՝ մ՟ զի արթնականն մեր զուարթութ՟ն քեզ ննջումն իմն է համարեալ . իսկ 'ի խոր թմբրութ՟ն լռելն մ՟ ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝ անթարթափ բացու՟ն աչաց . ուղղեա՛ հոգւոյդ քո խնամատութ՟բ զյաջողուած ձեռինս գործոյ ընդ հեծութե՟ ձայնիւ մաղթանաց . զօրացո՛ ո՟ր 'ի հանդէս բարի ձգնաւորական արի վաստակոյ : Կցո՛րդ լեր կարեացս տկարութե՟ . թեթևս կացո՛ զաշխատութե՟ս այս սկիզբն . արագեա՛ միշտ կարօղ զյառաջադրե՟լ ձեռնակերտս . դիւրաւո՛րս ընթացո՛ 'ի յաւարտումն լրմանն : ՚Ի վախճան իրին բերկրութ՟բ զիս հասո՛ . ժամա՟նն կացուսցես 'ի հանդիպումն յուսոյն . կցո՛րդ լեր ուղւոյն ճանապարհիս ընթացից · 'ի թռիչս ամբարձման փութացուցես յօգտակարն · ը՟ աջմէ իմ լիցիս 'ի վտանգի ծանրութե՟ն · զձայն քո լսեցո՛ 'ի յանձկութե՟ն պահու · ձեռամբ քո կեցո՛ 'ի կորստեանն ժամու · մատամբ քո ազդեա՛ 'ի սահմանին անձկութե՟ · հարթեա՛ զխորոց ամենաչար խափանմանն ։ Հոգեղինին առաքմամբ ըստ ամբակումայ ինձ հնարեա՛ · բան ինձ շնորհեա՛ 'ի յատենի բազմութե՟ն · իմաստութի՟ յիս տնկեա՛ 'ի հանդիպման քննութե՟ ։ Ամպով կամաց քոց հովանացի՛ր հրաշապէս · հանդարտեցո՛ փայտիւդ կենաց զծովուս մրրիկ · սանձեա՛ զաստեաց կենցաղոյս պատկեր քոյին հրամանաւդ · քանզի թէ աստ ողորմութի՟ քո ո՟ր կամեսցի , այս լուծութի՟ կոհակաց կարծր է ք՟ն զվէմ · և թէ 'ի ցամաքի անտես առնիցես , իբր զանկայուն՝ պնդութի՟ յատակիս 'ի ներքոյ աստի հոսեալ սասանի ։ Արդ՝ ընկա՛լ յո՟ զպաղատանացս ձեռնարկու՟ի քեզ 'ի հաճութի՟ · և արա՛ ինձ զամենակարծն դայթագղութի՟ մեծ վստահութի՟ ։ Ո՜վ 'ի ջրահեղձոյց ամենակործանն դարու · որք 'ի հարթ տարածման գետնի ա-

ռանց

ւանց երկիւղի յանհոգս կէին, յողորմուէ՞դ ամայի մնացեալ կորուսան. իսկ ընդ հովանաւոր մածու՛ածով լաստի՛ն յոգնատատան հիմանն հայթայթանօք՝ յանուն գթածիդ յեցեալ պահեցան: Ընդ որս և զաղաչօղս մշտապաղատ 'ի նաւահանգիստն խաղաղութե՟ մարդասիրապէս պրծեալ ապրեցո՛. վարձս 'ի քոյոյդ ընդ իս բերելով հոգևոր շահից. զստորաբերս այս ստու՛արու՞ի պարտուցս լքեալ բանիդ առակաւ, 'ի քեզ ո՞ր անկայց միացեալ իսպառ անբաժանելի. օրհնեալ յա՛մի:

Եւ կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք ընդ հողեղինացն մարտիրոսաց որք ջրով և հրով փորձեցան, և յելից զերծմանն ը՟ մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թողին օգնութե՟ն, ասասցեն ը՟ մեզ համաքանաքար զուգամասնուճ՟ եղիցի եղիցի:

՚Սորին հաճոյի. Ընդ [illegible] ապաւինութե՟ 'ի զօրու-
թին խաչի, մաղթելով հաւատով յա՟մ հզօրաց հզօրան
եւ, նա ազատել 'ի դիւական պատերազմաց,
զօրութ՟բ հզօրաբար խաչին ։

ԲԱՆ. Գ. ։

Բարեբանեալ ա՟ծ երկնաւոր. միայն արարիչ. որ ամենակալ. մեծու՟ի ահեղ. գթու՟ի օրհնաբանելի. ողորմու՟ի խոստովանելի. բարերարու՟ի երկրպագելի. խնամակալու՟ի պաշտելի. մարդասիրութ՟ի սօնելի. պահպանու՟ի խնկելի. բարձրե՟լ անքննելին. մեծաւոր կամարար. ապաւէն անկասկածելի. մխիթար սրտից. փարատիչ վշտաց. ապաքինիչ ցաւոց. սպառումն վհատու՟եց. բարձումն պարտեաց. փոխարկիչ կարեաց. կարգաւորիչ կրից. յարմարիչ բանից. սանձարկու լեզու՟ի. շրջագրութ՟ի շնչոյ. կացուցիչ հագագի. ամփոփիչ խորհրդոց. կրթարան մտաց. արձանացուցիչ յուզմանց. հանդարտու՟ի մըրկաց. խաղաղութ՟ի ծփանաց. որ ունիս զթեւոց ամենընթաց իշխանականիս. և իմաստու՟ն նուաճեալ առ քեզ դարձուձուցանես ։ Գոհաբանեալ միշտ երախտաւոր ․ որ հեզութբ՟ անհպարտութե՟ երկայնամտե՟ հանգչիս տենչանօք անճառ հրաշիւք յանձինս սրբոց ։ Թագաւոր էից համայնից ․ ամի՟ւ ծանուցեալ գթած ․ սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից ․ Ճանապարհ կենաց ․ որ առաջնորդես քաղցրութբ՟ դիմելոյս ՚ի լոյս վերին ։ Ձեռնկալու մեծ վստահութե՟ ․ որ ոչ թողացուցանես գայթագղելոյս ՚ի վայր կործանել ․ յուսոյ կերպարան ճշմ՟րիտ առհաւատչեի՟ն աղաչողաց մատանց յայտնի երևեալ ․ ապաւինութի՟ հանգստեան, որ ոչ երբէք մատնես վտանգի դառնապարտութե՟ ։ Ազատութի՟ շնորհածիր, որ տաս լիապէս առանց փոխատրութե՟ փրկանաց ․ առատութի՟ աննախանձելի, որ քոյին փառաւորութբ՟ զանարգ նիւթ հողոյս ճոխացուցանես ։ Պայծառութի՟ անստուեր ․ որ ճառագայթիւք ահեղ բարձրութե՟ սպառածածկեալ զթշուառս կրկին բարգաւաճ առնես ։ Քաւիչ մեղանաց բազմաց ․ որ զհերքեալս ՚ի փրկութե՟ առաջնոյն պայծառութբ՟ նորոգեալ վերստին վայելչացուցանես ։ Հնարաւոր դիւրահան առ ա՟ծմ՛ անբաւ գերամբարձու՟ն յաւէտ յառաջեալ · ելք վստահու՟ե առ խոստացելոյն վայելս · երանու՟ն անձկալի՝ յոր զկենդանու՟ն շնչոյս լքանելն է ախորժելի · զի զքեզ գտից կենդանին ։ Նամք անփոխադրելի , առ 'ի քաւու՟ն գերոյս զօրացեալ ամենադողելի · անսխալելի դեղ կենաց , որ և մեռելոց բնաւին եղծելոց առնես զսքանչելիս ։ Ամենաստեղծ աներկբայելի , որ զհուրբ կիզեալն , և զհողմով հոսեալն , և զժանեօք գազանաց ծախեալն 'ի քթթել ական նովին հիւթականու՟բ անպակաս յարուցանես ։ Անհաւասար համարձակու՟ի · յորում ա՟ծ օրէն պանծանօք պարծելն է իրաւացի ։ Հայեաց տ՟ր յերկնից զուարթ քաղցրութ՟բ յամենակործան վտանգ՛նեղելոյս , և արա՛ անդորր հանգստ՟ն դիւրաւոր 'ի բազմատագնապս հեծու՟է · և զյարուցեալ գումարս սատակչացն · եթէ ապաւաղէնք այսական զժնեայ հնարաւորութե՟ բուռն մարտակցաց պատկանեալ զինուք · եթէ մեղաց տղեղ , և քո ատելի կերպարանք · եթէ ցաւոց և ախտից վտանիչ և կորստական նշմարանք , մերժեսցես , հանցես , հատցես , խափանես_ ցես հեռլի սահմանաւ խապառ տարագրել անդարձ որոշմամբ վերստին կորստեանն ։ Եւ կառուսցես կացուսցես նպատակ կենաց և ամուր մահարձան զնշան խաչիդ ապաւինելոյս 'ի քեզ փրկութ՟ի ։ Եւ յայժամ անպարտ և անպատիր և անվանելի արուեստից ահաւորիդ մեծութ՟ե լուծցին որոգայթքն դաղտնածածուկ սատանայականք ․ կապտեսցին մեքենայքն ․ վատնեսցին գայթագղութ՟իքն ․ խայտառակեսցին հաղբիցն դրութ՟իք ․ յայտնեսցին երևոյթք որսոյն ․ դասցին նենգողին ծուղակք ․ վերասցին վարմին վերարկուք ․ տաշորեսցին որոմանցն բոյսք ․ նշովեսցին բռնաւորին չարաբանութ՟իք ․ կորեսցի լար խաբէութ՟ե 'ի մահ որսողին ․ պարսեսցին պատրողին բանսարկութ՟իք ․ պակասեսցին զէնք զրպարտողին ․ անկցին սուսերք մահաբերին ․ սուզեսցին սադրողին պատրաստութ՟իք ․ արձակեսցին տոռունք տագնապողին ։ Այլայլեսցին սուտ կերպարանք կեղծաւորին ․ սատակեսցին խորոխտականայն խիստ յարձակմունք ․ ցրուեսցին կցորդութ՟իք կերչացն ․ բաժանեսցին ազինք աւազակացն ․ քայքայեսցին բոյլք բարբարոսացն · քանդեցին ամրոցք ապստամբողացն · արգելցին ամպրոպք յանդգնելոցն · փարատեցին փորձողին անձրևք · հալեցի և ցամքեցի եղեամն աղանդաւորին : Խորտակեցի եղջիւր գոռոզին · մանրեցին ամբառնալիք դրօշիցն կերպ՟նաց · փշրեցին ամբարհաւաճու՟նք հպարտացելոցն · նահանջեցին դիմեցմունք ճակատելոցն · քակտեցին միաբանու՟նք զօրացն բելիարայ, թէ անմարմին, և եթէ մարմնաւորք, փախիցեն ը՟ նոյն ճանապարհ 'ի մի շաւղաց հետոց յեօթն տարակոյս · 'ի գուբն ինձ փորեալ ինքեանք ընկճեսցին : Զեղանակեցին ձմերունք ձանձրացուցչին · հատցի կապն կցորդու՟ե մշտաջան աւազակին · նողկասցի մրտասս կայից համբոյր շողոքորթին · ը՟միջեալ մեկնեսցին նետաձգու՟նք նեղչին · կասցէ 'ի ստասանմանն նաւ խարդախողին · խլեսցին յարմատոց անտի ատամունք խածանողին : Ո՟ փայտիդ օրհնութե՟ կենաց, յորում պրկեցար ա՟ծդ անըմբռնելի · յիշատակաւ բեւեռայդ, որով 'ի գործի մահուն մածուցար՝ արարիչդ երկնի և երկրի · արեամբդ տ՟րունականաւ, որով զվիշապն մեծ կարթիւ՛ ածեալ որսացար․ լեզւոյն դառնութե՟, զոր արբեալ, որով զդեղատուութ՟ի կորուսչին արտաքս հեղեր ։ Պատմաբանութե՟ ըղձական ճառիւք կրկին սարսափելեաց, որով զլրբութ՟ի հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր ։ Անուամբդ անհասականաւ տ՟մբ՛ անթարգմանելւոյդ, յոր մէ դողան և դատապարտին սոսկացեալ սաստիկ սարսափմամբ բնութ՟իք տ՟մ երևութից և աներևութից, եղիցին այս տ՟մ պարգևք շնորհաց խոստովանելոյս 'ի պաշտպանու՟ի, 'ի բժշկու՟ի, և 'ի քաւութ՟ի ։ Ե՛ւ մահաբեր դառնաթոյն օձին՝ և որ 'ի նմա ազդեաց տիեզերադատ չարութ՟ին, 'ի սատակումն եղիցի նորին․ նոյն ինքն 'ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն սովաւ մատնեսցի, կապեսցի և ըմբռնեսցի ։ Եղիցի ողորմութ՟ի ստեղծողիդ ընդ իս․ և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի ։ Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթանաց գոչման աղօթից հայցման․ ծերոյ, և տղայոյ․ կուսի, և երիտասարդի․ և եթէ յաղախնաց ոք պաղատեսցի ա՟ծոխրաբար՝ հաւատարամբ անաչառութ՟բ ընկալցիս 'ի քէն մասն երանութե, պարտուց ազատութե, հաստեալ վերստին յանարատութ՟ն նորոգ մաքրութե, նկարեալ դարձեալ զքոյդ կերպարան անփոփոխելի։ Ահա տիրապէս հնարաւոր զօրեղ անպատում անհաս անիմանալի· տեսցես աստանօր 'ի հառաչանս կողկողանաց այսր հեծութե, որ 'ի բոլորից շրթանց ընծայեն քեզ մատուցանի, մ՟ի հօր քոյ երկնաւորի և բարերարի, և հոգւոյդ սրբոյ փառակցի, և կենդանատուի, ա՟ծածնիդ բարեխօսութ՟բ, և խնդրուածովք ա՟մ սրբոց· զի դու ստեղծեր զա՟մ։ և 'ի քէն եղեն ամենեքեան· և դու տիրես ա՟մի։ Եւ քեզ փառք յամենեցունց միդ յիսկութէ անժամանակ երրորդութեդ, զուգակցամբ փառաւորեալ յանբաւս· և յաւիտենից յաւիտեանս, ամէն։

Նորին հեղինակի · Աղօթք յաղագս զղջման։

ԲԱՆ · ԻԲ։

Եւ քանզի ըստ ողբաձայնիցն բանաստեղծութեց վերընծայելոց գրութ՟ն թուոյս յարմարեցի · կականն, և հեծութ՟ն · հառաչանք կողկողագինք • դառնութ՟ն լալումն , և արտասու՛աց երգք ։ Դարձեալ սկսայց զճառ պաղատանացս խոստովանօրէն ողջակիզանաբար • զգաղտնածածուկն յայտնաբարբառ • զի անդրադարձութ՟բ սկզբամբն և վերջաւորօքն բառիւք զնոյն համաձևութ՟ի ՚ի մի թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնարհութ՟ն աստանօր եդից ։ Մեղա՛յ մեծիդ բարերարութ՟ն , անարգս մեղա՛յ • մեղա՛յ ծագմանդ ճառագայթից , խաւարս մեղա՛յ • մեղա՛յ շնորհացդ անբաւ երախտեաց , արդարև մեղա՛յ • մեղա՛յ սիրոյդ վերնում գթութ՟ն , յայտնապէս մեղա՛յ • մեղա՛յ ստացողիդ յոչ էութ՟է , ստուգապէս մեղա՛յ • մեղա՛յ գերունակ գոգոյդ գրկանաց , անբաւս մեղա՛յ • մեղա՛յ աննու՛աղ լուսոյդ փայլմանն , նենգօղս մեղա՛յ • մեղա՛յ ճաշակման անճառադ կենաց , բազումս մեղա՛յ • մեղա՛յ անհաս պարգևացդ ձրից , հանապազ մեղա՛յ • մեղա՛յ գովեալ մարմնոյդ ա՟յ , մահուչափ մեղա՛յ • մեղա՛յ պաշտելի արեան արարչիդ , իսկապէս մեղա՛յ ։ Ահա արդարև օրհնեալ է հաստատու՛ած բանի յուսադրական սրտի այսր մեղայիս ։ Սոյն սա

այս֊

ըպատուելի աւանդ ․ անմոռաց պատուէր ․ հայրենեայն տուր ․ նախահարցն օրէն ․ համայնից թոշակ ․ անհերքելի բան ․ զօրաւոր պատասխանի ․ կենդանու՟ե կամուրջ ․ ախորժելի վերնոյն ․ սիրելի սրբոց ․ անխզելի կապ ․ հրաշալի բարբառ ․ անշրջելի պատճառ ․ բաղձալի աղերս ․ փափագելի սեղան ․ սրտաբեկ հնչումն ․ անհնարից ճարակ ․ կարծրու՟ե վանիչ ․ ա՟ծապաշտից սահման ․ հեթանոսաց գիրք ․ վաղնջուց կանոն ․ քրիստոնէից հարազատ ․ առաքինու՟են յաղթող ․ անջրպետ հզօր ․ խռովոց ահաւոր ․ արուեստ բարձրու՟ե ․ խորու՟ե անչափ ․ հիացման տեսիլ ․ խորհուրդ կնքեալ , ընդ որ չիք ումեք անցանել ․ եթէ ոչ անըմբռնելի մտաց արարման զոր ծանիցէ ։ Զայն բարեպատեհ հրաշաւորական ․ որ ոչ յիշատակեցաւ ՚ի վերջին դատակնիք դասուն լքելոյ ․ գուցէ առ Նմին խղեալ համառօտ զվրիժակն իրաւանց մահուն հատելոյ ․ յորմէ ընտրութ՟ին աւարտործ եղեալ , զսահմանն յաւիտենական քակտեսցէ ։ Օարդ փառաց մեծութ՟ե ․ որով նոյն ինքն ա՟ծութ՟ին պսակեալ բարգաւաճի ։ Քանզի ո՞վ ոք դիմեալ կալաւ զեղջերաց սեղանոյ այսր սրբութե . և ոչ առժամայն պրծեալ 'ի պատժոց անարատ դատաւ : Իսկ եթէ աքար զարմեան , և սաւուղ կիսեան , և յուդա սիմոնեան ասելով զայն ոչ արդարացան , և ես վկայեմ՝ իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի . զի յակամայից բանադատելոց ոչ է կատարեալ սէր . ուստի և ոչ բովանդակապէս փրկութի : Իսկ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զմկրտութե հարազատ : Մեղայ երախտեացդ մոռացութե , վերստին մեղայ . մեղայ մարմնոյ ձեռն յոդի հարեալ , յիմարս մեղայ . մեղայ առ կեանսդ դժրողութե , իսկ և իսկ մեղայ . մեղայ բանիդ ապախտ առնելոյ , չարաչար մեղայ . մեղայ 'ի յօր սատակման ինձէն ստիպեալ , վատթարս մեղայ . մեղայ պարտականս անկենդան մահուն , ձաղելիս մեղայ . մեղայ անպատկառս քոյ բարձրութե , տաղտկալիս մեղայ : Երջին ինձ կրկին աշխար հոդևոր . զի 'ի կորուստ և 'ի կործանումն ինձ երևեցայ . զի անդարձս վարատեցայ . զի որդիս՝ թշնամի գրեցայ . զի 'ի բար-

ձանցն

ձայնն երկնից ընկեցայ · զի փուշս փարուց գլխի : Եւ ևս առ սմին ողբք ապազակի · զի անձամբ զանձն անարգեցի · զի բագին կորուսչին գտայ : Աղխմն կսկիծ դժնդակ սրտի · զի զիս ունին առ որ չեմ · զարտաքնայարդար բաժակս անմաքուր · զբռեալ որմն գարշունակ · զսին պարծանօք սպաձուձեալ · զլոյս ՚ի մռայլ շիջեալ · զգերանակիր ակնս թշուառացեալ · զջահս փառաց շիջեալ · զամիս յամի ամ կրօք վնասակարս · առ տնօրինականսն տէրունականս · առ յայտնութիւնսն ա՟ծայինս · առ երևմունսն արարչագիրս · առ խոնարհութիւնսն սարսափելիս · առ այն զոր տեսի աչօքս իսկ իմովք : Աւ որ մեծ է պատասխանատուութիւնս, քան առ համօրէն աւետարանին՝ զարմանս· հիացմունս · հոգս հալողականս · անդաձմունս անհնարաւորս · թուականութիւնս մտաց անքարգելիս · ելմունս անկատարս · իղձմունս անհաստատս · յուսահատութիւնս յարմարականս · յանդիմանութիւնս պատշաճականս · ձաղանս պատեհագոյնս · նզովս իրաւացիս · անէծս արժանահատոյցս : Արդ՝ այսորիկ են մեղաւորիս իմ կշտամբութի՟ք, և ինքնահարուած տանջանաւորութի՟ : Եւ քանզի կարող ես զայս ամենայն զպարտս թողուլ. և զխայթուածս մահու բժշկել. տ՟ր ողորմութեց. ա՟ծ բոլորից. ք՟ս թագաւոր. բարձրեալ հօր որդի. ստեղծիչ. գթած. բարերար. օրհնեալ. առատ. հարուստ. ահաւոր. հզօր. ողորմած. տեսուչ. ձեռնկալ. հաստիչ. ապրեցուցիչ. դարմանիչ. կեցուցիչ. երկայնամիտ. անոխակալ. ապաւէն. բժիշկ. գովեալ. երկնաւոր. անճառ. լոյս. կեանք. յարութի՟. նորոգութի՟. քաւութի՟ : Եթէ հայեսցիս մարդասիրութե՟, ըստ որում՛ քոյդ են սովորութի՟ք. նայեցեալ՚ի քեզ, կողկողիմ և ես : Եթէ լուիցես, հառաչեմ՛. եթէ ունկն մատուցանիցես, պաղատիմ՛. եթէ անսայցես, աղերսեմ՛. եթէ ներեսցես, աղաչեմ՛. եթէ առ իս դառնայցես, գոչեմ՛: Ապա եթէ անտես առնիցես, կործանիմ՛. իսկ եթէ առոտն հարկանիցես, լամ՛. եթէ զոգեպահն ո՛չ ընծայեսցես, մեռանիմ՛. ապա եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սաստակիմ՛. իսկ եթէ սաստեսցես, դողամ՛. եթէ խեթիւ տեսանես, սոսկամ՛. ապա եթէ սաստկանաս, տարաբիմ՛.

եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ ի վայր հարկանիցես, հերքիմ. եթէ զբոց վհատութեանս ոչ առցես, տագնապիմ. եթէ խստանաս, փախնում. ապա եթէ սպառնաս, ընկճիմ. իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգինս ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տայցես, երկնչիմ. զբարեացն պարգեւ մոռնեալ. զերանութիւն թողեալ. զշնորհն լքեալ. զուխտն ցրեալ. զաւանդն կենաց մոռացեալ. զհամարձակութենն վստահութիւն կորուսեալ. զստեղծիչդ էիցս բարկացուցեալ. զանձառութիւն շնորհին ընդոտնեալ. զպատուոյն պատկեր այլայլեալ: Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծութեան ցաւոց, մարդասիրեալ առ իս՝ ժամանեցուսցես տ՟ր յ՟ս ք՟ս զազդեալն գիր ընանիլ՝ ի յիս, եթէ բժշկութի դադարեցուցանէ զմեզս մեծամեծս. որով ամենուստ քաղցրութեամբ պատուաստեալ՝ ի քեզ, զքոյդ կերպարանս լուսոյ նկարեալ յոգի՝ վերստին գտեալ, սնդեցայց քաւեալ, եւ ստեղծեալ կրկին՝ ի փրկութեան անմահից կենացն անախտականաց • և քեզ ը՟ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս, ամէն։

ԲԱՆ · ԻԲ։

Ընդդիմամարտ դի՛մաց այս նուագ աղօթից • և դի՛մասարսուռ ջերմնատագնապ ախտաւորութեց ա՟մ փարատիչ։

ԱՐԴ՝ այսքանեացս անքաւից հրաշից հանդերձիչ հայր ամենաստեղծ՝ անուանդ ահաւոր • ձայն սարսափելի • կոչումն ընտանի • բան համբուրելի • ազդումն սքանչելի • հրաման սոսկալի • էութ՟ի անքննելի • գոյութ՟ի անճառելի • խոկութիւն անբաւելի • զօրութ՟ի անզննելի • կամք ամենաբարի • տէրութ՟ի անսահմանելի • մեծութ՟ի անչափելի • բարձրութ՟ի անբովանդակելի • որքանութ՟ի անկշռելի • առաւելութ՟ի անհասանելի • պատճառ որդւոյ հայրութ՟ե, այլ ոչ նախադրութ՟ե • քև՝ և ՚ի ձեռն քոյդ անպարագիր զօրութեանդ սաստեա՛լ տագնապօղ և դիմական տենդիս ջերմութ՟ե • որ մարդեալ մուծաւ ը̄ մեղաց • զի փախիցէ 'ի մարդոյս • զարհուրեալ 'ի սխրալի և յանբաւելի արեանդ վտակի գառինդ երկնաւորի • որով սրսկեալ միանգամ ; 'ի մշտնջենաւորս համայն մաքրեցաք։ Եւ արդ՝ յայս պատկառելի խոնարհուե̃ արարչակերտս խորհրդոյ ամաչեսցէ սատանայ 'ի գործս չարեաց իւրոյն հրեշտակաց ։ Տանջեսցի և հալածեսցի հեռացեալ և արտաքս առաքեալ 'ի շինուածոյ խորանէ քումդ բնակուե̃ յարտաքին խաւարն ։ Եւ ջնջեալ մաքրեա զարտասուս ողբոցս 'ի դիմաց մերոց • և զհառաչումն ձայնիս հեծութե̃ 'ի սրտից մերոց ։ Եւ յիշատակաւ հարմանն հեզուսիյն՝ քամնափուշ տաժանատեսիլ ոգեպահանջիցն՝ որով պնդեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին , ցաւեսցի չարին ։ Եւ 'ի կողահերձ սայրատուր սլաքէ ուժգին բախմանէ , որով զվէրն մեծ ընկալաւ , իսպառ սատակեսցի սկզբնարար մահուն ։ Եւ զի խոնարհեցոյց գոլեալն զգլուխ՝ յաւանդել զոգին 'ի ծոց քո բարձրեալ , ապստամ՝ բութ̃ի անբարի բարուցն բելիարայ 'ի կոր կործանեսցի , ամե̃ հերքեալ 'ի կորուստ ։ Եւ զի զօղեալ ծածկեցաւ ան-

անմահն իսկութ՟ի յորովայնի երկրի · այսու ամբարձեալն հպարտութ՟ն կարծեալ դռուողին 'ի յատակս մահու դժոխոց մթին ստուերին յաւէտ գիտեսցէ · և յիշեսցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահացաւ դիմամարտու՟ն թունից վիշապին՝ կենարարն կրիւք ամենազօրին : Ո՞վ զի 'ի փառս քո հայր ողորմութե՟, իբր՝ 'ի գովեստ որդւոյ քոյ հոգւովդ սրբով զայս խոստովանիմ · քանզի ո՛չ գիտակ ինչ սակ զօրութ՟ն ունի զմիւսմէն առ մի խորհրդականն խորութե՟ · այլ զանսկիզբն բանդ անձնաւոր ընդ անժամանակդ հօր փառաւորեմք · և քեզ միայնոյ ն՟բ երրորդութեդ · հաւասարապատիւ տէրութեդ · համաբուն անբաժին ինքնութեդ, օրհնաբանութ՟ի, գոհութ՟ի, զօրեղութ՟ի, և անձառ վայելչութ՟ի մեծութե՟, բարեխնձակ հարթութե՟, զուգակշիռ հաւասարութ՟ յաւիտեանս · ամէն :

'Ի

Նորին հանգոյն · Մաղթանք առ որդին միածին, յաղագս պահելոյ 'ի գիշերային արհաւրաց · և փրկելոյ յա̄մ աղէտից, և 'ի հնարաւորութե̄ց:

ԲԱՆ. ԽԱ.

Որդի ա̄յ կենդանւոյ օրհնեալդ յա̄մի, հօրդ ահաւորի անքննելին ծնունդ · որ տկարանայ առ 'ի քէն և ոչինչ: Որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութե̄ քոյ փառաց, հալին մեղք · հալածին դևք · ջնջին յանցանք · խզին կապանք · խորտակին շղթայք · կենդանածնին մահացեալք · բժշկին հարուածք · ողջանան վէրք · բառնին ապականութ̄իք · տեղի տան տխրութ̄իք · նահանջին հեծութ̄իք · փախնու խաւարն · մեկնի մէգն · մերժի մառախուղն · փարատի մռայլն · սպառի աղջամուղջն · վերանայ մութն · գնայ գիշերն · տարագրի տագնապն · չքանան չարիքն · հալածին յուսահատութ̄իքն · և թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ա̄մի: Որ ո՛չ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել · թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ՝ բազում ողորմութե̄դ · զի դու միայն ես յերկնի անձառ, և յերկրի անզննելին ․ ՚ի տարր գոյից և յեզր ծագաց աշխարհի ․ սկիզբն ամենայնի, և յա՟մի, ա՟մ լրմամբ օրհնեալդ ՚ի բարձունս ․ և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ՝ փառք յաւիտեանս, ամէն ։

Նորին հաչողի ․ Աղօթք առ Ք՟ս, վ՟ն թողութեան մեղաց, մաղթելով բժշկութ՟ե, ըստ դէսպէս բժշկութեց ՚ի տնօրէնութ՟են չարչարանելոց ։

ԲԱՆ․ ԺԲ․

ԱՐԴ՝ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու երկանց ․ արդարև անսահման բիւրուց քանքարաց տուժից գոլ հատուցանող ՚ի միումաւուր ․ այլ ո՛չ եղեւ առ փրկութ՟ն մարդկայինն մնաց հայցեմ ներողութ՟ն, այլ առ աննուա՛զ լրութ՟ն փրկչիդ յի՟ ք՟ի պաղատիմ՝ մարդասիրութ՟ն ․ որ չէի երբեմն, և ստեղծեր ․ չմաղթեցի, և դու արարեր ․ չեւես եկեալ ՚ի լոյս, և տեսեր ․ ո՛չ յայտնեցեալ իմ, և գթացար ․ ո՛չ կարդացեալ, և խնամարկեցեր ․ ո՛չ համբարձեալ ձեռն, և նայեցար. ո՛չ պաղատեալ, և ողորմեցար. ո՛չ կերպացեալ ձայնիւ, և լուար. ո՛չ հեծեծեալ, և ունկնդրեցեր. զխոնելով զարդեան զխառնուածոյս, և չանտեսեցեր. նախահայեցդ աչօք նկատեալ զպատժապարտիս չարագործութ՟ի, և յօրինեցեր։ Եւ արդ զքո արարեալս, և զքո փրկեալս, և զայսքանեաց խնամոց յանձանձեալս՝ մի իսպառ կորուսցէ մեղացն հարուած գիւտք բանսարկուին։ Մի յաղթեսցէ յամառուե՟ս իմոյ մառախուղ ներողուե՟ քոյ լուսոյ. մի՛ սրտիս կարծրութ՟ի երկայնամիտ բարութ՟դ. մի՛ մահացու մեղիս՝ ամենակատարդ լրութ՟ե. մի՛ տկարութ՟իս նիւթոյ՝ անպարտելիդ բարձրութ՟ե։ Ահա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս յանուն քո հզօր. արասցես ողջ իբրև զառաջինն. մինչ ՚ի դրախտին փափկութ՟ե զպտուղն կենաց կթեցի։ Ապաշկանդեալ դօսացեալ ՚ի կոր կործանմամբ ընդ կնոջն տագնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուառութ՟ի. ընդ երկիր պշուցեալ մեղացն կքմամբ սատանայական բռուն կապանօքն. զի մի՛ զերկնայնոյդ ընկալցի զողջոյն. խոնարհեա՛ց առ իս միայն ողորմած • զի բարձրացուցես զփայտս խոնարհ բանաւոր անկեալ • և զչորացեալս ծաղկեցուցես 'ի բարի կրօնս վայելչուե՟ն ք՟ո ծա՟բանուե՟ն որ մարգարէին: Ո՟ զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր չունիմ տեսարան • որով զստեղծչիդ նկատեալ զկերպ մաղթեցից՝ հզօր բարեգութ, միայն դու պաշտպան ակնարկեալ խնամովք անճառ քոյ սիրոյ 'ի չնչական խօսունքս անօթս՝ յանէից գոյաւորութե՟ն լուսոյ հաստատեսցես ։ Ընդերկոտասանամեայ չարեօք չարչարեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մեղանաց արեան հեղեղիմ • հայեաց 'ի բարձանց անմատոյց լուսովդ պարածածկեալ • ուր ո՛չ է քղանցք ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ , այլ արարածուե՟ն հրաշից ո՟մ ուրեք զօրացեալ: Չ օծուե՟ իւղով պատժապարտս՝ ընդ մեղաւորին մատուցեալ առ կենդանաձիր ոտից գարշապարդ՝ զկաթիլս աչացս վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամբիծ հաւատս ամբարձմամբ բաղկացս՝ ստոյգ դաւանմամբ՝ հոգւոյ ողջունիւ՝ շրթանց կափուցմամբ զերկիր համբուրեմ: խառնել հեծութի աղաւերցս արտասուաց • թաշկութ՟ի հոգւոյս աղերսեմ ։ Մատնեալ մեղանօք հոգւոյս գոյութ՟ի, ընծեալ մեղկութ՟բ ․ և յերկուց կայից միայնակ կողմամբ անհաստատ հետովք, զընթացից գործին նահանջմամբ չարին՝ զհետևականն բարձողութ՟ի շինուածոյ մարմնոյս առ ելս ծառոյն կենսաւիթ պտղոյն խափանեցելոյ պատսպարեսցես անդրէն վերստին՝ միայն հնարաւորդ առ 'ի փրկութ՟ի ։ Օ փառաբանարան հաստուածոյ կերպիս 'ի քէն եղելոյ՝ ամրափակ խցմամբ համրացոյց արգել հողմ բանսարկուին ․ հոգիդ քո ազդեալ մեծդ ողորմութ՟բ ըստ յաւետականին բժշկեցելոյ՝ հրաշափառա՟ն բարեգործեսցես բանդ կենդանի՝ ինձ խօսողու՟ի անսայթաքելի ։ Ընկեալ կամ չարեօք 'ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց, դի կենդանի և խօսուն մեռեալ ․ կարեկցեալ իմում թշուառութ՟ե ողբականօք քքուանաց ձայնից ․ ո՛վ բարերար որդի ա՟յ օրհնաբանեալ, աչացդ ցօղով վերականգնեսցես 'ի կենդանութ՟ի, իբր զսիրելին 'ի յանշնչական մեռելութ՟է ։ Ստոյգ դառնացօղս 'ի գբի մեղաց կամ տարակուսեալ ․ ձեռն մատուցեալ արև անստուէր, որդի բարձրե.

րելոյ, հանցես զիս 'ի լոյս քում նշուլից: Ընդ աղխողորմ' թշուառութեան կականմանն ձայնի այրւոյն 'ի նայլն մօր միամօրին, տատանման մատանցն, կոծմամբ կործիցն. հոսմամբ արտասուացն. տուայտանօք տխրութե՟ դիմացն և ես պաղատիմ վերջին հեծութեա՟. տուր յուսահատելոյս զքաջալերութի՟ մխիթարութե՟ գթած քոյ բանից. ասելով և ինձ զոմեալդ բարի. ստեղծիչ աշխարհի. թէ մի' լար գերի՝ բազմաց ողբալի. որով ընդ պատանւոյն կենդանացելոյ 'ի վշտացելոյ ծնողին այրի դիանն՝ զամենապարտ ոգիս ընկալայց 'ի քէն ընդ նմին կրկին նորոգեալ: Ընդ այսակիր անդրդայելոյն դիւալլուկ և քարակոշկոծ՝ հեղձամղձուկ եղկելի ան ձանյն քստմնելի գխախուխ հերացն վայրենաբարոս բանդաւուշելոյն՝ 'ի քէն ողորմեալ փրկիչ բոլորից իբրև զնոսին առ քեզ դիմեցից: Երբեալ մերժեսցես զդունդս չարայն տարականոցաց 'ի քո խորանէս. զի ժամանեալ հոգիդ քո բարի այսրէն հանգիցէ: Լցեալ զիմոր մինս մաքրութե՟ շնչոյս, զդեղմամբ անդամոցս, զգաստ արասցես զխելագարեալս ամենաթշուառս: Ընդ գերեցեալ դժոխաբնակաց վտարանդելոցն հոգւոց արգելեալ կամ 'ի վտանգի, զՃառագայթ ողորմութե՟ փառացքոց ծագեալ՝ լոյսդ իմ անձկութե՟, 'ի կապանաց օյտողին զերծեալ զիս ապրեցուցես: Գաղտնորոգայթ աներևութերակ վրիպակ արահետ գարշութե՟ մեղաց ջրգողեցեալ ոգւոյս կերպարան կայ 'ի տագնապի. զծածկեցեալն 'ի մեսողութե՟ց՝ զչարագործին թլինեցն այտուցմունս, քո ինքնաւորդ զօրեղութ՟՝ որդի ա՟յ գթածաբար առողջացուցես: Օ բազմազան տարազս ցեղիցն զանազանից ախտաւորութե՟ց մահացուցանողաց իւրակինօքն կորստեան բերիւք, դժնդակարմատն շառաւիղօք հաստատեցելովք 'ի յանդաստանի անօրէն մարմնոյս՝ տարակորզեսցես 'ի ձեռն ձեռինդ ամենակալի. որ արօրադրէք միշտ՝ և մշակես զսահման հոգւոց առ բանիդ կենաց արդիւնաւորութե՟: Եւ քանզի անցաւ ըստ նմանութե՟ օրինակութե՟ց յանցուածոյս վէր՝ ըստ Ճարակողն քաղցկեղի, առ բնաւ անդամս մասնաւորեալ զախտին տարածումն, չիք սպեղանի իբր խորայելի առ անչափութե՟ խարանացն մատուցանել. 'ի խարսխաց բարձիցս մինչև յափն կառուցման լրութե անդամոցս չէ առողջութի · այլ ամենևին անբժշկութի ։ Իսկ դու ողորմած բարերար օրհնեալ, և երկայնամիտ Թագաւոր անմահ · լո՛ւր աղաղատանացս արգահատութե սրտիս վտանգի , որ կարդամս առ քեզ տր 'ի նեղութե ։

Նորին [illegible], [illegible] առ ած, խնդրելով համբերութե յամ 'ի հիւանդս, որք 'ի պատիժ մեղաց ընդունիմք ։

ԲԱՆ. ԺԹ. ։

Հայեա՛ց ամենահայեաց տեսութե՛ն կենաց բարութե յուսոյ 'ի մեծաբարբառ աղաղակ ցաւագնել անձինս հեծեծանաց · անհաս մեծութի · անուն ահաւոր · բարբառ կենդանի · լուր ցանկալի · ճաշակ ախորժելի · կոչումն պաշտելի · բարութի խոստովանելի · ազդումն խնկելի · իսկութի դաւանելի · էութի փառաւորելի · գոյութի օրհնաբանելի · տր յն ը հօր քում գովեալ և երկրպագեալ և ը հոգւոյդ սրբոյ բարձրացեալ և վերաձայնեալ ։ Որ միայն մարմնացար վն մեր ըստ մեզ ·

ղի

զի արասցես զմեզ մ͞ք քոյ ըստ քեզ · լոյս ա͞մի յա͞մի ողորմած · հզօր երկնային ։ Դու այժմ զլուծեալ եւ զխորտակեալ հողանիւթ անօթս՝ ա͞ծորէն հրաշակերտութ͞ե աղաչեմ գթած նորոգ հաստատեա · զքոյին պատկերս մեղօք հնացեալս 'ի քրայս հալոցաց կայծակամբ բանիդ պաղատիմ առ քեզ վերստին ձուլեա ։ Զխախտեալ շինուածս քումդ հանգստեան խորանի մարմնոյս պահտանաւ հոգւոյս՝ մաղթեմ բարերար 'ի բնակութ͞ի քեզ մաքրագործեա ։ Մի՛ հատուցաներ չարեացն իմ գործոց ըզնոյն փոխատրութ͞ի ։ Արբեալ եմ ըստ մարգարէին բանի , եւ ոչ 'ի գինւոյ · թափեա զմրուրս անօրէնութ͞ե թմբրութ͞ե մահու բաժակիս ազատարար հրամանաւդ ամենակեցոյց · զի մի՛ զքոյդ քամեցից 'ի վերջին աւուր յետնում հատուցմանն ։ Արդար ես յիրաւունս քո, եւ յաղթող 'ի դատաստանի · եթէ մահու մատնես , ճշմարիտ են գործք քո · եթէ դատապարտես աստուստ սկսեալ զտանջողական կշտամբութ͞ի , ստոյգ են հատուցմունք քո · թէ յանդունդս խորոց սուզեսցես · թէ զկենդանութ͞ի շարժմանս բարձցես · թէ զբանիս զօբութ՟ի ունայնացուսցես · թէ զաչացս պատուհանս ստուերացուսցես · թէ զկենացն ճաշակ 'ի քեզ ինքն ամփոփեսցես · թէ զհասարակաց կերակրոյս դարմանս բարձցես · թէ զաւուրս հարստութ՟ի համառօտեսցես · թէ ը̃ լիջման քաղցրութե̃ ցօղոյ և հուր տեղասցես · թէ 'ի լիութե̃ բանի քոյ սովեցուսցես · թէ զականջաց դրունս խցցես · թէ զշնորհիդ ձիր կտրեսցես · թէ զգետին յատակի ոտից սասանեցուսցես · թէ յանձկալի երեսաց լուսոյդ քոյ հանցես · թէ 'ի համօրէն աշխարհէ աստի հերքեսցես · թէ փայլատակամբք հրոյ պակուսցես · թէ անբժշկական ցաւովք դատեսցես · թէ դի՛ւաց չարաց մատնեսցես · թէ դառանաց ժանեօք մանրեսցես · թէ հողմով ցասման հոսեսցես ։ Եւ թէ այլ ինչ նորոգ արարած տանջանարանաց կազմեսցես · չար քան զտարտարոսն · և սաստիկ քան զգեհեննն · թունաւորագոյնք՟ն զորդունսն · տարակուսելի քան զխաւարն · երկիւղագին քան զխորխորատն · ողորմելի քան զմերկու՟ին · վկայեմ անձամբ անձին յոյժ պարտապան գոլ սոցա ։ Եւ քանզի յաւէտ տոլա

ւորա

ւորագոյն են նմանութիւք փոխատրութեցն առ ազգակցութի մեղանսյա իւր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք՝ նշանակիչք այսր խորհրդոյ · Արդ՝ կարեւոր է խոստովանել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս՝ առ ծանօթութի խնդրողին · ո՛վ զի ոչ ջերմն սիրով առ ընկերին կարիս մատուցոյ, յիրաւի 'ի նախնումվտանգին տագնապեալ ստանում։ Եւ զի ոչ զցանկականն խոռխտականութի սանձեցի, արժանի կրեմ եղկելիս զանզոլանալի զկիզումն · Եւ քանզի ոչ սիրեցի զլուսոյդ աւետիս, արդար հատուցմամբ 'ի մթութի ըմբռնողական միգին կորստեան վրիպեալ գանդաչեմ։ Եւ զի ոչ խատրեցի զմնունս փոքունցն յանցանաց, իբր անվնասակարք վարկանելով, պատկանապէս 'ի խածանողականացն զազիրն զեռնոց խթեալ խոցոտիմ։ Եւ զի ոչ ձեռն կարկառի առ կիրս վտանգաւորին այց առնել նմին, 'ի դէպ իսկ ըստ գծագրութե այսր օրինակի ապականութեն գբոյ նուիրեալ մատնիմ։ Եւ արդ՝ ոչ յածուստ ամենաբարի գանձուցդ չարիս · և ոչ 'ի լուսոյդ նշուլից խաւար · և ոչ յապաւինու-

՚նուէրդ գայթագղութ՟ն · այլ ես ինձէն կորստեան որդիս գտի զայսոսիկ · մեղանք անօրէնութ՟ե իմոյ գանձեցին նիւթեղէն զայսքանեաց բարկութ՟ե մթերս հոգւոյ · իշխանին մոլորութ՟ե հնազանդեալ, թողի զտեղի՝ քո ն՟ր , ը՟ն դլոյն խրատու յանդիմանութ՟ե ։ Եւ քանզի յայտնեցաւ յետուստ գաղտնեաց առականաց մարմնոյս անդամոց · և արկաւ զերեսօք կերպիս անվայելուչ ստուէր ամօթոյս , ըստ մարգարէին առակի , տգեղս ցուցեալ զիս ամենեւին · իբր մերկացեալ խայտառակելոյ պոռնկի ։ Ծագեա՛ յիս զլոյս քաւութ՟ե արքայ երկնաւոր · զի թօթափեալ զմեղաց փոշիս ըստ աւետեաց ձայնին դարձելոյն 'ի բաբելոնէ , նստայց վերստին կանգնեալ 'ի հողոյ · և 'ի հաստատութ՟ե յուսոյդ հիմնացեալ անսասանելի ըստ եսայեան բանին՝ զգեցեալ զզօրութ՟ի բազկի կարողութ՟ե նախնում մաքրութ՟ն , վ՟ն մեծութ՟ե փառաց քաղցրութ՟ե ամենապարգեւ քոյ ա՟ծութեդ · օրհնեալ յաւիտեանս · ամէն ։

* * *

՛Լուսին հաճոյի , Աղերս առ ա͞ծ վ͞ր Ըշնամեայ և ապրեցայց , մաղթելով՝ մերովս նոյա ներքին լով և մերոյս ընդունելի քաղցրաբանեաց Ողորմութ͞ե , և 'ի վերայ աղաչանաց : 'Ի նոյն և առ յաւիտեանս յաւիտենականութ͞ե :

ԲԱՆ·ՁԴ·

Բարձրեալ անքննելի · զօրութ͞ի ահեղ · տ͞ր արարածոց · թագաւոր երկնի · ստեղծիչ հրեշտակաց · գոյարան մտաց · հաստիչ հրեղինաց · պետ բարի հոգւոց · աջ ապաւինութ͞ե · անդորրութ͞ի հանգստեան · տեսարան լուսաւորութ͞ե · պայծառութ͞ի բերկրութ͞ե · Ճանապարհ երանութ͞ե · պատճառ կենդանութ͞ե · առիթ բանաւորութ͞ե · փրկութ͞ի աւանց չարութ͞ե · առաջնորդ խաղաղութ͞ե · պարիսպ ամրութ͞ե · պատուար պահպանութ͞ե · ցանկ բոցոյ մեծի օրհնութ͞ե · սահման անոխակալութ͞ե : Յիշեա՛ յայսմ ողբերգութ͞ե մատենի բանիս խոստովանութ͞ե և զոր 'ի մարդկային ազգէ թշնամիս մեր 'ի բարի · և արա՛ կատարեա՛ նոցին քաւութ͞ի և ողորմութ͞ի · Մի՛ բարկասցիս նոցա վ͞ս իմ՝ տ͞ր իբրև զնոսա բամբասողաց , առ յանձանս սիրոյդ որ 'ի յիս , այլ ոչ զչարս կշտամբողաց և իրաւամբք նախատողաց՝ ներեա՛ յանցանաց նոցա ։ Եւ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քոյ արդարադատ . ոմանք առ մեզ վնասակարագոյնք սակաւուք՝ թերևս և յիրաւի բամբասեցելոցս . և ես առ քեզ ամենապարգև անթիւս և անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիւնս ։ Արդ՝ յիշեա՛ զքո մեծութիւնդ տէր , նայեցեալ 'ի յիմս անարգութիւն . և ընդ խնդրելս իմ 'ի քէն բարի իմոցն ատելեաց , և դու առ քոյս ըստ քում մեծութեանդ անճառելիս հրաշագործեսցես ։ Մի՛ սատակեսցես զիմին խածանօղս , այլ փոփոխեսցես . խլեալ զխոտան զբարս երկրաւորս , զբարիսն արմատացուսցես և յիս և 'ի նոսին ։ Մանաւանդ զի դու լոյս ես և յոյս , և ես խաւար և յիմար . դու խնկուէ բարի գովելի . և ես համայնիւն չար ապիկար . դու տէր ստորից և երկնից , և ես անիշխան շնչոյս և ոգւոյս . դու բարձրեալ 'ի կարեաց զատեալ , և ես տաժանաւոր և վտանգաւոր . դու 'ի վեր քան զկիրս երկրիս , և ես կաւ անարգութեան դարշութեան . դու ըստ մարգարէին մնաս յաւիտեան յանբաւ բարձրութ՟ե, և ես միշտ կորնչիմ՝ ըստ նորին բանին. 'ի քեզ ո՛չ է մթութ՟ի, կամ նենգութ՟ի, և ես բովանդակն խոկ եմ, որ զաւանդն իմ ո՛չ պահեցի։ Հա՛ն զիս 'ի բանտէս. արձակեա՛ 'ի կապանացս. զերծո՛ 'ի շղթայիցս. փրկեա՛ 'ի խեղդմանէս. ազատեա՛ 'ի տագնապէս. քակեա՛ 'ի յերկաթիցս. լո՛յծ 'ի պաշարմանցս. արտաքսեա՛ յերկմտութ՟եցս. սփոփեա՛ 'ի տխրութ՟եցս. հանգո՛ 'ի նեղութ՟եցս. փարատեա՛ 'ի վշտացս. հանդարտեա՛ 'ի խռովութ՟եցս. ապաքինեա՛ 'ի ցաւոցս. մերժեա՛ 'ի հեծութ՟եցս. հեռացո՛ 'ի յողբոցս. կազդուրեա՛ 'ի կականմանցս։ Ա՟ծ ողորմութ՟եց և պարգևատու քաղցրութ՟ե, մի զզրուեալս արեամբ հզօրիդ անտես արարեալ ը՟ վայր կորուսաներ. կանգնեա՛ զհասեալս յափն մահու 'ի բազմախտանկ հիւանդութ՟էս։ Ա՟հա բարդեցան կուտեցան շրջանակք ամացս ընդունայնութ՟ե. յորմէ հետէ յայտնեցեալ ցուցայ յո՛չ պէտս երևեալ. 'ի յանդաստանէ մօրն սենեկի փուշս դժնկի մեղաց շառաւիղեցի. մի՛ լինիր ինձ խայթոց խոցոտիչ. ո՜վ անուշ տոհմին յուդայի · և կամ զաւակին եփրեմի : Եւ քանզի բուսուցեալ տնկեցի յոգիս փոխանակ ցորենոյն բարեսերմութե՟ խոտս խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս, ըստ գրոյն բանի՝ որ երեցն է .քան զաւետիսն, զիա՞րդ ոչ կոչեցից զանձն իմ գարշելի անդաստան անիծաբեր փշովք մեղաց հեղձեալ : Ո՛չ սերմանեցի արդարու՟ն ըստ բանին յովսեայ, և զիա՞րդ հնձեցից և ժողովեցից զկենաց պտուղն : Ո՟ն կաւ ստինք կուսութե՟ անձինս մաքրութե՟ ըստ մարգարէին բանի որ առ իսրայէլ · կարօղ ես տ՟ր 'ի նոյն հաստատել · լայնեցի ընդարձակեցի ըստ մոլեկան բարուցն յուդայի զանկողին կամաց դիւ՛ացն հոմանեաց · 'ի ձեռս քո է ամփոփել դարձեալ 'ի նոյն զգաստութի : Եթէ մարմնապէսն կցորդութի ընդ տեսանողին անարատ գործեաց զպոռնիկն · իսկ դու փրկութի հոգեղէս միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրեացես : Եթէ արեգակնս այս անկենդան ստեղծեալ առ 'ի քէն երկրիս մատակարար՝ զկարակուտն մօրից ցամաքէ, և զտհաս պտուղս հասուցանէ, իսկ ստացօղդ ամենից հոգւոյդ տ՟յ, որքան զօրեսցես զտիղմ չարեաց աղտոյ , և զթարախ պղծութեան մեղաց մթերից իսկոյն սպառել ։ Վասն այսր կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ 'ի քէն բարի առաւելեայն իմոց 'ի կարգի այս բանի · զի զհերքեալ վնասակարս պարտուց մահու յամենախնամ աչաց հզօրիդ մի՛ մերժեսցես որհնեալ գթուդ ։ Արդ՝ կենդանագործեա՛ զիս զամենամեղս անդամօք մարմնոյս ընդ բնութեան հոգւոյս խորհել միշտ զքոյսդ ։ Իսկ բարեգործացն խնդրել բարիս , բնութեան են օրէնք անբռնադատ կրիցն յարակցանց առ սոյն բերումն · քանզի արդարև առ միդ այդ պատուէր ընդ հասակ զօրանայ · իսկ միւսոյդ երկրորդի առաջնոյդ խնամով հանդիպել , աստուածականիդ է նմանութիւն · յաղագս այսր իրի նախնի դասեցի զթշնամեացն իմոց աղերսանս , քան զերախտաւորացն բարիս ։ Այլ արդ յիշեա՛ զնոսա կրկին ընդ միոյ , որ 'ի քո անուն բարձրացեալ զանարժանս զիս ընկալան · և տո՛ւր նոցա ըստ ամենառատ բարերար և անոխակալ վարձս արդարոյ և մարգարէի · Թէ և ես յաւէտ թափուր իցեմ յարժանեաց , ըստ հաւատոց նոցա և առ յոյս նոցին ակնկալութե՟, որ առ պարտաւոր գերիս ողջամիտ կամօք ակնարկէն · ո՛չ թէ 'ի մասանցդ քո կեցուցչաց 'ի պահպանարան հոգւոյս ծածկութի լիով ունիցիմ: Այլ զպատմաւորս անամփոփելի 'ի քոյ տեսութե՟ց և անխաբելի 'ի յուղիղ կշռութե՟ց քաղցր գթութե՟ անսահմանելեաւ մերձեցեալ առ իս մաքուր արարցես՝ անխայտառակելի պահելով 'ի տիեզերական յանդիմանութե՟ն: Այլ ո՛չ շուք իմն փայելչական դնել ախորժե՟ն ինձ անարժանիս սիրելիք քո վ՟ն քոյ, նայեցեալ 'ի կրօնս զգեստուս բարեկերպութե՟, չգիտելով զբիծս գաղտնեացն՝ երջանիկ կարգան եղկելւոյս · և դու հնարաւոր ամենապարգև օրհնեալ մարդասէր, առ բնաւս ողորմած, վ՟ն ամենաթշուառս հեծութե՟ հաշտեա՛ց ընդ նոսա ը՟ս հաւատոց նոցա: Ընծայեալ նոցին մատո՛ պարգևեա՛ զանե՛ղծ մեծութի՟դ, և զանթառամելի զպսակդ յահաւոր աւուրն յետնում հատուցմանն ամենափորձ ընտրութե՟ն · զի դու ես գրաւ փրկութե՟ մեծութե՟ անպատմելի, և անծախ գանձուց սորկիս և սովեցելոյս · 'ի վախճան վերնային շահուն՝ օգտութե՟ բանի՛դ, որ 'ի քէն յարգեալ ճոխանամբ : Կատո՛ ինձ սահման ջրոյ հանգստեան . արձանացո՛ անփոփոխ պատրաստական վստահութ՟ի . կանգնեա՛ օրհնաբանեն անկաղակարծ յուսոյ ամրութ՟ի : Տո՛ւր ամենախնամ՝ դու անաչառ պաշտպանութ՟ի . սասանեցելոյս բարեաց անդորրութ՟ի . տարակուսելոյս լուսոյ ապաւինութ՟ի . աշխարհելոյս մեծ երջանկութ՟ի . վհատելոյս կենաց օգնութ՟ի . լքելոյս անգայթակղելի օժանդակութ՟ի . նահանջելոյս անսայթաք վերընթացութ՟ի : Որ քո է բնաւդ՝ եւ ՚ի քէն է տուրդ՝ եւ ՚ի ձեռն քոյ բաշխին հաստատութ՟իք պիտանացուաց համայնից կենաց . եւ քեզ վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Նորին հոգւոյն՝ Աղօթք , յանդիմանութիւն գաղտնեաց անձին . եւ մաղթանք պահպանողական ողջութե̄ շնորհաց խառնելոյն , ՚ի հեռանս եւ ՚ի մօտս :

ԲԱ՛Ն. ԿԵ.

ԵՒ արդ՝ ես նախատինս ամբարշտաց . գլուխս մեղաւորաց . պետս անիրաւաց . առաջինս պարտաւորաց . պատկերս յանցաւորաց. ատատիկեցիս ը՟ն վատթարու՟ն, այլ ոչ ը՟ն բարեբաստու՟ն. Ահա զանճառիցն իմոց ճառեցի զպատկառելին խայտառակեցի. զգաղտնիսն հրապարակեցի զծածուկսն յայտնեցի. զթագուցեալսն ցուցի. զամփոփեալսն տարածեցի. զդառնու՟ես մաղձ ժայթքեցի. զգործակցութ՟ի չարին մատնեցի. զամբարե՟լ թարախ վիրիս քամեցի. ըզ խորս պարտեացս իմոց ծանուցի. զպատրուակն կեղծեաց առի. զքօղ տգիտութ՟ե վերացուցի. զամօթալեայն զգեստ մերկացուցի. զգարշելիսն յանդիմանեցի. զմրուրն մահու փսխեցի. զոլալարս հոգւոյս խածուածոյ. քահանայապետիդ ք՟մ բացի. Յանձինս վտանգ ո՛չ անխնայեցի. մարմնոյս սիրոյ ո՛չ աչառեցի. զարմատն հնութ՟ե տեսիլ արարի. բնու՟ես կարեաց ո՛չ ողորմեցայ. զմխաբանու՟են կապ խզեցի. զդղեակ սրտիս քանդեցի. ընդ կամացս որոյ իբր ը՟ն դարանակալի մահու կռուեցայ. զպահեստ անյայտիցն արտաքս հանի. զմթերիցն գանձ մեծին գուշակեցի. զդատախազն դատաւորին հանդէպ կացուցի. զապանեալսն զփորձ այժմէն իսկ գտի. զդաշն կործանողին կտրեցի. զուխտն խաբողին ցրեցի · զկատարած մարտին յաղթութե՟ն 'ի քեզ ո՟ր յո՟ ապաստանեցի · զպատերազմին խումբ դրդուեցի · զդիմամարտու՟ի դիմեցմանն բանիդ ո՟յ յուսացայ · զխաւարասիրայն փաղանգ լուսեղինայն զինուց սադրեցի ։ Եւ արդ՝ ստեղծիչդ ա՟մ եղելոց քո՟ որդի բարձրեալդ ո՟յ , զաստէն դսրովեալս յայսպիսեաց բանից , և զհարու՛ածեալս յոյսքանեաց դանից մի՛ կշտամբեսցես կրկնակի դատեալ 'ի մեծի աւուրն ։ Լ՛ հա հզօր · անքննին · անճառ · բարերար · թագաւոր անմահ, առ այս կերպ պատկառանաց ինքնապարսաւ խոնարհութե՟ն , որ ինձէն զանձն մեծաձաղանօք յոգի դատեցի՝ լի՛ց նու՛աղօք այսր մատենի անարգանօք ամօթոյ զդէմն սատանայի · և զերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ խաչիդ զօրացն ։ Միասցի կնիքդ լուսոյ 'ի դեղ տեսակիս · ամրութե՟դ նշան հաստատեսցի 'ի տիպ դիտակիս · երևակ կենացդ փայտի ձևասցի 'ի պատկեր այտիս · արու՛եստդ հրաշից 'ի ճակատիս շուք նշանակեսցի ։ Մի՛ այլայլեսցի յինէն դրոշմդ լուսապաճոյճ · մի՛ բարձցի 'ի տեսանելեացս բբաց ճաճանչդ օրհնութե՟ .

թե՟ ․ մի՛ մերժեսցի 'ի գլխոյս առհաւատչեայդ վստահութե՟ ․ մի՛ սասանեսցի 'ի բերանոյս ամրու՟ե սեմոյ փառաք տ՟նագրութե՟նդ ։ Պահպանակդ երկրպագելի 'ի զգայարան սրտիս միասցի ․ չորիցս նիւթոց խմոյս գոյութե՟ քառաթեւեղդ նշոյլ ազդեսցէ ․ ձեռինս կարկառման փրկչիդ իշխանութ՟ի օժանդակեսցէ ․ մատուցման հաստու՟ածոյ մատինս խորհրդարանդ համարձակութե՟ բարեգործեսցէ ։ 'Ի մեկնելս իմում՝ մի՛ հեռասցի սրբութի՟դ ․ մի՛ լքցի պատիւս 'ի պատիլն պարտաւորիս ․ մի՛ մերժեսցի 'ի յոգւոյս անդաւաճանելիդ փրկութ՟ի ․ մի՛ ջնջեսցին գիծք կենդանատու՟իդ 'ի քո գրեցեալս շնչոյ ․ մի՛ եղծցի նկարու՟մն արեան զօրութե՟ 'ի տխրատիպ խորանէս ։ Ընդ իս բնակեսցէ յիմում՝ գերեզմանին ․ 'ի ծորել մարմնոյս թշուառի օծու՟մն շնորհիդ առ իս պահեսցի ․ 'ի նորոգութե՟ն աւուր սովաւ հանդիպեցայց փառաց փեսայիդ ։ 'Ի քոյոց այտի ծանուցայց ․ քայոլքդ վաստակօք պճնեցայց ․ երախտեօք մեծիդ յարգեցայց ․ աւազանին զգեստի՛ւ պերճացայց՝ քաւեալ ողորմութ՟բ ։ Սատ բարեգութ զվերարկուդ անապականութե̃ տաժանեցեալս մեղօք մարմնոյ. մի՛ յարիցէ ընդ քոյս՝ բանսարկուին. հնացուցիչ հոգւոյս վատնեցի. խաւարաբնակացն պատիրք մի՛ Է̃ իս վերերևեսցին : Օրհնեսցի անուամբ քո գթած վիհն իմ հանգստեան. ողորմութիւ քո լցցի գուբն իմ գերութե̃ : Ընդարձակեսցիք և ինձ տեղին թշուառութե̃. անդորր եղիցի խնամօղ ինձ բանտն բարկութե̃. սնուսցէ զիս առ յաճումն արգանդն մթութե̃. յուսով քո շտեմարանեսցէ զիս յարկն այն անձկութե̃. ձեռամբ քո պահեցայց 'ի խշտին տարտամուե̃. թևօք քո ընկալայց 'ի տունն տագնապի. դու գոլեալ Է̃ իս 'ի սենեակն վտանգի : Աւաղս ինձ աստանօր 'ի թիւս հազարաց. զի երբեմն էի վերնային, և այժմ անդնդային. երբեմն տօնելի, և այժմ աշխարելի : Այլ և արդ կրկին դու օրհնեալ 'ի բոլոր գոյից յերկնայնոց և 'ի ստորնայնոց և 'ի սանդարամետականաց մեռելոց՝ ան պարտականդ այս տարագրութե̃. ես վրիպեցայ. ես օտարացայ. ես յիմարեցայ՝ պարտեցայ և խոտան գտայ. ես լքայ՝ կամեցայ և կործանեցայ. ես մոլորեցայ. ես մատնեցայ. ես մերժեցայ · ես խորթացայ , գերեցայ և գայթագղեցայ · ես նզովեցայ · ես թշուառացայ՝ արբեցայ և վատթարացայ · ես ընկլուզայ · ես խաբեցայ · ես անօրինեցայ · ես ապականեցայ , մահացայ և իսպառ եղծայ · չի՞ք քո առ այս ինչ մասն չարի , որ ես միայն անփոփոխ բարի ։ Արդ կամք քո յիս , և խաւարն ինձ ճառագայթ · ճրագ յուսոյ քոյ անդ , և գիշերն վաղորդայն · մարմնոյ քոյ հաղորդեալ , և յամօթոյն կարծեաց ապրեալ ։ Իսկ ես ո՛չ գրեմ զանձն իմ կենդանի ընդ անփախչելի վախճանին · դարձեալ զի ո՛չ վարկանիմ կորուսեալ , ընդ աներկեան նորոգմանն · որ և փակեն համարիմ ինձ զելս կենացդ ընդ անքաւելեայն պարտեաց · դարձեալ բացեն ինձ զդրախտն՝ ընդ փրկութեն աւետեաց ։ Քանզի ո՛չ այնքան վհատութեն գոյժ տագնապէ , որչափ փրկութեն քաջալերեալ ձեռն կարկառէ · արդ՝ տո՛ւր տէր , տո՛ւր ողորմութի , առ տ͞մ ձայն գոհաբանեալ · օրհնեալ յաւիտեանս · ամէն ։

՛Նորին հոգւոյն. Աղերս առ Քս 'ի վերջին հիւանդութեան, և 'ի տագնապ մահու. մաղթելով՝ յաղագս դատաստանին՝ անխայել. և զտանջին որոգայթաւորութեան չարչարանաց իւր արդեամբ՝ ընկերել:

ԹՂԹ. ԿԶ:

Արդ՝ որոց և տուցէ զայս դեղ մաղթանաց այսր մատենի պարկեշտականի պաղատել սովաւ. եթէ 'ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղիցի և ես խնձս բանի՛ կցորդեալ նմա: Իսկ եթէ յարգարոց գուցէ յառաջեալն, գտայց և ես սոլիմբ ընդ նմին ողորմեալ նովաւ: Ապա թէ երջանկացի այնպիսին ինքեամբ, ինձ միայնոյ գրեալ զեղկութին, և ես ինձէն վկայեմ այսմիկ: Բայց յիշեսցէ նա զաղօթսն, և զբանս նորա զհոգեշունչս, թէ ո՞վ ոք վստահացի սիրտ ոք ունել. և կամ ո՞վ պարծեսցի մաքուր լինել 'ի մեղաց: Եւ զի ոչ յարեաւ մարդ երկրածին՝ ազատել 'ի պատասխանեաց. և ոչ ընտիր ինքնարշաւ վազուքն. և ոչ թէ և 'ի թուխս ամբարձման թեւոց բերեսցի. աւ որ զգոյշ լինիցի կրկին երկուցեալ 'ի վիմին խոկ հաստատութե՟՝ ուսեալ 'ի պօղոսէ · գուցէ անկեալ 'ի յերկիր՝ սահմանողի այսմ կանոնի իրաւադատի կշռեալ նմանեսցի ։ Այլ առցէ զայս կշտամբութի՟ մաքուրն նիւթ պսակաց · առ 'ի չիջանել անընտրողաբար յանձեռնհասան բարձրութէ՟ ։ Եւ պատժապարտն՝ առիթ ազատուէ՟, որով ամբարձեալ 'ի կործանմանէ հոգեւորական մահուն ապրեսցի յուսով ։ Իսկ ինձ եղիցի պատգամս այս բանի արժան փորագրեալ՝ ամենեւին անեղծանելի · որ փոխանակ իմոյ եղկելւոյս անձին մահացուի անդադար հնչմամբ հեծուե՟ լալոյ առանց լռելոյ միշտ աղաղակէ ։ Լիցի եւ ոսկերացս քակտեցելոց 'ի հողապատեան շիրիմ վերարկուին անմռունչձայնիւ՝ զայս խոստովանել · հայցէ եւ մարմնոյս 'ի հող լուծելոյ բարբառով իմն անազդելեաւ ծածկատեսիդ զայն պաղատել ։ Տ՟ր գթութեց՟, աղբիւր ողորմութեց՟ · պարգեւք բարութեց՟ · որդի բարձրելոյ տ՟ր յ՟ս ք՟ս · ողորմեա՛, խնայեա՛, մարդասիրեա՛ · նայեա՛ 'ի վտանգս · ակնարկեա՛ 'ի բեկութիս · խոնարհեա՛ց 'ի թշուառութիս · տես 'ի տարակոյս անձեռնհաս տագնապիս . հասի՛ր հաղորդել կորստականս կարեաց . շօշափեա՛ բժշկապէս զամենաթշուառ ախտաւորութիւս . ունկն մատուցես քաղցրութ՟բ ողորմագին հեծութ՟ես : Ո՛ւր ՚ի խորոցն անդնդոց մահուն գերեզմանի անմռնչելի հառաչմամբս . մացէ յականջս ամենալուր լսելեացդ ձայն պաղատանաց վատնեալ անգամոյս : Ումն զի գրաւական կենդանութ՟ես անապական է , անփոփոխ լիցի և սիրոյդ քոյ գթութ՟ի : Յորդ լե՛ր հեզութ՟բ տաժանաւորս տկարութ՟ե : Ա՛ռեալ պատկերիս մի՛ ոխս պահեսցես . ընդ անշունչ կերպարանիս մի՛ ՚ի դատ քննութեան մտցես . մահու տանջեցելոյս մի՛ հարուածս յաւելցես : Ընդ բեկեալ խեցեղէն անօթոյս մի՛ ուժգնութ՟բ մարտիցես . վճռաւ կոչկոճելոյս մի՛ բարկութ՟ի կրկնեսցես . կործանեալ շինուածոյս մի՛ պատուհաս մատուցես . շանս սպանելոյ մի՛ քարինս արձակեսցես . լռելոյս ջախջախելոյ մի՛ սատակս որոտասցես . հողոյս անպատուելոյ մի՛ իբր ամբարհաւանի ուժգին մռնչեսցես . զմոխիրս մերժելոյ մի՛ ՚ի դատ ընտրութ՟ե կոչեսցես . զփոշիս ցնդելոյ մի՛ իբր զքո դիմամարտ գտցես · զտիղմն տաղտկալի մի՛ իբր զոսոխ վարկանիցիս · ըզգարշութիւնս անդառնելի մի՛ իբր զբռնամարտիկ վանեսցես · զխէթս 'ի բաց ընկենլի մի՛ նիւթ գեհենին սահեսցես · զայսքանեաց բազմապատիկ բանից կշտամբեալս մի՛ վերստին յանդիմանեսցես · Այս ամենաթշուա՛ռ և խաւարարդել չիրմին են ահա սրտաբեկ և յօքնաթախիծ արգահատուի՟ք · հաստատեսցէ օրհնեալդ քո բան անփոփոխական լինել , ըստ սրտէ արգահատելոյս · քանզի և այժմ մինչ կենդանեօքս խօսիմ , մեռեալ եմ անհասիդ · ո՟չ 'ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիդ հրամանի անեղծ եմ հաւատովքս ։ Արդ աղաչեմ զքեզ տ՟ր քս՟ հայեաց յիս ողորմութ՟բ · և մի՛ թողացուսցես լինել անակլից ինձ բելիարայ · և զմահաբեկոյց տապանին աղդուն անկենդանաւորն թնդման թշուառն թաղման աղաղակ ձայնի հառաչման լալեաց քեզ հաշտեցուցեալ յարդեսցես լսել միայն բարեգութ , հոգեւոր , հզօր , մարդասէր , և հոգիդ քո բարի բնակեսցէ ը՟դ իս՝ լոյս առնելով ինձ 'ի խաւարին ։ Նմայեն ընդ իս կենարար քոյ կրից պաշտեցեալ_

մա_

մասունք · զի իբր զաւանդ գանձու զիս պահեալ 'ի քեզ՝ կենաց նորոգման ընծայեցուսցեն · օճառք անվատնելի զինուց ինձ պատկանեսցին · ընդ իս՝ յարակայեալ քարինք պարսից հոգեւոր հնարից զչարին հալածել զգունդ ։ Մարտն որ առիս, քեւ տ՟ր վանեսցի · զի թէ յարիցէ 'ի վ՟ր իմ՝ պատերազմել, տեսեալ զքաղաքն ունայն 'ի զօրաց, եւ զաղդողականացն գործի ապաձայն, զքեզ տ՟ր ունիմ մշտնջենաւոր եւ աննիրհելի պահապան ։ Ոի եթէ այժմ իսկ կանխաւ արագեալ յառաջ քան զօրն կատարածի, եւ անշաւիղ արգելան ինձ պատրաստեսցէ, առաքեմ զաղօթսն տ՟րունականս նմին գան մահու ։ Եթէ 'ի վայր զիս հնարի կործանել, զծնրադրութ՟ի արարչիդ · եթէ 'ի մոխիր երկրի թաւալել ձեռն բերիցէ, երեւացն տ՟յ 'ի նոյն մածուցումն զնա հերքեսցէ · եթէ վաստակս ինձ ցաւոց նիւթեսցէ, քրտունքն յուռթի արեամբքն զանգեալ փրկչիդ աշխարհի զնա լուեսցէ · եթէ յընթացից բարեաց զշունչս իմ պատանդեսցէ, կապանք ամենաստեղծիդ զիս արձակեսցէ · եթէ յուրացութ՟ի պարգեւաց լու սոյդ բռնադատեսցէ , հայհոյութ՟են համբերութ՟ի յիմ՟ծամարտիցն զնոսին ը՟ նոյն կարկեսցէ : Եթէ հարուածս նետից գաղտնաձիգ զինուց ինձ արձակեսցէ , կարթ հնարից աղեղանդ փառաց հօրն կապարճից նմին պատահեսցէ : Եթէ քողով լուսոյ խաւարականի մտանել ը՟ աչս անամօթեսցի , կռփուին գլխոյդ ձորձով պատեցեալ լրման ամենից զնա տանջեսցէ . եթէ մոլորեսցի զվստահութ՟ն ձեռինս կապել , եղէգնն մատուցեալ ՚ի յաջ գոյացուցչիդ զնա չարչարեալ ըմբերանեսցէ . եթէ ձաղանօք այպանման զիս կատակեսցէ , տանելն ծաղու ամենազօրիդ զնա հեգնեսցէ : Եթէ բժժանօք ինչ յուռութից կախարդել խորամանկեսցէ . ապտակն դիմաց հզօրիդ ո՟յ զնա սաստկա՟պ ամաչեցուսցէ . եթէ ՚ի մուտս գիշերային մթութ՟ խաւարախաբէութ՟ լինեալ մարտիցէ , ՚ի ճառագայթից լուսոյ երևման քոյ ո՟ր խայտառակեսցի . եթէ ՚ի միջօրէական տապոյ փորձութ՟ցն արեգակնակէզ վատանիչ խորշակին զիս ՚ի յարմատոց խախտել կարծիցէ , ՚ի զօրութ՟ նշանիդ լուսոյ խլեալ գօսասցի : Եթէ ՚ի փչմանն շնորհն ունայն զիս առնել հնարաւորեսրեսցի, թուքն զոր ընկալար տ՟րդ.քրոմբէից ընդ մեղաւորիս, զնա պատկառեցուսցէ. եթէ ժանիք ծախօղք ինձ ցուցանիցէ, լռութ՟ի երկնաւորիդ բերանոյ զնա պապանձեցուսցէ ։ Եթէ խածմունս աղուականս Հոգւոյս աղդեսցէ, բեւեռայն Հարմունք Հաստաղիդ բնաւից զնա կսկծեցուսցէ. եթէ յընթացս անիրաւութե՟ց խորհրդոց զիս մոլորեցուսցէ, սեւեռ.ք ոտից անհասանելւոյդ զնա կապեսցէ. եթէ Հրապոյրս ինձ դժնեայս արբուսցէ, քացախն ը՟ լեղւոյն խառնեալ՝ յարբումն բարերարիդ զնա դառնացուսցէ ։ Եթէ առաջին ճաշակմամբ փայտին զիս գտցէ, սոսկալի խորհրդով խաչին ըմբռնեալ. խոյառ պարտաւորեսցի. եթէ ընդվզել ընդդէմ Հնազանդութե՟ն տ՟ն Հրամանի զանձն իմ՝ ուսուսցէ, բերումն պարանոցի անսահմանելւոյդ զնա կործանեսցէ. եթէ 'ի մահ սատակման զիս վանեալ վիրաւորեսցէ, ստուար տեգ զինու մխելոյն 'ի կող ստեղծչիդ ադամայ զնա Հերձեսցէ. եթէ երկամբք վշտաց դժոխականաց զիս պարփակեսցէ, պատանացն կտաւ էից ունողիդ զնա ըմբռնեսցէ. եթէ յատակս մահու հայել զիս խարդախեսցէ, բնակել կենդանւոյդ 'ի վէմն մահու զնա մեռուսցէ. եթէ խնդասցէ ը̄ մարդկօրէնս իմ գայթագղութ̄ի, կրկին կորասցի կարկամեալ կամաւ, յորժամ՝ անմահն ա̄ծ յարուցեալ փառօք ընդ իւրն նորոգեաց զբնաւ մահացեալս : Եթէ ընդ լուծանել փոքր կապանացն հազարամէից բերկրեսցի, դողասցի կրկնեալ վերստին խոկոյն ընդ վերջին շղթայս անզերծ տագնապին ըմբռնման սաստկագունի յանլախձան տանջանարանին : Եթէ ընդ առաջին հարուածն դժուարեսցի, գոյժ կորստեան յետնում սատակմանն անշէջ գեհեննին, որ պատրաստեալն է նորա, և նորին հրեշտակաց, նմա պատմեսցի, որ յաւուրն մեծի՝ մեծին ատենի : Իսկ ինձ աղաւինելոյս 'ի քեզ տ̄ր յ̄ս. միայն Թագաւոր ինքնակալ զօրեղ. արարիչ երկնի և երկրի. և ա̄մ զարդուն, որ 'ի նմա: Որ գալստեանդ քոյ ակն ունիմ. և ողորմութ̄ե փրկչիդ սպասեալ յուսամ. 'ի յոտս քո անկանիմ, և զգարշապարիդ հետս համբուրեմ. զպարտութ̄ս խոստովանիմ, և զմեղսն հրապարակեմ. կշտամբանաց քարամբք կոծիմ, և հա

ւա

ռաչանօք սրտիս տառապանաւ· ՚ի խէթ խղճիս խոցոտիմ, և բոցով շնչոյս ճենճերիմ· աղի ցօղով արտասուացս այրիմ, և երիկամանցս ազդմամբ կիզանիմ· յուսակտուր օդով ցամաքիմ, և դառնաշունչ հողմով շրջանիմ· թախանձանաց բանիւ՟ երերիմ, և կողկողագին հեծութե՟ դողամ· տաժանելի կրիւք տուայտիմ, և տագնապաւ հոգւոյս տատանիմ· ՚ի կոծ մրրկաց ծփիմ; և ՚ի բախմանէ ալեաց սասանիմ· ՚ի լուր համբաւոյն սարսեմ, և յիշատակաւ ահին կորնչիմ· կերպարանօք ատենին հալիմ, և սպառնալեօք մեծիդ մեռանիմ: Տէր բազմագութ քաւիչ մարդասէր և երկայնամիտ· քաղցրութ՟ի անճառ· որ բարի և տուր տենչալի, և ներողութ՟ի անսահման· քանզի կարող ես յամի, և տալ ելս շնչոյս իմոյ փրկուե՟ մեծի· և քեզ ընդ Հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս· ամէն:

Նորին հանգոյն · Աղերս առ Ք՟ս, յաղագս մահուանն աւուր, և բարեաց հատուցանելի կենաց:

ԲԱՆ · ՂԳ ·:

Թագաւոր բարձրեալ հզօր ահաւոր, օրհնեալդ միայն տ՟ր յ՟ս. ք՟ս · քո է փոխարկել յան ակնկալս կենաց յուսահատութե՝ զսատակիչ անէծս առ կեցուցանող օրհնութ՟իս · զպարսաւանս վհատութե առ զուարթացուցիչ գովութ՟ի · ընդ ամօթոյն համարձակութ՟ի · ընդ պատկառանացն պատի՛ւ · ընդ տարագրութե՛ն յոյս բարութե · ընդ բաժանմանն ակնկալութ՟ի միութե · ընդ սպառնականացն բանից ողոքական սփոփանս · և միանգամ՝ դատապարտութե՛ն կրկին ազատութ՟ի : Ողորմեա՛ տ՟ր մահու մեղապարտիս յաւուր արձակման շնչոյս կենդանութե՛, մինչ աչացս ողորմագին հայեցուածս 'ի բարձունս կողկողիցի՝ զբազմակարծեան ուղղոյն զանգերծ ընթացիցն զանփախչելին ճանապարհ յաչս բերելով մտացս տեսլեամբ ա՟մի՛ վտանկեալ · և 'ի յերդ բնակութե՛ յարկիս նկատեալ յելիցն շաւիղ, թշուառացեալ կիսամեռուութ՟ք, դի-

մօք

նօք այլայլութե՟, տատանմամբ մատանցս՝ կարկամ հառաչմամբ, նուա՛ղ հեծութե՟ք, նրբական ձայնի՛ւ, յոգի թախծուե՟ յոքնամասնեայ տարակուսանաց 'ի խորոցս աներևութից զգործեցելոցս ողբալով հառաչեմ։ Կարօղ ես բարեգութ և անդ. հրաշագործել յաւէտ զօրեղութե՟ք, ասելով թէ ոչ՞ եղիջի՛ր յոգւոյդ խորտակմանէ · և կի՞մ թողեալ լիցին քեզ մեղանք քո · կամ թէ ե՛րթ 'ի խաղաղութի՟ սրբեալ 'ի մեղաց։ Եւ զոր յայնմ՝ ժամու ո՛չ ժամանեցից պաղատել, այսօր ընկալցիս մարդասիրապէս ո՛վ երկայնամիտ բազմաշնորհ ամենակեցոյց։ Յորժամ՝ որ այժմս բանաստաձոյձ խրոխտաձայն սիգացօղ բարձրապարանոց անկեալ դնի դի անկենդան · կարկեալ 'ի խօսից · կաշկանդեալ ձեռօք · լքեալ անդամօք · խփեալ շրթամբք · կափուցեալ աչօք · տախտակ անշարժուն · կոճղ կիսայրեաց · արձան անզգայ · պատկեր անբարբառ · գոյութի՟ անշունչ · ողորմելի տեսիլ · աշխարելի կերպարան · ողբալի օրինակ · եղկելի դէմք · արտօսրելի նմանութի՟ · լռեցեալ լեզու · ցամաքեալ խոտ · թօթափեալ ծաղիկ ·

ծո_

ծորեալ դեղ · չիջեալ դամբար · դատարկ կոկորդ · խոպանացեալ սիրտ · աղխեալ աղձարան · սպառեալ աղբիւր · թօշկացեալ մարմին · ժողխեալ որովայն · քակտեալ տաղաւար · կատորեալ ոստք · բաժանեալ յօդք · հատեալ ծառ · սղոցեալ արմատ · թողեալ տունկ · հնձեալ արտ · ստորախուզեալ բոյս · օտարացեալ բարեկամ · մոռացեալ պահեստ · թաղեալ գարշուն · մերժեալ ատելի · բարձեալ խէթ · անարգեալ կմախք · և իբր զան պիտանի առ ոտն կոխեալ ։ Կարօտեալ այլոց մաղթանաց, որք զհաւատոյ թշուառախս ձայնիւ նուաղեալ · աղերս հառաչման՝ ցօղով արտասուաց բարերարիդ գթութեն ՚ի բարձունս տարածանեն ։ Առ քեզ դարձն յեղանակեն արդահատելով զոր օրհնեմ · զնրշան խաչիդ փրկութեն՝ զոր երկրպագեմ · զյարութեն Ճշմարտութին՝ որում հաւատամ · զփառաւորդ քո յայտնութի՝ զոր փառաւորեմ · զդատաստանիդ ահաւորութի՝ զոր խոստովանիմ · զբանիցդ յանդիմանութի՝ յորմէ զարհուրիմ · զհոգւոյդ սրբոյ ինձ ուղեկցութի՝ զոր պաշտեմ · զօծմանդ անագրու-

թի՝

թ՟ի զոր և համբուրեմ · զթագաւորելն ընդ քեզ տ՟ր յ՟ս , որում պաղատիմ: Որդ լքաւ՝ մերժեցաւ՝ բարձաւ՝ տրոհեցաւ՝ փախեաւ՝ սրացաւ՝ տեղի ետ կցորդութ՟ի զուգու՟ե կենցաղոյս կենդանու՟ե · և յուսոյք որ 'ի քէն պարգև՝ մնացական և անշնջական յիշատակարան պահեցաւ : Տես ողորմու՟է 'ի տարակուսանս վտանգելոյս միայն բարեգութ , փառաւորեալ որդի ա՟յ , քաւել՝ բժշկել՝ կենագործել՝ պաշտպանել՝ նորոգել՝ նկարել՝ կանգնել՝ հաստատել՝ վերստին ստեղծագործել յերջանիկն անարատութ՟ի · քո է կարողութ՟ի , քո է փրկութ՟ի , քո է ողորմութ՟ի , չէք քո անկարութ՟ի · այլ ամենեւին զօրութ՟ի , բարձրութ՟ի իշխանութ՟ի · անվախճան թագաւորութ՟ի · իսկութ՟ի · ինքնութ՟ի · ամենատեղի բացարձակութ՟ի · բարերարութ՟ի · լուսաւորութ՟ի · փառաւորեալ տիրապէս · անպակաս և անյաւելուած · խնկեալ խորհրդով անթարգմանելեաւ յերրորդու՟եդ սրբու՟մ զոհաբանել յաւէտ , և ես առ սմին 'ի նոյն պաշտօն հաւասարու՟ե միապատիւ զուգականու՟ե , երէկ և այսօր և յաւիտենից յաւիտեանս , ամէն :

Ն՟-

Նորին հանճարոյն · Բանք յաղագս ահեղ դատաստանին հատուցման ։

ԲԱՆ · Ա ·

Զայն հառաչանաց հեծութեան սրտի ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ՝ տեսողդ գաղտնեաց . և մատուցեալ եդեալ ՚ի հուր թախծութեան անձին տոչորման պտուղ ըղձից ձենձերոյ՝ սասանեալ մտացս՝ բուրվառաւ կամացս առաքել առ քեզ ։ Այլ հոտոտեսցիս հայեսցիս գթած՝ քան ՚ի պատարագն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բարդութեան ։ Ընկալ զսակաւամասնեայ բանիցս յօդուած քեզ ՚ի հաճութիւն, և մի՛ ՚ի բարկութիւն . ելցէ ՚ի խորոց սրտի զգայութեանց խորհրդակիր սենեկիս վաղվաղակի ժամանել առ քեզ կամաւորական նուէր բանական զոհիս, ողջակիզեալ զօրութեամբ ճարպոյ, որ յիսն է պարարտութիւն ։ Այլ ՚ի դնելս իմ՝ ընդ քեզ դատ խառնեալ աղերսիւ հզօր՝ մի՛ իբրև ընդ համբարձութեամբ ձեռաց ամբարշտեալն յակոբու ըստ բողոքելոյն եսայեայ, և իբր զանխրատութիւն բաբելոնի՝ տաղտ կալի քեզ երեւեսցի · զոր առակ եօթանասներորդի երկրորդի սաղմոսին ազդէ · այլ իբրեւ զբուրեալ խունկն հաճոյական խորանին սեղանոյ , զոր դաւիթ՟ն կանգնեալ նորոգեաց , տապանակին հանգստեան 'ի գերուէ՛ն դարձելոյ · որ 'ի վերստին դիւտ կորուսեալս հոգւոյ առակի , ընդունելի կամաց քոյ լիցի ։ Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաստանիդ հատուցմանն ուժգինս հնչեցեալ 'ի ձորն վրէժխնդրութե՟՝ կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմունս · այժմէն գուշակեալ շարժմունս յուզմանց ներհակականաց՝ որ յիմում անձին ցուցանի , խռովութ՟իք ամբոխից հարեալք ընդ միմեանս՝ զէն առասսեր խորհրդոցս · հոյլք չարեաց ը՟ բարեաց , եւ գերեալ զիս 'ի մահ ը՟ հին դիպուածոյն , որ նախ քան զշնորհին ժամանել առ իս , զոր ընտրեալն առաքելականացն դասուց պօղոս առօրինակեալ զմոլեկս , զքո՟ի փրկութ՟ին յաղթող ցուցանէ ։ Ս՟ զի թէ մեծ է օր տ՟ն , ո՟պ գիր ասէ՝՝ 'ի հովիտն անձուկ ասպարիսին յոլովափաթու եւ հեղեղատին կեդրոնի , փոքր հանդիսարանացն իրաւանց ժամանադրու՟նեց · որ կենցազակամնաւ այսր յաւիտենից զհանդերձ ձեռոցն ինձ կերպարանէն. ապա եւ յաւէտ մերձեցաւ 'ի վր̃ իմ արքայութե̃նո̃յ մարմնին եղելոյ, մեծապէս գտեալ զիս առ իթ վնասուց բազմաց տոկանեաց զանազան մասանց յանդիմանողաց ձե̃ մարտապատմից. քան զձեռին նորին վերակացումն անդ ուրեմն երբեմն 'ի հարուածս եդովմայեցւոց եւ փղշտացւոց. եւ այլ բարբարոս ազգաց ։ Քանզի այն ընտրութիւն ամօք չափեցաւ. իսկ պատուհաս խնամս պարտեաց առանց աւարտման ունի զսահման ։ Ո՜հ գուբ նաեւ որոգայթ անձնօգուլրելի. ըստ մարգարէին եւ առաքելոյն տագնապաւ մեծաւ առ դուրս լինձ հասեալ զամօթն մշտնջենաւոր աստէն գծագրել ։ Որ միայն քո է հրաշագործել պտուղս դեղոց 'ի հնարս կենաց ամենավարան տարակուսանաց հոգոց վտանգից. քաւիչ յումի. գովեալ 'ի փառս անձառս անսահմանելի բարձրութե̃ն յաւիտեանս յաւիտենից ։

◆

Սորին հաւնողի, Գուարճեան՝ բանք յաղագս ահաւոր դատաստանին, և տանջանալեաց գեհեննային:

ԲԱՆ. Բ.

Եւ արդ զի՞նչ գործեսցես անձն իմ կորուսեալ. կամ ո՞ւր թաքիցես. կամ զիա՞րդ ապրեսցիս. կամ որպէս ելցես 'ի մեղաց բանդէ: Քանզի բազում են պարտիքդ, և անթիւ հատուցմունքն. սաստիկ կշտամբանքն, և անվախճան նախատինքն. անողորմ են հրեշտակքն, և անկաշառ դատաւորն. հզօր ատեանն, և անաչառ բեմքն. քստմնելի սպառնալիքն, և անողորմ հատուցմունքն. ահարկու հրամանքն, և մերկապարանոց յանդիմանութիւնքն. հրեղէն են գետքն, և անանցանելի են վտակքն. թանձրամած խաւարն, և արտաքոյ այցելութեան մառախուղն. ապականուն է դուռն, և մշտնջենաւոր է տագնապն. ամենաշրաւ տարտարոսն, և անզերծ սառնամանիքն: Եւ արդ արդարև քեզ են գանձեալ դառնինքս այսոքիկ, դժնդակք և տաժանելի օթեվանք, անըմբերելեացդ պատուհասից

ով

ո՜վ անարժան անձն իմ մեղաւոր · չարագործ · պոռնիկ · բազմաբիծ , և սահման անդաստանի բնաւին անմաքրութեան։

Ահա զարդիւնս գործոց ձեռաց քոյ ժառանգեցես թիւրեալդ 'ի յուղղութեանց , և զառածեալդ 'ի մաքրութեանց · տարագրեալդ յարդարութեանց, և 'ի կարգաց պարկեշտութեանց · ունայնդ 'ի լնութեանց հոգեպարգև հարստութեանց · նախանձարկու բարերարին՝ և ամենակալ թագաւորին։ Այլ քանզի կառուցեր քեզ անել արգելան և անփախչելի որոգայթ, խոստովանեալ քեզէն զանբժշկականդ քո վէր , և զանօրինակդ հարուած վկայելով զանձինդ զպարտականդ մահու զանբուժելիդ բեկութիւն · ո՜վ չարդ 'ի բարեաց · ո՜վ դառնութիւնդ 'ի քաղցրութեանց · ո՜վ խաւարդ 'ի լուսազարմից · ո՜վ կապտեալդ 'ի պճնելոց · ո՜վ գորովեալդ 'ի գովելոց · ո՜վ ամբարիշտ 'ի բարեպաշտից · ո՜վ շնչականդ 'ի բանականաց · ո՜վ անմիտդ 'ի միտաւորաց · ո՜վ անհանճարդ յիմաստնոց · ո՜վ անմաքուրդ յընտրելոց · ո՜վ մահկանացուդ 'ի կենդանեաց · ո՜վ խոհերականդ 'ի աե՟ց · ո՜վ արբշիռդ 'ի պարկեշտից · ո՜վ կեղծաւորդ յարդարոց · ո՜վ անպիտանդ

՚ի խախտանեաց · ո՜վ անարգդ ՚ի փառաւորաց · ո՜վ նուաստդ յառաւելուենց · ո՜վ դերեդ ՚ի դերագունից · ո՜վ նուաստագոյնդ ՚ի վեհից · ո՜վ աղքատդ յընչեղաց · ո՜վ անարժանդ ՚ի փրկուենց · ո՜վ տնանկդ ՚ի բարձրուենց և ՚ի հոգևոր հարստութենց · և հատաճածեալդ յօրհնելոյ ·

Նորին հոխոշէ · Յաղագս ահեղ դատաստանի, և պատժոց գեհենի, որ ծնան ապերախտելոյ առ երախտիսն այ:

ԲԱՆ · ԿԱ ·

Բայց քանզի յոյժ արդար է բանս իմաստանոցն քնի այ առ իս քան առ սկզբնահայրն չարեաց սատանայ: Զի վն նր յայնսակս յայտնեցաւ՝ զի լուծցէ զգործս նորին · և վն իմ՝ զի զհնացեալ պատկերս նորոգեսցէ, առեալ զկերպարանս բոլոր էութեն կերպլին իսկութե մեծին այ՝ միացոյց ինքեան անշփոթ խառնութե: Նա ո՛չ են շնորհեալ ՚ի բազմացն · և ինձ զբովանդակն էհեղ առատութե: Նա նր ո՛չ երբեք չարչարեալ, և վն իմ հանապազ պատարագի · նա անհաղորդ է կենացն, և ես միշտ վայելեմ ՚ի փրկութենն․ նա վանեալ է խաչիւն, և ես զօրացեալ նշանաւն․ նա հերքեալ ՚ի լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն․ նա ոչ խոստացաւ հանգիստ յերկրի, և ինձ զերկինս սեպհականեաց ։ Օնորայն կորեայց զառհաւատչեայ, և զինն առանց խզելոյ յարակայեաց․ զնա յերամակս խողլիցն արգել, և յիս ինքն զօրացաւ․ զնա կարձաց օրինակեաց, և զիս ճառագայթ նշանակեաց․ զնա սողնոց նմանեցոյց, և զիս իւրոյն անուամբ կնքեաց ։ Իսկ ես զերախտիսն այ լքի զայսքանեաց բարեաց արարողի, և չարին զկնի միտեցայ, հայել ընդ նմին յատակս դժոխոց ։ Ահա անարժանս բարեաց․ անձինս երախտեաց․ անընդունակս սիրոյ․ տռուամբք մեղաց ձգեալս․ յերիկամունս խորոց խոցեալս․ քանդեալ ծառս արմաւենւոյ․ գինիս յեղաշրջեալ․ ցօրեանս հեղեղեալ․ մուրհակս ջրեալ․ վճիռս պատառեալ․ կնիքս այլակերպեալ․ նմանութիւնն փոխեալ․ արկանելիքս կիզեալ․ ըմպանակս կորուսեալ․ նաւս ընկղմեալ․ մարգարիտս մանրեալ․ ակնս պատուականս սուզեալ․ տունկս քօսացեալ․ նեցուկս խորտակեալ․

փայտս

փայլս ամենևին փտեալ․ մանրադորս աղաւաղեալ․ յարկս տապալեալ․ խորանս խարխալեալ․ բոյսս արմատաքի խլեալ․ ձէթս հեղեալ 'ի գուեհս աղբևաց․ կանթնս հոսեալ 'ի կոյտս մոխրոյ․ այլս մահու 'ի յարեացն գնդից։ Քանզի միշտ խրատեալ ես երուսաղէմի առակաւ բաբելոնի 'ի մարգարէիցն ձայնից անձն իմ՝ ողբալ՝ և ոչինչ խրատեցեալ․ որ աստէն անդոսնեալ եմ՝, և անդէն խայտառակեալ․ աստ դորոլեալ, և անդ կշտամբեալ․ աստ ձաղեալ, և անդ նախատեալ․ աստ թշնամանեալ, և անդ յանդիմանեալ․ աստուստ ապշեալ, և անտանոր լքեալ․ աստ հեծումն, և անդ հառաչանք․ աստ կարծիս, և անդ կատարած․ աստ խէթ, և անդ հատուցումն․ աստ արկածք, և անդ հանդէպք դատաստանի․ ուր ոչ է բան իրաւանց՝ և ոչ ձայն պաղատանաց․ ոչ թիւք աւուրց՝ և ոչ ելք ժամանակաց․ ոչ ուղիք յուսոյ՝ և ոչ դրունք ողորմութեանց․ ոչ աջ պաշտպանութեան, և ոչ ձեռն այցելութեան։ Այլ դու ապաւինութիւն․ դու ինքն փրկութիւն․ դու այցելութիւն․ դու և քաւութիւն․ դու երանութիւնք և բժշկութիւն․ քո ողորմութիւն, միայն հզօր կենդանի անճառ․ տ͞ր յ͞ս ք͞ս բարերար ա͞ծ․ օրհնեալ օրհնեալ և դարձեալ օրհնեալ, ընդ հողւոյդ քո ս͞բ յաւէտ բարձրացեալ՝ ՚ի փառս հայրենի խոկութե͞ մեծիդ յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

՚Աորէն հաճոյէ․ Պարզեալ բանս՝ ՚ի խորհուրդ անհեղ պատուիրանէն, և ՚ի տանջանս գեհենին։

ԲԱ՛Ն․ ՀԹ․

Յիշեա՛ տ͞ր, տ͞ր գթութեանց, սիրողդ իրաւանց ա͞ծ ճշմարիտ ։ Նայեա՛ վերստին ՚ի բնութենս կերպարան միշտ սխալական ։ Քննեա՛ ինձ դարձեալ զամէնընթաց տարածմունս ելից արեանս շարժողութե͞ ․ Բժշկապէս մատիր տեսանել զի մարդեամ հաստատեալ մտօք խակութե͞ թերի խորհրդոց՝ յայն ինչ, զոր դու իսկ վկայեցեր տեսողդ ոչէից ․ միայն դու անմասն ստութե͞ խաւարի ։ Ապա իրաւունս է դրել ինձ ընդ մեղուցեալսն մարդկօրէն վրիպանաց սխալմամբ ․ պարտեալ կրկին՝ իբր զերկրածին մահացու մարմին․ քան բանիդ քում սուտ երեւել ։ Քանզի արդարեւ գիտակ իսկ ես, թէ չար է արարին՝ եւ ընդաբոյս չարութեանն մեր. եւ ոչ փոփոխին խորհուրդք մեր յաւիտեան ըստ հոգեհանձար իմաստնոյն կանխազեկոյց առակի ։ Փեթեւսայ՛ զսաստկութիւն տանջանացն որ պատրաստեալ է եւ մնայ ինձ, արկանել զորդիս գեհենին զարդ մահուն յաւիտենականի ։ Բարձ զամօթոյն պարտիս, որ պահեալ է յայտնել թշուառականիս յետին ատենին յանդիմանութեան ։ Սրատ խաղաղութեն յառաջապարգեւ ողորմութեան քո ընծայեցա՛. զի մի՛ անտանելիքն ահաւորութեն 'ի ցոյց ինձ եկեալ՝ կերպարանեսցին անյոյս ապշութեան՝ եւ կենաց զղջման առաջի կարգեալ ։ Դատաստանն ահաւոր. անկաշառ եւ անխաբելի դատաւորն. ամօթն սոսկալի. կշտամբանքն սարսափելի. յանդիմանութիւն անփախչելի. տագնապն անձողոպրելի. պակուցումնն անխրախուսելի. դողումնն անլձարելի. լալումն անսփոփելի. կրճումնն ատամանց անբժշկելի. ապականութիւն անողջանալի. անէծքն սարսափելի ահծային քո բանիդ. փակումն դրթոյն, եւ արգելումն ողորմութեանն. որ ընդ դա լարելն երկնի՝ և ընդ երկրի դղրդելն ընդ կարծրութ՟ն յատակին՝ ըստ կուտակելոյ կոհակաց խռովումն ծովու իբր փախստեան կերպ ցուցանելով, մի զմիոյ հետս խափանեն կասեալ յերկոցունց . և տատանեալ տատանեալ լայնատարածգետնոյս թանձրութ՟ն ՚ի հիմանց անտի , ընդ ուժգնակի բախման թնդելոյ ներքնային խորոց հարթէ զլերինս. և հալեալ հրդեհին բնութ՟իք վիմաց և ամ՟ տարերաց գոյից . այլայլին երկինք յանեղծ փոփոխութ՟ն . և յեղանակին արարածք տարերօք խռովք ՚ի նորոգ նմանութ՟ն : Ծածկութ՟իք գործոց հրապարակին . և աներևոյթք կրից մեր յայտնեին . վարք կրօնից ներգործեցելոց ՚ի մարմինս մեր նկարին . Թագաւորն երկնից յատենի նստի , վճիռ հատուցմանն ՚ի ձեռին իւրում . Ո՛հ վա՜յ ինձ եօթնիցս անգամ կրկին եղկութ՟ն , ըստ չափոյ կշռութ՟ն այսր համարու , որ զամբաւութ՟իս թուոց պարագրէ : Ո՜ ինչ գործեցից ողբալիս հոգւոյ յայսմ մեծի աւուր վտանգի . Զի սաստիկ է յիշատակն իսկ յառաջել քան զհանդիպումն : Ո՜ որ ոմն մարգարէ զօրինակին նմանութ՟ի ՚ի դէմս բե րելով, զձեռս տագնապի անզերծ փախստեանն նշանակէ ասելովն, զօրօրինակ եթէ փախնուցու ոք ՚ի ձեռաց առիւծու, և պատահեսցէ նմա արջ. և փախնուցու յերեսաց արջոյն, և մտանիցէ ՚ի տուն, և յեցուսցէ զձեռն իւր ՚ի յորմ՛, և խածանիցէ զնա օձ։ Եւ դարձեալ կրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իրի զտեսիլն քստմնելի. ո՛չ ապաքէն, ասէ՝ խաւար է օր Տեառն. օր խաւարոյ և մթոյ. և օր ամպոյ և մառախղոյ։ Յորժամ հրեշտակն պահպանողական կենակից, հզօր ոստիկան, իրաւամբք ամբաստանեսցէ, և հատուցանողն ահաւոր արդարութեամբ յանդիմանեսցէ։ Սպասաւորք թագաւորին առանց խնայելոյ խուժապեն. զոմանս ՚ի կեանս հրաւիրեն, և զոմանս յամօթն դատապարտեն. կիսոց դէմս լցեալս ծաղու ցուցանեն, և ինձ ահարկուս և քստմնելիս երևեցուցանեն. ոմանց պսակս լուսապաճոյճ մատուցանեն, և այլոց կորուստ մահու բողոքեն. արդարոյն ձայն աւետեաց՝ և ինձ դոյժ անվախճան վշտաց։ Յորժամ առ բարիսն մահու յաղթութեան իսպառ մեռանի, և ինձ չարագործիս կրկին յարակայի. ուր դրանն բաղխել ոչինչ ազդիցէ՝ վճարեղեալ գթութե՟ն աւ խս ։ Յորժամ դայլրութիւք հրաշիցն զարմանալեաց՝ որ են ծածկե՟լք յայժմուցս հասարակաց վարուցն տեսակք մարդկայինն բնութե՟ս գործոց, յաղագս որոյ եղեն գոյութիւք տ՟մեկից՝ յիւրաքանչիւր մարմինս անապականս գրութ՟ իսկոյն երևելին. և խորութիւք անճառիցն կնքեցելոց յիմաստից աստեացս, առաջի աչաց մերոց կերպարանին ։ Մեր այժմ՝ շահավաճառութիւք ողքոց և արտասուաց զերկինս գրաւեն, և անդ իբր զսպաժաման ընդունայնութիւք արհամարհեալք լքանին ։ Հառաչմունք հեծութե՟ ոչ կանխաւ աստի առաքեալ՝ չէ երբէք գտանել անդէն ։ Ողորմութիւք ձշդուլ սերմանեալ ոչ պայծառ վառմամբ գնան առաջի ։ Մեր տապանն նախայանցիցն, և կտակարանն տիրանարգիցն, և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ մեծաձայնս դատախազին ։ Յորում սոսկալի վայրի, ոմն զուխտն կցորդութե՟ հայրենի, և ոմն զխորանն վկայութե՟ անտեսիցն, և ոմն զարիւն մեծին տ՟յ, ամբաստան իմն իրաւացի առաջի իմ տարածանեն ։ Օտանջանարանին բզ՟մապատիկս ան

ձամբ

ճամբ անձին աստէն իսկ պատրաստեցի . զխորհուրդ մխիթարեցայց համառօտեալս յուսոյ . զի եթէ զօրքն լուսոյ դասուք արդարոցն , որ փառաւորեալքն են երանութ̃ք, սարսեն դողալով, և ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ երեսաց մեծ դատաստանին , ես եղկելիս աւանդակորոյս՝ սատակման որդիս ուր երևեցայց . որ ոչ միայն չեմ պսակելոյ , այլ և պատուհասն իմ անտանելի և կորուստն անսպառելի : Այլ արագեա՛ ամենապարգև զօրութ̃ի անճառ ձեռն փրկութ̃ 'ի կորուստ գրաւելոյս . զի օգտեալ 'ի քէն՝ դարձայց միւսանգամ 'ի դրանց դժոխոց , ամենապատրաստ հանդերձեալ ամենեւին անվտանգելի պրծել 'ի պատժոց : Աստանօր տեսեալ մտացս իմաստից զապագայից դիպուածս, բաւականացել 'ի լուր երկիւղին 'ի տագնապէ տանջանաց՝ ահին համբաւով, կամօք քո բարեաց զերծել ապրեցայց . և մի մատնեցայց կորեանցն առիւծուց, որք խնդրեն 'ի քէն զիս 'ի կերակուր՝ ծախել ատամամբքն գազանաւն . զի զորովայն մահուն լցուցեալ զաստուատ պարարեալս անդ ձգեալ հալեն . ուր անսպառ պա հի մնացուած մթերիցն 'ի ծախումն յաւիտենից ։ Ո՛վ դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց սատակման 'ի կենս և յերանութ՟ի. բնաւից ապաւէն, թագաւոր լուսոյ, ո՛ր յս՟ քս՟. օրհնեալ յաւիտեանս, ամէն ։

Մաղթանք զօրաւորք արհաւրաց գիշերայնոյ ։

ԲԱ՛Ն ։ ՂԲ ։

Ընկալ քաղցրութ՟բ ո՛ր ա՛ծ հզօր զդառնացեալս զաղաչանս. մատի՛ր գթութ՟բ առ պատկառեալս դիմօք. փարատեա՛ ամէնապարգև զամօթական տխրութիւնս. բա՛րձ յինէն ողորմած զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա՛ հնարաւոր զմահացու կրթութիւնս. աւարեա՛ միշտ յաղթօղ զխաբողին հաճութիւնս. բացադրեա՛ վերնային զմոլեգոյն մառախուղ. կնքեա՛ կեցուցիչ զկորուսչին ընթացմունս. ցրուեա՛ ծածկատես զըմբռնողին չար դաւմունս. խորտակեա՛ անքննելին զմարտողին դիմեցմունս. ո՛նագրեա՛ քո անուամբ ըզլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա՛ քո ձեռամբ զառաստաղ տաճարիս.

գծազծագրեա՛ քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս. կերպարեա՛ զքո նշանդ ՚ի հետս ելից մաղթողիս. ամրացո՛ քո աջովդ զհանգստեանս խշտի. մաքրեսցես ՚ի հաղբից զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս. անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցես ՚ի դիմի ընդդէմ դիւային դասու: Տո՛ւր հանգիստ բերկրութե՟ մահահանգոյն նիրհման ՚ի խորութե՟ գիշերիս, բարեխօսութե՟ հայցուածոց սրբոյ ա՟ծածնիդ և ա՟մ ընտրելոց, ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան տեսութե՟ց զգայարանացս իմաստից՝ անզարհուրելի զետեղմամբ ՚ի ծփական խռովութե՟ց, կենցաղական զբաղմանց, անուրջական երազոց, խօլական ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անխախտելի պաշտպանեալ, և սթափեալ վերստին ՚ի ննջմանէ ծանրութե՟ ամենազգաստ արթնութ՟բ, հոգենորոգ զուարթութ՟բ ՚ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոյ քեզ ամենօրհնեալ Թագաւոր փառաց անճառելից փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ յերկինս առաքել։ Ո՛վ դու փառաւորեալ ես յա՟մ արարածոց յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Նորին հաւաքողէ, Մաղթանաց գեղեցկայէն, յանձնարարութե՟ անձին ՚ի խնամս ա՟յ, և ՚ի պահպանութե՟ սբ՟յ։

ԲԱՆ․ ՂԲ։

ՏԷՐ ա՟ծ գթութեանց և ա՟ծ ողորմութեանց․ անուն մեծութեան․ ձայն ահաւորութեան․ կոչումն սաստկութեան․ լուր անհասութեան․ բարբառ դողութեան․ հնչումն հիացման․ յուսադրութիւն բարերարութեան ամենողորմ քաղցրութեան․ յորմէ երկուցեալ սասանին ա՟մ բնութիւնք եղելոց։ ՚Ի քո սպառնալեաց ահէդ պակուցման սաւառնին սերովբէք, ամփոփին քրովբէք․ պարուրին պարք լուսակերպից․ երկնչին հիացմամբ բոլոր պետութիւնք վերնոցն․ նոյնք ցնծան դողութե՟ մեծաւ ՚ի մի նուակատիս բերկրութեան․ զարհուրին դեւք․ ընկրկին չարութեանցն դունդք․ պակասին խաւարասիրացն հոգիք, անդնդոց մատնին հրեշտակք օտարին․ կապին նշանաւ խաչին յարձակմունք դիմամարտին · փակին 'ի ստորին բանտի քինաւոր ամաղեկացիքն · անխզելի հանգուցիւք պաշարին խումբք հակառակորդին · արգելին անզերծ զնդանաւ մա հաղինացն կաճառք · պնդին 'ի մետաղս ահեղ հրամանիդ այսականացն գումարք · պապանձին կարկեալ ընդդիմաբանիցն դասակցունք · պարաւանդին հիւծմամբ կորստեան աներևութիցն ժողովք · անլոյծ շղթայիւք նեղին առաքելութիւք դերաքրիստոսին · Ահա կարկառեմ՝ մատամբ ձեռինս ըզտ̄նագրութ̃ի նշանիդ 'ի ժամ՝ գիշերիս · որ ոչ մթանաս խաւարաւ անգիտուէ̃ ամենևին տեսականու̃ն , քանթէ 'ի լոյս անմատոյց հանգուցեալ բնակես ։ Ընկա՛լ զաղաչօղս վտանգաւոր գոհաբա՛ն ընդ պահպանու̃թ թևոց հզօրիդ · փրկեա՛ 'ի ցնորից եկամուտ պղտորութեց · տ̄ր արա՛ զզգայարան հայելեաց սրտիս նկատմանց · ամրացո՛ փայտիւ̂դ կենաց 'ի տիրական անրջոց · արեամբ քո սրսկեա՛ զշրջարկութ̃իս կայից · զհետս ելումնիցն կաթու̂ածով կենարար կողիդ գծագրեա՛ · երդոցն պահպանարան քառակեր-

ալիդ ձեւակերպութ՟ն եղիցի · հանդէպ
տեսութ՟ե աչացս ամբարձման փրկականդ քո կրից խորհուրդ առդիցի · ե՟
բարաւոր յարկիս չարչարանաց քոց գործի հաստիցի · զծառոյդ օրհնութ՟ե
հաւատքյուսոյ իմոյ կախեսցի : Արգե՛լ տ՟ր սովաւ զսատակիչն հոգւոց :
Ո՟ոյէ անխափան պաշտպանն լուսոյ ·
և ընդ սաստիկ ծանրութ՟ե ցաւոցս և
զբեռն պարտեացս թեթեւացո՛, զոր 'ի
լարանի մտացս անփոփման մահճիցս
անկողնի ուշաբերեալ զյուսահատութ՟եցն դառն պտղոյն, խոստովանիմ
ամենագիտիդ զանհամար մասունս
գործոց չարաչար անօրէնու՟եցս : Հանգո՛ զվաստակեալս 'ի բազմածուփս աշխատութենէ · բա՛րձ զտագնապ տարակուսանաց ոգւոյս կործանման · ըզդառնութ՟ին ե՟ վշտացն · զհեծութ՟ին ե՟ կարեացն · զանձկութ՟ին ե՟ թշուառուե՟ցն ·
զհառաչմունսն ե՟ խորտակմանցն · զբեկումն ընդ ապշութ՟եցն · զթմբրութ՟ին ընդ շրտմանցն · զարբեցութ՟ին
ընդ յիմարութ՟եցն · զթերամտութ՟ին
ընդ խելագարութ՟եցն · զսառուցմն սիրոյն, և զհրայրին ջերմութ՟ի աղօ՛թական ախտին : Օժանդակ լեր տկարու-

թ՟ե

թն՟ բազմատխուրս տա՟րտամուե՟ բարեգործ աջողդ շնորհի. ձեռամբդ նորոգողի. մատամբդ կենդանաբաշխի. փառօքդ մշտափայլի. յարակայութե՟դ անեղծի. երեսօքդ զուարթականի. խնկուե՟ կիդ պաշտելի. բարձրուե՟դ երկրպագելի։ Հատո՛ զչարաչար հեծու՟ի կորստական խեղդման. զնոր գիւտ չարին. զհին խարդախութ՟ի բանսարկուին. զօտար ազդեցմունս ՚ի մահ կարթողին. զանյարմարական երևոյթս հանապազորդեան եղեռնագործին. զառ այս հնարագրութ՟ին դժնդակ դիւին. զողոքական բոցաշնչու՟ի ձգօղ կախարդին։ Պահեա՛ ՚ի տեղւոջ համգստեան մեռօրինակ այսր գագրման, յաներևոյթ միտածութ՟եց. ՚ի մասնաւոր սխալութ՟եց. ՚ի մեծագոյն գայթագղութ՟եց. ՚ի փոքրագոյն ստնատութ՟եց. ՚ի խառնեալ չար ձանձրութ՟եց։ Հեռացո՛ զանհանդէպ միտածու՟ի ՚ի ըղձգայուե՟ց ծառայիս յանցաւորի. զկիրս բասրելիս. զվարս թշնամանելիս. զդիւռամածս պատկառելիս. զհետս վրիպելիս. զպատիրս ձաղելիս. զխորհուրդ. անդոսնելիս. զաւելաբանութ՟իս նշկահելիս։ Ի՛ նախալ հոգւոյ և անշաղախ մարմնով զապաւինեալս 'ի քեզ հանդերձեա՛ , 'ի շնչմանէ հողմոց . 'ի զարկմանէ բռնութ՟եց . 'ի բախմանէ փոթորկաց . 'ի յոստմանէ մրրկաց . 'ի յարձակմանէ գազանաց : 'Ի կափման աչացս հայեցուած սրտիս մի՛ ստուերասցի , այլ զուարթասցի , պայծառասցի , վայելչասցի , ը՟ քեզ փայլեսցի՝ ո՟ր յո՟ քո՟ լուսաւոր վառմամբ անշիջանելեաւ : Նանիւ քո սրբեա՛ զպատսպարանս բազմականիս , 'ի խորամանկութ՟եց , 'ի զբաղմանց , 'ի քո ատելի յիշատակաց , 'ի վերնամարտ մտածմանց , 'ի քրէական մորոսութ՟եց , 'ի տիրանենգ անշնորհութ՟եց , յանձ ընդդէմ հերձուածութ՟եց : Գնդիւք վերնայնոցդ վերակացու ինձ լիցիս . պետութ՟ք , իշխանութ՟ք , զօրաւորօքն անյաղթականաց՝ մաքուր մատակարարաց ա՟ւծութ՟եդ : Առաքեալքն աւետեաց աւետարանաւն : Մարգարէքն կտակարանօքն : Մաղթանք երջանկացն 'ի կատարածի աւուրն ընծայեալ : Որովք նիրհեցից երկիւղիւ ըստ քեզ տրամութ՟բ , եւ զարթեայց շնորհօք քո կրկին ուրախութ՟բ : Եթէ մհատութ՟բ ննջեցից , յարեայց դարձեալ հոգեւորական բերկրութ՟բ : Եթէ ընկողմնեցայց մե-

ղա

ղանօք, կանգնեցայց վերստին զատել ՚ի խղճէ անաղտ ամբծութբ : Լուր խնդրուածոց ամենահաւաչ ձայնիս հեծութե միայն բազմագութ, բարեխօսութբ սրբոյ ածածնի, և ամ արդարոց և նահատակաց ընտրելոց : Եւ քեզ փառք յամենեցունց իմովս գոհմամբ վերառաքեցեալ սրբովք զուարթնոցն անմահականաց դասուց՝ ի գովեստ հօր քո այ մերոյ, և հոգւոյդ սրբոյ բնաւից հաստողի, և յօրինողի, յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Նորին հաւէողի . Մաղթանք վեհերային առ քն, յանձնարարութե անձին ՚ի պահպանողական զօրութե սբյ խաչին :

ԲԱՆ. ՂԴ.

Տ յաւիտենական բարերար և ամենակալ . ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ . կեանք ՚ի մահու, և լոյս ՚ի խաւարի . յոյս ակնունողաց, և երկայնմտութի տարակուսելոց, որ ամենարուեստ իմաստութբ քո դարձուցանես յայգ զստուերս մահու . աննուաղ ծագումն և անմուտ արեգակն · քանզի ո՛չ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ · որում կրկնի ծունր երկրպագութեան ամ'եղելոց · երկնաւորաց և երկրաւորաց , և սանդարամետականաց · որ լսես զհեծութիւն կապելոց , և հայիս յաղօթս խոնարհաց , և ընդունիս զխնդրուածս նց · ած իմ և թագաւոր իմ · կեանք իմ և ապաւէն իմ · յոյս իմ և վստահութի իմ · յս քս ածդ ամի , որդ հանգուցեալ 'ի հոգիս սրբոց · մխիթարութի վշտաց՝ և քաւարան մեղուցելոց · որ գիտես զամ յառաջ քան զլինել նց : Առաքեա զպահպանողական զօրութի աջոյ քո , և փրկեա զիս յերկեղէ գիշերի , և 'ի դիւէ չարէ · որպէս զի զգիշատակ սոսկալի և սբ քո անուանդ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձութեն շնչոյ , կեցից պահպանեալ է այնուսիկ որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ : Եւ 'ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ , զոր ածային արեամբ քո ներկել նորոգեցեր , և 'ի նոյն շնորհ որդեգրութեն զմեզ մկրտեցեր , և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր · այսու պարգևօք ածականօք ամաչեսցէ սատանայ · քակտեսցին մեքենայքն · բարձցին որոգայթքն · պարտեսցին մարտուցեալքն · պակասեսցին զէնքն սայրասուրք · մերժեսցի մէգն · փարատեսցի խաւարն · մեկնեսցի մառախուղն · բազուկդ հովանասցի, և աջ քո կնքեսցէ · վ̅ն զի գթած ես և ողորմած · և անուն քո կոչեցեալ է 'ի վ̅ր ծառայից քոց ։ Եւ քեզ ը̅ն հօր հոգւովդ սրբով փառք և իշխանութի̅ն յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Նորին հեզոյն ասացեալ 'ի խորհուրդ ամենասբ̅ երրորդութե̅, և 'ի խորհուրդ տնօրէնութե̅ բանին ։

ԲԱՆ · ԼԴ ։

Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութե̅ շնորհի կենաց կանոնի առ համագոյ սբ̅ երրորդութե̅ն զայս վարդապետեցի զոր շաւիղ կարգիդ վերանկարէ ·

Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրպագեմք զուգափառ միութի̅ ամենասբ̅ երրորդութե̅ն ։ Ա̅ծութի̅ անձու միշտ բարի նոյնագոյ հաւասարապատիւ, անհաս իմաստից թեւոց սլացման ․ 'ի վեր քան զօրինակ և անդր քան զնմանութ՟ի ․ գերազանց գոլով սահմանի անպարագիր բացարձակութե՟ ․ յառաջ քան զհիմն յաւիտենից անտարրափակ էութե՟ց ․ ստեղծականացս կարգաց օրհնաբանութե՟ անթարգմանելեաւ ամենահարուստ մեծութե՟ յաւէտ սպասեալ ․ հաստիչ ամենակաց՝ և որ 'ի ժամանակի են կերպաւորեալք ․ ինքն պատճառ հանդերձից և յարմարապէս յօրինիչ տեսականաց և աներևութից ։ Ո՛չ անուամբ չափեալ, և ո՛չ յորջորջմամբ նշանակեալ ․ ո՛չ որակութե՟ նմանեալ, և ո՛չ քանակութե՟ կշռեցեալ ․ ո՛չ օրինակաւ ձևացեալ, և ո՛չ որպիսութե՟ ծանուցեալ ․ ո՛չ 'ի թերութե՟ տարածեալ, և ո՛չ 'ի լրմանէ ամփոփեալ ․ ո՛չ ուրեք երբեք գրաւեալ, և ո՛չ 'ի տեղւոջ վայրի երևեալ ։ Հայր գթութե՟ց ունող ամ՟ի, և ած՟ հանուրց՝ որ յերկնի և որ յերկրի ․ բաց 'ի բանէն միայնոյ՝ որով զամ՟ ինչ ունի ։ Ստեղծիչ և տուիչ շնչոց ամենից բայց 'ի հոգւոյն խոկակցէ, որով զհամայնն կազմեաց ։ Ս՝ինն յերջանկափառ համազօր ահաւորութե՟ երից անձնաւորութե՟ց, խոնարհեալ 'ի վերուստ աստուստ 'ի ստորինս · որ էրն իսկ 'ի բնէ անբաժ 'ի ներքնոցս՝ անկապուտ մնալով փառացն աթոռոյ և անկարօտ դիմացն ծնողին իւրոյ ։ Մտեալ 'ի սենեակ կուսին արդանդի պարզաբար , և ելեալ անտի յօդաւորաբար մարմին էապէս անորոշելի · անթերի մարդկութ՟ն , և անպակաս ա՟ծութ՟ն ։ Մ՟ի որդի հօրն միայնոյ , և միածին անդրանիկ ա՟ծամայր տիրածին կուսին · արարիչն յեղակինութ՟ն մարդ ելով ճշմարիտ · սկզբնածին՝ ահա ոչ զկնի եղելոց երկրաստեղծից նմանութեան , այլ նոր և չքնաղ · թագաւորաց վեհափառ՝ որ ոչ ցուցաւ 'ի դարս, և ոչ գոյացաւ 'ի ժամանակս · անդրանիկ ըստ սաղմնողին քան զա՟մ թագաւորս երկրի · անապական խառնութ՟ն կերպացեալ զմերս 'ի մարմնի ը՟օրինի հողւոյ ընդ մարմնոյ · և ոսկւոյ ընդ հրոյ , և կամ յայտնապէս իսկ ասել՝ լուսոյ ը՟ օդոյ · ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ ։ Նոյն ինքն եկեալ կամաւորութ՟ն 'ի խաչն մահու , իբր զգառն անարատ 'ի սպանդ վարեցաւ · և հանդերձեաց զօրեղ ինքնիշխանութ՟ն արարածոց իւրոց փրկութ՟ի · չարչարեալ իսկութ՟ն կենդանեօք եղաւ 'ի շիրմի անորոշելի յա՟ծութե՟ն ։ Եռօրեայ թաղմամբն 'ի դժոխս սանդարամետականացն վհատելոցն բանտարգելիցն քարոզեալ ցուցաւ նորոգումն և լոյս ։ Եւ աւարտեալ. զանօրինականացն զփրկանաւորն զանտեսութի՟, ա՟ծապէս վերակենցաղեաց • և կառավարեալ 'ի թեւս հողմոյ՝ ելեալ 'ի քրովբէս՝ ամպով անքննութե՟ ծածկեցաւ, համբարձեալ գեր 'ի վերոյ ա՟մ երկնի • նստաւ Ճոխութ՟բ յաթոռն իւրական սկզբնաժառանգ հօրն հաւասարութե՟ • յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսացաւ • անկորուստ առեցելովն և աննուաղ սեպհականօքն ։ Որով և եկեսցէ 'ի դատաստան հատուցման , քննել զծածկեալսն կշռութ՟բ չափոյ արդար իրաւանց • որում սպասեմք, և յոր աղօթեմք հաւատացեալք յա՟մի ա՟մի՛ ամենակալ տ՟րութե՟ն ն՟ր • որ արդարև մինն է միայն 'ի միայնոյն՝ 'ի միոյն փառակցու՟ի յաւիտեան երկրպագեալ ։ Բարեբանեմք միշտ և օրհնեմք ը՟ որդւոյ և հօր , և զհոգի էութե՟ նոցին՝ ամենազօր • Ճշմարիտ • կատարեալ և մը • որ յանէից գոյացոյց զբոլոր եղեալքս ա՟մ • Ինքնագործ համիշխան երկուցն կուսն ես ընդ նմին • անեղծ և անսահման թագաւորութե • որինչ պատճառն առաջին, և բանն ահաւոր նորին ինքնութե, նոյնինքն և հոգին բարձրացեալ: Բարի ինքնակալ ամենից բաշխիչ զհօրն պարգևս 'ի գովեստ անուան փառաց միածնին • որ ազդեաց յօրէնսն, շնչեաց 'ի մարգարէսն • փչմամբ ազդակցին տպաւորեցաւ յառաքելսն • կերպիւ աղաւնոյ ցուցաւ 'ի յորդանան 'ի մեծութի փառաց եկելոյն • փայլեաց 'ի գիրս աւանդականաց • արար հանճարեղս • զօրացոյց իմաստունս • լցոյց վարդապետս • օծ արքայութիս • օժանդակեաց թագաւորս • ետ վերակացուս • հրամանատրեաց փրկութիս • շնորհեաց ձիր • հանդերձաւորեաց քաւութիս, զմկրտեալս 'ի մահն քսի 'ի բնակութի իւր մաքրազարդեալ: Որ հայր և որդի, զնոյն և հոգին ներգործեաց • և ինքն է ա՟ծ խնկեալ տիրապետս ա՟մ յա՟մի : Բանզի ոչ նախաթուելովս յերրորդութեն ոք մեծ ինչ քան զմիւսն • և կամ զկնի անուանին նուաստագոյն առ նմանն • և կամ 'ի մինն ասելով խառնակութի գոլ դիմացն • և կամ յերից տրոհումն ուրոյնութի ել

կա_

կամացն ։ Քանզի անամեծար հայր ամենայնիւ, եթէ ոչ զբանն ունիցի իւրեան զօրութ՟ի ․ ո՟պ ոչ գոլով ընդ նմա հոգւոյն՝ անհագագ ո՟մն և անկենդան և առ ո՟մ՝ հրամանն նուաղեալ ։ Իսկ բանն եթէ ոչ անուամբ հօրն ծանիցի, որք ո՟մն և կամ լքեալ ․ և կ՟ք 'ի մահայ ուէ ումեմնէ ոչ էր ։ Որպէս և հոգին եթէ ոչ 'ի պատճառէն նշանակեսցի, ապաշուք ո՟մն թափառեալ իբր զշունչ ինչ անդասելի ։ Այլ եթէ ոք պատճառակին բանիւ յաւակնի կապտել զհայր 'ի յիւրմէ բանէն, որ թէ էր երբեմն յորժամ'և չէր ․ և անբանութե՟ն բամբասանօք պատուել վարկանի զվեհին մեծութ՟ի ․ և կամ ստրկութ՟ի տայէ բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգևոր ․ որով այլ ի՟մն գոյու՟ի օտար մածանել, և կամ ամբոխումն ինչ այլայլական յանարատ պատիւ միուե՟ ո՟ք էր ըորդութե՟ն ․ զայնպիսին քարամբք պարսից հաւատոյ բանից, իբր զդժնդակ դևս դիմամարտիկս գազանականս հերքել 'ի միջոյ 'ի բաց հալածեալք ․ եդեալ 'ի նզովս զսոյնս ընդ նոսին, փակեամբ ընդդէմ նիւթին զկենացն մուտեկեղեցականս գաւթի ։ Ուստի զո՟ք էր

ըորդու

բորդուին փառաւորելով՝ ի նոյն մրութեն միակցորդ հաւասարութե, զուգաձայն սրբաբանութ, հանգունատիպ հարթութե, օրհնեալ և փառաւորեալ յերկնի և յերկրի ․ ՚ի ժողովս անդրանկացն և յազգս երկրածնացս ․ բանականաց յաւիտեանս յաւիտենից, ամէն ։ Արդ զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերպաւորելոց յայսմ մատենի, ամենալուր ականջաց մեծիդ այ ընծայեցուցի ։ Ողլիմբ սպառազինեալ, և ապա մտի ՚ի հանդէսն ։ Այլ ո՛չ եթէ կարօտեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս ։ Որ մինչև ստեղծեալ էր քո զմ նախքան զլինելն երկնի, փառաբանչօքն անմահից և երկրաստեղծս բանաւորօք, դու քեզէն ՚ի քումդ լութե փառաւորեալ իսկ էիր․ այլ զի զմերժեալս զիս յարդեսցես անճառ քաղցրութի ճաշակել զքեզ բանիս հաղորդութե ։ Իսկ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ կենաց կանոնիդ ասել ադոնայի տր, և զհրամայեալ սպասուցերդ ո՛չ առնել․ որ ինձէն իսկ զիս զասկեղէն տախտակս խօսուն նուիրեալ քումդ սպասւամի, զդրեալս մատամբդ այ եղծի ․

որ և խորտակելն է իրաւացի. և ես ար լիրատեսակ մրով զերկրորդն նմանութի առեալ հայթայթեմ։ Այլ արդ՝ քանզի բազմօք պաղատեցայ դրուակօք խանդաղատականօք, որ ո՛չ է գրեալ 'ի յայս կարգ ձայնի. լո՛ւր բարեգութ ըստ նըմին բանի այնմ՝ տմի։ Եղիցի և այս աղերս բարբառոյ հայցման աղօթից յօդեալ ը̃ նոսին. թերևս 'ի մաքրոց և կամարարից այս նուէր հացի պանից բաղարջոց իւղով ղանգելոց 'ի սեղան փառացդ քոց մատիցէ։ Այլ դու բարերար և յա̃մի մարդասէր, քո̃դ մի ո̃յ միոյ. հզօր և ամենակալ. որ յաղթես գթութ̃ խնամոց քաղցրութե̃ քո. ո՛չ հասարակականաց միայն մարդկութե̃ս խմոց գոյակցաց, առ որս յաւէտ է ամբոխութի և բիւրամասնեայ հակառակութի, այլև հրեշտակացն անախտականութե̃. նա և՝ ևս ք̃ն զայս սրբանելոյն անարատութե̃, յորոց մի էր և հեղիաս. որոյ ցոյցք խըստութե̃ն 'ի քորեբ լերինն նշանակեցաւ յերիս օրինակս. 'ի շարժումն մեծ, 'ի հողմն ուժգին, 'ի հուրն կիզանողական. իսկ քոյդ հեզութի երկայնմտութե̃ 'ի հանդարտութի մեղմութե̃ օդոյն քաղցրութե̃. քանզի կամաց ողորմու‿

մուեց դու միայն ես ըստ գրեցելումն ։ Ո՛չ զի թէ և հաճոյք գտան մերասերքս անաքինութեն յեղանակեալ յայլ նմանութի վերնային, սակայն երկրածինք են և նք, ընտրեալք ՚ի մարդկանէ․ իսկ դու ո՛չ ունիս չարանալ իսկութբ բարիդ․ յամի օրհնեալդ․ ամենևին փրկութիդ․ ամիւ հանդիսադ․ համայնից յանդորրութիդ․ համօրէն ախտացելոց դեղ առողջութե․ աղբիւր ջրոյ կենդանւոյ ըստ երեմիայ ։ Դա՛րձ առ իս և ողորմեա՛ ինձ․ որ այնքան ծարաւես պապքիս անկարօտդ ած իմում փրկութե, մինչզի զուարթնոցդ երկնից անմահից օրհնաբանողաց բան իմն ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար անեղծական յարակայութբ մշտնջենաւոր պաղատանս օրհնեալդ․ քո գթութե ՚ի մերոց դիմաց կենցաղականաց վս իմ լքելոյս հաշտուե մաղթել․ ողորմեա՛ ենձի․ որ է լուսաւոր խորհուրդ յայց ելանելոյ մեծիդ յայտնութե, առ հրեշտակականն թափուր տեղի ստորանկելոց ՚ի ձեռն մարդկան․ քո կցորդութբ աւետարանեալ առակաւ այսոր օրինականս ենձի ։ Որդարև

լուար

ջու՛ար բարեգութ․ անսասցեր թագաւոր․ ունկնդրեցեր կեանք և յոյս ՚ի միտ առեր երկնաւոր․ յարգեցեր հզօր․ նկատեցեր ծածկագէտ․ տեսեր խնամակալ․ կարեկցեցեր անպատում․ խոնարհեցար միշտ բարձրեալ․ նու՛աստացար ահաւոր․ յայտնեցար անճառ․ ամփոփեցար անսահման․ բնակեցար անքննին․ մնծար ճառագայթ․ մարդացար անմարմին․ շօշափեցար անքանակ․ կերպաւորեցար անորակ․ լցեր իսկապէս զաղաչողացն զբաղձանս ։ Դու իսկ եղեր թշու՛առացելոյս ինձ ձայնի՛ւ զու՛արթնոցն բարի բարեխօս․ միջնորդ կենդանի․ պատարագ անմահ․ սպանդ անվախճան․ նու՛էր մաքրութե՛․ ողջակեզ անծախ․ բաժակ անսպառ ։ Ոհա ողորմած, մարդասէր, օրհնեալ․ միշտ կատարեսցես առ մեղուցելոյս զբարեբաստութե՛ կամաց քոց կենդանատու՛աց գովել երկայնամիտ․ և քեզ վայելէ փառք յաւիտեանս, ամէն ։

Տ͞էր Իգնատիոսի Ջուղայեցւոյ Ջաղատեանց տպագրողէ Մատենիս արարեալ յեղաշարական ոտանաւոր չափով։

Առ ձեզ գրեմ զանցից իմ ճառ,
զդիպուածս անձին իմ ը͞ս
հնար·
Թէպէտ չունիմ իմաստ և կար,
բայց զոր ինչ տ͞ր տացէ յարմար։
Բա՛յց տ͞ր յ͞ս ըզմիտս իմ փակ,
՚ի յօրինել բանըս յըստակ·
քանզի գիտեմ, թէ միտս է խակ.
մի՛ անիմաստ լինիմ կատակ։
Գըրով զառ մեօք անցըս ողջոյն,
ոչ է հընար կարգել ՚ի բուն·
այլ ասասցից քանի մի՛ տուն,
ըստ տուչութեան սրբոյ հոգւոյն։
Դարուցս աւուրց անցաւորի,
յութուտասան ը͞ս թուին փրկչի·
ձեզ պատմեցից զանցս անձին,
որ ինչ ամօքս իմ սահմանի։
Երկիր ծննդեան իմ Նոր Ջուղայ,
մօտ ՚ի սպահան պարսիցն կայ·
դանիել շօշ կոչէ զնա,
ծագաց ՚ի ծագս հռչակ նորա։

Ութի՜ քանից լըցեալ ամաց ;
չորս և ամ 'ի վերայ ած .
անդ 'ի յերկիր իմ հայրենեաց,
արժանացայ ես ս՟բ կարգաց :
Երկրէս երթեալ իմ ծնընդեան ,
տարաշխարհիկ 'ի Հնդկաստան .
ամս կացի ութուտասան ,
կըրեալ աղէտըս զանազան :
Ըստ յաջողման տ՟ն կամաց ,
դարձայ բարեօք առ 'ի Հնդկաց ,
չոգայ 'ի պա̊տրա տես սիրելեաց ,
մինչ ժամանակ վերայ հասից :
Նախանձէի 'ի տե̊ս հայրենեաց ,
բայց լուր լուայ անդ գուժկանաց .
թէ քակեալ էր աշխարհն հիմանց ,
եղեալ բնակ յուշկապարկաց :
Ժամ առի , 'ի միտս եկի ,
'ի ս՟բ սաղիմ քաղաք ելի .
ուր գերեզմանն է ցանկալի ,
կենարարին իմոյ փրկչի :
Զս՟բ տեղեաց լեալ տարածնաց ,
չոգայ 'ի քաղաքըն քաղդէաց .
անտի դիմեալ 'ի տուն մարաց ,
բազում չարիս կըրեալ գայլոց :
Լուեալ բազմաց՝ փափաքէի ,
երթալ յաթոռ ս՟բ գրիգորի .
մեծաց հայոց լուսաւորչի ,

դաշնաւորի ընդ սեղբեարի։
Խորհրդայոյզ յայս լինելով,
'ի ժամանակս աւուրց յոլով.
զօգուտ հոգւոյս իմ՝ խորհելով,
'ի բատամնյոլ եկի փութով։
Ծանեայ թէ կայր անտանօր լաստ,
պատրաստական 'ի յառագաստ.
ընդ ծով անցի ընդ ալէսաստ,
զո՟ն օգնութ՟ն առեալ նաւաստ։
Կամաւ եկի 'ի լիվօռնայ,
լինել հնազանդ գահին հռոմայ.
ուղիղ պահել զհաւատս անահ,
հաստատուն կալ յայն մինչ 'ի մահ.
Հասի 'ի հռոմ խնդութ՟բ լի,
'ի յայն քաղաք զարմանալի.
'ի վկայարան ս՟բ պետրոսի,
և գործակցի իւր պօղոսի։
Ձրի շնորհէ պարգև կենաց,
հայրըն ներող հասարակաց.
սրբազան պապըն պետ հովուա՛ց,
և խնամատար ոչխարակաց։
Ղ ամբար լուսոյ անշիջական,
ս՟բ հայրապետըն հրաշական.
քահանայապետ անափոխան,
և թագակալ հռոմէական։
Ճշմարտապէս գթով հայրական,
հանուրց հնարի հոգւոց դարման.

և յորս 'ի նա են ապաստան,
գիրկս արկանէ գորովական։
Մեղաւորիս յոյժ գթացաւ,
ս՟բ բերանովն յիս խօսեցաւ.
զաղէտ սրտի իմոյ ծանեաւ,
ներողութ՟բ եբարձ զիմ ցաւ։
Յաւարտ զփափաքս իմ հաստուցեալ,
ընդ հոյակապ շէնս շրջեալ.
զպետրոսի զտաճար տեսեալ,
զտարսանացւոյն և սքանչացեալ։
Նոյն և զտաճար Ճո՛ւան լատրան,
զմարիամ՝ մաճօրըն հրաշական.
զանթ իգնատի հանգստարան,
և զկարթուզեանցն գեր քան զայն։
Նորհազարդեալ ելի հռոմայ,
հասի 'ի քաղաքըն լորետոյ.
ուր տիրամօր ս՟բ տունըն կայ,
լեզու չկարէ պատմել զնա։
Ուրախութ՟բ յուղի անկեալ,
բազում տեղիս պատարագեալ.
յիս բարիոք մարդասիրեալ,
իտալացւոց ազգըն օրհնեալ։
Չոգայ ապա 'ի վենետիկ.
մընալ աւուրըս սակաւիկ.
ետու տըպել զգիրըս փոքրիկ,
'ի ս՟բ ղազար վանըս յայնմիկ։
Պատուոյ կայ մօտ քաղաք զգօն,

ուր երանելին հանգչի անտօն։
այն որ յաշխարհս է մեծանուն,
սքանչելարար տաճար հոգւոյն։
Ճանապարուք եղբարք սիրով,
գալ ՚ի հռոմ տեսանելով․
՚ի վէնէտիկ տես կայ յոլով,
ս՟բն մարկոս չպատմի գրով։
Ռախճան հոգւոյ կան ցանկալի,
եկեղեցիք յոյժ գովելի․
բազում մասունք ս՟բց յայտնի,
այլ և արիւն իմոյ փրկչի։
Ս՟բ արիւն տ՟ն անդ հրաշալի,
եկեալ տեսէք դուք հաւատի․
մի՛ երկմտիք յերկբայս սրտի,
լոյս տուք մտացլոդ խաւարի։
Վայելուչ վանք կայ աբբայեան,
չորք անկիւնի և պատուական․
եղբարք ամէն ՚ի սէր միաբան,
առաջնորդին հրպատակ կան․
Տ՟ր ստեփանէ հայր հոգւոր,
նոյնոյ վանիցն մեծաւոր ,
հէքոյս պատիւ եցոյց յոլով,
զխնդիր սրտիս կատարելով։
Րաբուն պայծառ և ցանկալի,
տ՟ր ս՟բ գրիգոր նարեկացի․
միշտ առ ա՟ծ հոգւով խօսի,
բանք իւր ընտիր՝ հանուրց յայտնի։

Ցանկացայ ես կաթոգնելով,
զիւր ս̄բ աղօթս տըպագրելով·
քանզի կայի յայն կարօտով,
բազմաց 'ի նոյն փափաքելով։
Խիւծեալ եմ ես մեղօք նուաստ·
թերևս լիցի հոգւոյս նպաստ·
զթմրեալ հոգիս առնէ զգաստ,
որք մտանենն 'ի յայս դաւաստ։
Փտեալս մեղօք անկեալ անոյժ,
ինձ վայելէ աւաղ և գոյժ·
զի վատասիրտ եմ, չունիմ ժոյժ·
վ̄ն այն յաւէտ յաճախէ տոյժ։
Բանքարաթագոյցս անահ ծառայ,
իգնատիոս տրուպ քահանայ·
մարդասէր տ̄ր ինձ ողորմեա՛,
աղաչանօք ս̄բ Նարեկայ։

Իգնատիոս չարութ̄ե լի,
զերթ անասուն յախտս մըլի։
Գընացքըս թիւր և անյառաջ,
միտըս յաշխարհ· ձեռնըս 'ի մաճ։
Նուաստ ոգի ես անզգօն,
ամբարհաւաճ և բարձրայօն։
Անհաստ աչք մշտափըփուր,
կամաւ գանձեմ անձին իմ հուր։
Տգեղ տեսլեամբ անձամբ յուլի,
յիմարական և անձոռնի։

'Ի

'Ի քրայս հալիմ, այլ դեռ ժանգոտ,
  բարեաց հեռի՝ առ չարըն մօտ ։
Որ վատթարեալ դնիմ՝ տապաստ,
  ես անարի և անզգաստ ։
Սիրտըս մթին միտքըս խաւար,
  անկեալ 'ի սուգ անմխիթար ։
Ինձ սփոփիչ և բարեխօս,
  զ̃բ հայրդ ունիմ զա̃ծախօս,
  զքո մաղթանս ընթերցողաց,
  լեր օգնական, և արա այց ։



Գէրքը ենթարկված է ախտահանման
-28 VII- 1942 թ.